

Ղազարոս Աղայան
(պատմական-գրական
ուսումնասիրություն)

Լեռ

Բովանդակությունը

Ներածություն

Գլուխ առաջին

Հայրենիքը

Պապը

Հայրը

Գլուխ երկրորդ

Գյուղի մոնթը

Դեպի քաղաք

Թափառումներ

Գլուխ երրորդ

Տպարանական բանվոր

Հյուսիսում

Նոր աշխարհ

Գլուխ չորրորդ

Վիպագրողը

Մանկավարժը

Մանկական գրողը

Բանաստեղծը

Բանաստեղծը

Հյունը



1902 թվականին Ղազարոս Աղայանը տոնում էր իր գրական գործունեության քառասնամյակը: Ես «Մշակի» մեջ մի ընդարձակ հոդված նվիրեցի նրան և գրում էի այդ հոդվածի մեջ. «Ամեն անգամ, հանդիպելով Աղայանին, ես կարծում եմ, թե մեր ծաղկավետ հանդերից է գալիս, միշտ ձեռքում ունի մի նոր փունջ»:

Այնուհետև ես շատ մոտեցա Աղայանին, վայելեցի նրա սքանչելի սերը, նրա հայրական գուրգուրանքները: Եվ այդքան մոտիկ տարածության վրա էլ, մտերմական անձուկ, ընտանի շրջանի մեջ էլ, այդ պարթևակազմ, վայելչահասակ ծերունին, որ իր ամբողջ էության մեջ կրում էր մի ինչ-որ բիրյիական վեհ ու նվիրական տեսիլ, շարունակում էր մնալ ինձ համար մինևսյնը փնջաբեր մեր հայրենի ծաղկավետ հանդերից:

Ամենից առաջ Աղայանի մեջ դյուրում էր մարդը, հոգեկան ձուլվածքը, որ հազվագյուտ ներդաշնակություն էր կազմում նրա արտաքինի հետ: Ժողովուրդը, այն էլ գյուղական ժողովուրդը - ահա ինչ մեծ գաղափար էր կրում Աղայանը իր հսկայական ուսերի վրա:

Հայ գյուղը իր ծոցի մեջ տաշել, հղկել էր մի գրանիտյա կոթող: Իր արատներից նա ոչինչ չէր տվել այդ կոթողին: Դրել էր նրա մեջ իր սիրտը, իր զգացմունքը, իր վիշտն ու կարիքը և ուղարկել էր նրան քաղաք:

Հիսուն տարի նա ապրեց քաղաքում: Բայց նրան ծոել չկարողացավ քաղաքը: Նրա կեցվածքը մնաց անաղարտ, նրա գծերը չավեպեցին, թեև քաղաքային կյանքի ամենակուլ ծովը շարունակ հարվածում էր նրան իր ալիքներով, թեև ամեն ինչ կար, ար այդ մարդն էլ իր նման հարյուրների ճանապարհով գնա, այսինքն քաղքենանա, կորցնի իր ինքնատիպ դեմքը, լուծվի և ձուլվի:

Նա միայն էր այդ դիրքում, անմաստչելի՝ կլանող, ջնջող ազդեցություններին: Եվ անհողողող, չկքված, չռացած՝ միշտ գլուխը բարձր ու կուրծքը ուղիղ: Քայլը անշեղ, հաստատուն, գնաց նա մինչև այն կետը, ուր մահը կայծակի մի հարվածով տապալեց նրանքաղաքի փողոցում, մայթի վրա: Իբրև անեղծ կոթող էլ նա ձեռքերի վրա տարվեց իր տունը, և այժմ էլ իբրև ժողովրդական գրանիտյա ձուլվածք պառկած է դագաղում:

Ամենից առաջ Աղայանը մեր կուլտուրական կյանքի մեջ խոշոր դեմք է հենց իբրև այսպիսի մի եզակի երևույթ, գյուղի ստեղծագործություն մինչև վերջին շունչը...

Հզոր և մեծախորհուրդ է հայրենի հանդերի, ժողովրդի ստեղծագործական կարողությունը: Այդ վիթխարի գործոնը պարզ տեսնելու և շոշափելու համար մենք ունենք մի սքանչելի վավերագիր՝ Աղայանի կյանքը:

Մեր խոշոր, երախտավոր գործիչներից շատերը չեն, որ ունեն վերին աստիճանի ուսանելի կենսագրություն: Աղայանի կյանքը երջանիկ բացառություններից մեկն է: Եթե սերունդները

կարոտ են իրանց նախորդների մեծագործությունները տեսնելու, նրանցից խրատ քաղելու, նրանցով ներշնչվելու և հրահանգվելու համար, մենք պարծանքով կարող ենք ասել, որ մեր նոր աճող սերունդներին տալիք մի սքանչելի օրինակ ունենք տալու այսուհետև՝ Աղայանի կյանքը:

Այդ կյանքը կբացատրե մեզ, թե ինչպես է ժողովուրդը մտցնում իր հզոր ստեղծագործությունը ազգի պատմության մեջ, ինչ ճանապարհով է նա ազդում և ինչպես է նա կուլտուրական շարժիչ հանդիսանում:

Մտերիմ բարեկամի, սիրված ընկերի զգացմունքը չէ ինձ թելադրում այս տողերը: Որքան և մեծ լինի վիշտը, որքան և դառն լինի կորուստը այդ բարեկամի, ընկերի համար, բայց այս տխուր ժամերին էլ, երբ ինձ է վիճակվում դնել մեր մեծ կորստի պատկերը հասարակության առջև, ես պիտի խոսեմ դոկումենտների լեզվով, փաստերի վերլուծումով, պիտի նկարեմ մեր հայրենի հանդերի փնջաբերին:

Առատ փաստեր, հարուստ նյութեր է տվել ինքը Աղայանը: Մեր գործիչներից որ ոք չէ թողել այնքան ինքնակենսագրական թանկագին նյութեր, ինչպես Աղայանը: 1904 թվին նա հրապարակեց «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» ու այդտեղից իմացանք, որ նրա առաջին վեպն էլ՝ «Արություն և Մանվել», նույնպես ինքնակենսագրական է, որ Արությունը ինքը Աղայանն է: Այնուհետև մանավանդ այդ գրվածքները պիտի շառայեն իբրև թանկագին նյութեր մեր նոր ժամանակների պատմության համար:

Նրանք Աղայանի ամբողջ կյանքը չեն ամփոփում իրանց մեջ: Եվ հարկավոր էլ չէ, որ նրանք այդ լինեն: Ամենգլխավորը կա նրանց մեջ, լիուլի մանրամասնություններով պատկերացած: Դա այն է, թե ինչպես կազմակերպվեց և ամրապնդվեց ձուլվածքը, ինչպես տաշվեց ու հղկվեց գրանիտյա կոթողը:

Ամենից առաջ ես այդ մեծ պրոցեսը կներկայացնեմ՝ հիմնվելով հավերժացածի թողած վավերաթղթերի վրա, ապա կանցնեմ նրա գործին:

Գլուխ առաջին

I

Հայրենիքը

Շուշուց խճուղու առաջին փոստային իջևանը Խոջալուն է, Կառկառ գետի հովտում, Ասկարան պատմական բերդի մոտ:

Խճուղին պատռում անցնում է այդ փոքրիկ բերդը, որ շինված է Խաչենի լեռների մի ճյուղավորության ստորոտում, այնտեղ, ուր կազմվում է մի փոքրիկ կիրճ, որի միջով գետը Ղարաբաղի լեռնաշխարհից դուրս է գալիս Ադդամի ընդարձակ դաշտը (հին Գարգարացվոց դաշտը):

Մինչև բերդին հասնելը, խճուղուց բաժանվող մի ճանապարհ տանում է դեպի արևմուտք, միշտ սարն ի վեր: Դա լեռնային Խաչենի ճանապարհն է:

Առաջին գյուղը, որ հանդիպում է ուղիղ այդ ճանապարհին, Սեյդի-շենն է: Մի փոքրիկ գյուղ, ինչպես առհասարակ փոքրիկ են լեռնաշխարհի գյուղերը, 30-25 տուն. նա գրավում է բարձր դիրք և շատ գեղեցիկ մի անկյուն բնության ծոցում: Լեռնաստանը իսկապես այստեղից է սկսվում: Թանձրախիտ անտառներով ծածկված մի լեռնաստան է Խաչենը, որ նշանավոր դեր ունի կատարած պատմության մեջ: Լեռների գծագրությունները թեև դեռ մեղմ են, բայց դեպի արևմուտք գնացողը շուտ է մտնում այն խոժոռ և ահավոր տեսարանների մեջ, որոնք հատուկ են Ղարաբաղի բնությանը:

Աղայանը այցելել է Սեյդի-շեն գյուղը և տեսել, որ ժողովրդի մեջ դեռ ապրում են իրանց տոհմի հին-հին հիշատակները: Տեսել է «Աղանց աղբյուրը, Աղանց ձորն ու բակը և Աղանց ճղաբլուզ (ընկուզենին)՝ արդեն չորացած մի ծառ»¹:

Դա է հայրենիքը, թեև Աղայանը այնտեղ չի ծնվել:

Կարևոր եմ համարում, որ իմ ընթերցողը փոքր-ինչ մոտիկից ծանոթանա այդ հայրենիքին, քանի որ դա այն միջավայրը, որ բնավորություններ է մշակում:

Ընդհանրապես շատ աղքատ է լեռնային Խաչենի ժողովուրդը: Եվ չէ կարող աղքատ չլինել: Այդպես է կարգադրել նրա բնությունը:

Դա երկրագործության աշխարհ չէ: Անտառը, վայրենի, թանձրախիտ անտառն է բռնացած ամեն տեղ՝ մի ծայրից մինչև մյուս ծայրը: Նա ծածկում է ամեն ինչ՝ և՛ սար, և՛ ձոր, և՛ դաշտ: Բաց տարածություններ թողնել իր թագավորության մեջ նա չէ սիրում:

Կարող եք այդ երկրում ճանապարհ կտրել ամբողջ օրերով, և միշտ ծառերի տակ, միշտ մի նեղ շրջանակով պատված: Շատ, շատ՝ մի որևէ տեղ, դիքի շնորհիվ, անտառների թագավորությունը մի փոքրիկ հորիզոն բաց կանե ձեր առջև, ցույց կտա մի կտոր շրջապատող ահեղատեսիլ և գեղեցիկ բնությունից, մի կտոր երկինք, արևի մի շերտ, եթե երկինքը, հակառակ սովորականի, մթազնաձու ամպամած չէ, եթե նա այդ օրը, այդ ժամին զիջել է պարզ ու ժպտուն երես շնորհել լեռնաստանին:

Մարդը պետք է մաքառե, մշտապես մաքառե ծառերի թագավորության հետ՝ իրան հարկավոր մի ափ վարելահողը, իր բնակության տեղը նրանից խլելու համար: Անտիրական տարածությունը նորից շտապում է իր հրամանի տակ առնել անտառը: Նրա անլույս ու անարև խորքերում շրջողը հաճախ կանգ է առնում տեսնելու համար հանկարծակի իր առջև բացված մի հին աշխարհ՝ գյուղի, ավանի տեղեր, եկեղեցիներ, վանքեր, ոմանք կանգուն, ոմանք փլված, գերեզմանատներ: Եվ այս բոլորը ծառերի տակ, մամուռով ծածկված: Հազվադեպ չէ տեսնել մի հին եկեղեցու դարերի վրա գոյացած մի ամբողջ անտառ:

Եվ երևակայեցեք գոյության կռիվը այսպիսի պայմանների մեջ: Նա հսկայական է, բայց առանց մեծ արդյունքների: Նա ամփոփում է իր մեջ մի դրություն

¹ «Իմ կյանքի գլխավոր դեպքերը», էր. 4 (ծանոթ. հեղ.):

միայն՝ գլուխ պահել, այսինքն անել այնքան, որ ապրես:

Եվ դրա համար որքա՛ն ուժ, որքա՛ն պողպատ պետք է ամբարե իր մեջ ամեն մի կազմվածք, որ չէ ուզում ոչնչանալ անհյուրասեր, բայց վիթխարի, արհավիրքներով գեղեցիկ բնության ձեռքին:

Պետք է տեսնել լեռնցու փոքրիկ արտը անտառների միապաղաղ տարածության մեջ, պետք է տեսնել, թե ինչ տեսակ ճանապարհներով է նա հաղորդակցություն կատարում լույսին ու մութին, դաժան ձմռան և կարճատև ամռան, արև և բուք օրերը, ցեխի ու չորության ժամանակ, պետք է տեսնել հետո նրա խրճիթը, նրա ընտանիքը, նրա ամբողջ տկլորությունը, և այնուհետև միայն կարող եք հասկանալ, թե ինչքան շատ է վատնում մարդը իր կազմվածքի մեջ դարերի ընթացքում կուտակված պաղպատից և ինչքան քիչ է վարձատրվում:

Սակավապետ, երբեք չհուսահատվող, խոժոռ ու կոպիտ, ամբողջովին մրցության երկաթե անհրաժեշտությամբ տարված - այսպես կարող է լինել լեռնային անտառների մռայլ թագավորության մեջ:
Եվ այսպես է խաչենցին:

Բայց խաչենցին միայն այդքանը չէ. Խաչենը պատմական հարուստ կյանք էլ է ունեցել: Այդ լեռներում, այդ անտառներում ապրում են ավանդություններ: Այդ երկրում, Մելդի-շենից քիչ հեռու է հոչակավոր Ցեխ-ձորը, ավազակների, հերոսների գործերով հոչակված ձորը, ահագին անտառով ծածկված, ահավոր իր հոչակով, ահավոր իր լռին մթությամբ: Դուրս եկեք այդ ձորից, գնացեք Խաչենագետի երկարությամբ միշտ դեպի արևմուտք: Ձեր ձախ կողմին, լեռան ստորոտին, մինչև երկինք բարձրացել է մի կյոռ, աշտարակաձև վիթխարի ժայռ. նրա գլխին բերդ կա, որ կոչվում է Կաչակաբերդ (Սաշնաղան-Ղալասի): Ահա Գանձասարի բարձրությունների կողքին, Խաչենագետի անտառապատ ձորերի վրա, բարձր և բարձր գնում է մի կապույտ, մեծ սար: Խոխանաբերդն է: Ահա Հավապսակը, ահա Դորպաները, Կեչանը, Արջաձորը: Եվ այսպես՝ անթիվ ու անհամար բերդեր ու ամրություններ, ավերակներ մինչև Վերին Խաչենի հին սահմանները, այսինքն մինչև Սևանի լիճը ...

Գիր ու պատմություն չունին այդ պատմական վայրերը: Ժողովուրդն է պատմում, թե որտեղ ինչ բան է կատարվել, նա գիտե, թե Ցեխ-ձորի որ կողմում էր, որ մելիքական շրջանի հոչակավոր հերոս Թյուլի Արզումանը շրջապատեց Իբրահիմ խանի մարդկանց: Նա ցույց կտա ձեզ և ուրիշ շատ քաջությունների տեղեր: Նա կառաջնորդե ձեզ դեպի ամեն մի խաչքար, դեպի ամեն մի հուշարձան, որ գիր ունի իր վրա: Իսկ այդպիսի հին-հին բաներով լիքն են Խաչենի սարերը:

Այո՛, անթիվ են հին, անբարբառ վկաները, որոնք, այսուամենայնիվ, պատմում են ձեզ, թե մի ժամանակ այս չարքաշ ժողովուրդը եղել է կռվող, ինքն իրան պաշտպանող: Մի ժամանակ այս ժողովրդի վրա միայն բնությունը բռնացած չի եղել՝ անդուլ և անխնա մրցումի իր պահանջով, այլև քաղաքական կացությունը: Հացը կորզել բնության կրծքից բավական չէ եղել, այդ հացը պաշտպանել էլ էր հարկավոր:

Ղազարոս Աղայանը այս մշտնջենական մրցությունների աշխարհում չէ ծնվել: Բայց այստեղ ծնվել են նրա նախահայրերը: Սեյդի-շենի ծնունդ էր նրա պապը, Աղանց Վերդին²:

II Պապը

Աղանց Վերդին Ղազարոս Աղայանի ինքնակենսագրական նյութերի մեջ բավական պայծառ գույներով պատկերված մի դեմք է, ավելի ճիշտ մի ամբողջ տիպ, որի մեջ մարմնացած է նրա տոհմի բարոյական-հոգեբանական ձուլվածքը:

Այդ նախատիպը ճանաչելու համար մենք պիտի տեղափոխվենք Ղարաբաղ՝ այս երկրի այն միջոցին, երբ կատարվում էր մի վերին աստիճանի սուր, վճռական ճգնաժամ:

Տասնյոթերորդ դարի վերջում Իսրայել Օրին սկիզբ էր դրել Ղարաբաղում ազատագրական շարժման: Իսկ տասնութերորդի վերջում և տասնիններորդի սկզբում այն մեծ շարժման վերջին գործողություններն էին կատարվում:

Շարժումը երկարատև էր: Նա նոր-նոր երևույթներ առաջացրեց հայկական կյանքի մեջ և այդ երևույթներից գլխավորն էր՝ կռիվ ազատության համար: Լեռնային կռիվ, որ սկզբում կենտրոնացրեց իր շուրջը ամբողջ Ղարաբաղի ռազմական կարողությունը, բայց զրկված լինելով կանոնավոր և ուժեղ կազմակերպությունից, գնալով մանրացավ, ընդունեց նեղ տեղային բնավորություն:

Մանրամասնությունները թողնենք: Ասենք այսքանը միայն, որ Օրիի ծրագրածը պատերազմ էր Պարսկաստանի դեմ, իսկ տասնութերորդ դարի իրականությունը բերեց դարձրեց այդ շարժումը՝ կռիվ Շուշու խանի դեմ: Ժողովրդական կռիվ, բայց ո՛չ ժողովրդի համակենտրոնացած ուժերով: Առանձին-առանձին փորձեր էին դրանք, լեռնցի մարտնչողների քաջագործություններով, հերոսական դիմադրություններով և հարձակումներով զարդարված: Բայց այդ անջատ գործողությունները անկարող եղան ընդհանուր նպատակը իրագործել: Շուշու խանը ճարակությամբ անջատում էր իր հակառակորդների ուժերը, ջարդում էր նրանց առանձին-առանձին: Վերջիվերջո նրա դեմ կանգնած մնացին հինգ մելիքներից երկուսը միայն՝ Զրաբերդ և Գյուլխատան: Խաչենը, որպես Զրաբերդի սահմանակից, մտնում էր պատերազմական գործողությունների շրջանի մեջ:

Տասնյակ տարիներով տևող կռիվը վերջանում էր հայության պարտությամբ: Նա ավերեց երկիրը, նա պատճառ դարձավ, որ ժողովուրդը ահագին խմբերով դուրս գաղթի: Ռուսների խոստացած օգնությունը երբեք չիրականացավ: Իսկ մելիքները քաղաքականապես այնքան տհաս էին, որ կարծում էին, թե իրանց կաջողվի սեփական երկրից դուրս էլ պահպանել իրանց իշխանությունը իրանց ժողովրդի վրա: Այդ պատճառով նրանք էին առաջնորդում իրանց ժողովուրդը դեպի օտար երկրներ:

Անաջող կռիվներին միացան բնության ահավիրքները՝ սով և ժանտախտ: Երկիրը սկսեց

² Վերդի Ղարաբաղի բարբառում Ալլահվերդի անվան կրճատումն է (ծանոթ. հեղ.):

արագ դատարկվել: Տասնութերորդ դարի վերջերում մելիքներից երկուսը՝ Մելիք Աբով և Մելիք Ջումշուդ, ստացան երկու երկիր Վրաստանի սահմանագծի վրա՝ առաջինը՝ Բոլնիսը, Թիֆլիսից ոչ հեռու, երկրորդը՝ Լոռին: Երկու տեղերում էլ հաստատվեցին Ղարաբաղից գաղթած հայերը:

Գաղթականները խեղճ ու դժբախտ ձրիակերներ չէին իրանց նոր հայրենիքի համար: Նրանք ամենից առաջ ռազմիկ տարր էին և պիտի պաշտպանեին Վրաստանի սահմանագլուխը:

Այս բանի մեջ մեծ անուն հանեց մանավանդ Մելիք Աբովը: Բոլնիսի գաղթականությունը տալիս էր նրան բավականաչափ մարդիկ, որպեսզի այդ հռչակված հերոսը կարողանար դառնալ իրական մի ուժ շրջակա թուրք ազգաբնակչության աչքում: Այդ ուժը գնահատում էր Գեորգի թագավորը, որի արքունիքում հայ մելիքը մեծ նշանակություն ուներ: Այդ ուժը գնահատեցին և ռուսները, երբ վերացնում էին վրաց թագավորությունը: Մելիք Աբովի բոլնիսցիները Թիֆլիսից տրված հրամաններով արշավանքների էին գնում, և Մելիք Աբովի անունը երկուդ էր ազդում նույնիսկ Ախալցխայի թուրք փաշային: Նույն բոլնիսցիներն էին, որ 1806 թվի պարսկական պատերազմի ժամանակ Փամբակի ձորում ընդհարվեցին պարսիկների հետ: Այդ ընդհարման մեջ էր, որ Մելիք Աբովի որդի Ռոստոմ բեկը ընկավ պարսիկների ձեռքը և մահվան դատապարտվեց Թավրիզում:

Ահա ինչպիսի միջավայր էր Բոլնիսը հայ գաղթականության համար:

Գաղթականները, ինչպես երևում է, Ղարաբաղի գանազան կողմերից էին եկել, բայց, գլխավորապես, իհարկե, Մելիք Աբովի հպատակներից էին, այսինքն Գյուլիստանից: Կային և սակավաթիվ խաչենցի գաղթականներ, որոնք հավաքվեցին մի տեղ, մի փոքրիկ գյուղ հիմնեցին և անունը, ի հիշատակ իրանց թողած բուն հայրենիքի, դրին Խաչեն: Չմոռացվեց և տեղի անունը՝ Դաղեթ: Այնպես, որ նոր Խաչենը անվանվում է և Դաղեթ-Խաչեն:

Այդտեղ, այդ գյուղում է և Աղանց Վերդին: Թե երբ է նա գաղթել և ում հետ՝ հայտնի չէ: Գիտենք միայն, որ նա սկզբում բնակություն հաստատեց Գորի քաղաքում, բայց շուտով տեղափոխվեց Բոլնիս:

Որոշ և մանրամասն տեղեկություններ չունինք և նրա կյանքի մասին: Ղազարոս Աղայանը նկարագրել է նրա ծերությունը միայն, երբ նա խաղաղ գյուղացի էր:

Բայց այս ծերությունն էլ ցույց է տալիս, որ Վերդին լինելով փոթորկալից ժամանակների մի լեռնցի, միևնույն ժամանակ, աչքի ընկնող մի երևույթ էր նույնիսկ պատերազմիկ, արկածալից միջավայրում:

Որ նա քաջ էր, լեռան կոած ու եփած մի արի ու անվախ մարդ՝ այս հասկանալի է, եթե աչքի առաջ բերենք նրա երկու հայրենիքն էլ՝ Ղարաբաղի Խաչենը և Բոլնիսը: Երկուսն էլ լեռնային պատերազմների թատերաբեմ, ուր հարձակումները, պաշտպանությունը մշտական երևույթներ են, ուր անձնական ուժը, քաջությունը բախտ որոշող, կյանք պաշտպանող անհրաժեշտություններ են:

Բայց Վերդին միայն սովորական քաջ սարեցի չէ:

Նա կարդացած մարդ էր: Եվ նրա ուսմունքը սովորականից չէր, այդ պատճառով էլ նա մի գլխով բարձր էր ոչ միայն իր շրջապատից, այլ, կարելի է ասել, մինչև իսկ իր ամբողջ ժամանակից:

Ղարաբաղի ազատագրական շարժումների մեջ մենք չենք նկատում ուժեղ գրական դաստիարակություն: Հայտնի է, որ յուրաքանչյուր հեղափոխություն ունենում է իր գաղափարական հիմնավորումը մտավոր-գրական շարժման մեջ: Ղարաբաղը երբեք չի փայլել իր գրական նշանակությամբ, և նրա ազատագրական շարժումների մեջ էլ մեծ մաս չունեն գրական-գաղափարական դաստիարակությունը: Խոսում էր ավելի ավանդությունը, բնագործը: Խոսում էր նեղլիկ տեղայնությունը, որ շատ հեռուն չէր գնում և գնալ չէր էլ կարող, քանի որ չկար երկրի իսկական շահերի վրա հիմնված ծրագիր, գործողության եղանակ: Այդպիսի մրրկալից ժամանակներում սովորաբար ազգի անցյալն է գալիս ոչ միայն խրախուսելու, ոգևորելու, այլև չափավորելու շարժումները՝ որոշ կարգի հպատակեցնելու համար, շահավետությունն ու անշահավետությունը կշռելու համար:

Բայց ազգային պատմությունը այդ ժամանակ չգիտեին Հայաստանի և ոչ մի կողմում: Միայն անգլիական ազդեցության տակ փոքր-ինչ գիր ու դպրություն սովորած մի հնդկահայ ակնավաճառ՝ Շահամիրյանը, հասկացավ, թե ինչ ահագին նշանակություն ունի պատմությունը մի ժողովրդի համար, որ աշխատում է իր համար նոր ճակատագիր ստեղծել: Նա հրատարակեց առաջին հայոց ամբողջական պատմությունը³, և դա, չնայած իր պակասություններին ու խեղճության, մի չտեսնված, անօրինակ երևույթ էր ամբողջ հայության մեջ:

Շահամիրյանը բացատրում էր և այդ պատմության փիլիսոփայությունը, թե ինչ էր նա ուսուցանում, ինչ էր հրահանգում: Ղարաբաղի շարժումները նրան շատ ոգևորում էին, բայց և ցույց էին տալիս իրանց անկարողությունը: Հախուռն, անգլիտակից և անծրագիր, ներքին երկպառակություններ, հոգևորականության դավաճանությունները փառքի և իշխանության համար: Նա նամակ գրեց Ղարաբաղի մելիքներին, հասկացնում էր, որ այդպիսի գործողություններով բան չի դառնա, որ պետք է կանոնավոր դաստիարակություն տարածել ժողովրդի մեջ, գիտակցություն ստեղծել:

Բայց այդ խրատները ուշ էին գալիս, այն ժամանակ, երբ Ղարաբաղը անհուսալի ճգնաժամի մեջ էր:

Շահամիրյանի ազգային պատմության հետևեց Չամչյանի ընդարձակ պատմությունը: Բայց նա էլ անկարող եղավ իսկույննեթ, միանգամից փոխել դպրոցական դաստիարակությունը, որ ամբողջապես շախաղված էր միջնադարյան սքոլաստիկայից: Անհատներն էին միայն, որոնք արժանանում էին այդ ընդհանուր սքոլաստիկ դաստիարակությունից դուրս ձեռք բերել և տեղեկություններ իրանց ազգի և հայրենիքի անցյալի մասին:

³ Նկատի ունի «Նոր տետրակ, որ կոչվի յորդորակ» գիրքը (Մադրաս, 1773), որի ընդարձակ գլուխներից մեկը նվիրված է հայոց պատմության իրադարձություններին՝ ջրհեղեղից մինչև 18-րդ դարի վերջերը: Գրքի հեղինակը Մովսես Բաղրամյանն է:

Այդպիսիներին մեկն էր և Աղանց Վերդին:

«Հայոց պատմության տեղյակ մարդ էր,- ասում է Ղազարոս Աղայանը իր պապի մասին,- նիշդեռ նրա ժամանակի հոգևորականները պատմությունից ոչ մի տեղեկություն չունեին»⁴: Որտեղ կամ ինչպես էր նա ձեռք բերել այդ ուսմունքը, արդյոք աշակերտելով մի որևէ անհայտ, բացառություն կազմող վարդապետի՝ Գանձասարի կամ ս. Հակոբի վանքերում, թե՞ մի այլ տեղ, կամ ինքնակրթությամբ, ոչինչ հայտնի չէ: Բայց որ այդ դաստիարակությունը նրա մեջ դրել է մարտնչողի գաղափարական գիտակցությունը, այդ մենք պարզ տեսնում ենք նրա ծերության օրերում:

«Նա մեր վարդապետներին,- շարունակում է նրա թոռը,- աչքով աչք չունեի տեսնելու: Ասում էր՝ «մեր ազգի տունը սրանց ձեռքին է, բայց չեն շինում, քանդում են»:

Լռություն էր սիրում ծերունի Վերդին: Տարին մի անգամ էր եկեղեցի գնում, որ հաղորդվի: Մնացած ժամանակը եկեղեցու դրսումն էր կանգնում մի փոշնի ծառի տակ: Մեռնելիս կտակ արավ, որ այդ ծառի տակ էլ թաղեն իրան: Եվ կտակը կատարվեց:

Իր մասին նա խոսել չէր սիրում: Բայց նրա հասակակիցները բազմաթիվ պատմություններ գիտեին նրա կյանքից: Եվ բոլոր պատմությունները միննույն բանն էին վկայում- Վերդիի, այդ անանուն և անխոս հերոսի, «իգիթությունները»: Դրանք ժամանակի, հանգամանքների պահանջներն էին: Մի ժամանակի, «երբ մարդու գլուխն ու սոխի գլուխը մի գին է ունեցել: Սով, սրածություն, արհավիրք, մահ տարածամ, փախուստ, գաղթականություն և այդ էլ շարունակ, մեկը պակասում է մեկելն է գալիս, մեկելն անցնում է մյուսն է վրա հասնում»:

Վերջին այդ ահավոր տակնուվրայությունների մեջ կորչողներից չէր: Լեռնցին և՛ զարմանալի դիմացկուն էր, և՛ գիտեր անհրաժեշտության պարտքը վճարել: Ասում էին, որ նա իր կյանքում հարյուր մարդից ավելի է սպանել: Լեռնցի ասպետը չէր ժխտում, բայց կովի մեջ, ճակատ առ ճակատ ընդհարվելիս, մարդը սպանություն չի գործում, այլ անհրաժեշտ օրենք է կատարում:

Սպանությունը այն է, երբ մարդ իր հակառակորդի վրա հարձակվում է գաղտագողի, այն ժամանակ, երբ սա կարողություն չունի պաշտպանվելու: Վերդին կռիվների մեջ արած սպանությունները չէր համարում սպանություն, որքան էլ շատ լինեի նրա հարվածներից ընկածների թիվը:

Միայն մի հատ իսկական սպանություն էր ծանրացած Վերդիի խղճի վրա: Մի անգամ նա սպանել էր մի քնած մարդու: Ահա այդ էր մեղքը, այդ էր մարդկության պատվիրանների դեմ ոճիր գործելը: Եվ Վերդին հանց դրա համար էր ապաշխարում եկեղեցու դուրսը, ապաշխարում էր մինչև կյանքի վերջը՝ չհամարձակվելով մտնել եկեղեցի: Ահա, ինչ երկաթե կազմվածք, ինչ բարոյական տիպ էր ստեղծել Ղարաբաղը իր անտառապատ, մութ լեռներում, իր պատմության աղետալի և հերոսական շրջանում:

⁴ «Արություն և Մանվել», Թ., 1888, էր. 114 (ծանոթ. հեղ.)

III Հայրը

Վերդիի որդին և Ղազարոսի հայրը Ստեփանն էր՝ «Արություն և Մանվելի» Ավետիքը:

Ժառանգել էր հոր հատկությունները. անձնական ուժ, լեռնցու խիզախություն, արկածախնդիր բնավորություն, շիտակություն, համատ տոկունություն:

Ամեն ինչ կա, որ Ստեփանը լինի մի երկրորդ Վերդի: Պակասում է միայն մի մեծ բան՝ Վերդիի ժամանակը: Նա փոխվել է, նա այլևս կյանքի ու մահվան հարց չի դարձնում քաջությունը, արկածախնդրությունը:

Փոխվել է ժամանակը, բայց Ստեփանը չի ուզում ճանաչել այդ իրողությունը: Նա իր հոր որդին է և պետք է իր հոր ճանապարհով գնա:

Եվ բուռն, փոթորկալից էր նրա երիտասարդությունը:

Փորձում են նրան ուսում տալ: Հավլաբարի տեր Օհանը սկսում է ուսուցանել նրան, ինչպես որ սովոր էր: Մի օր տերտեր վարժապետը փալախկա գցեց Ստեփանի ոտները: Վերջինս, պատմում է Ղազարոսը, «քիչ մնաց թե կատաղի, վրա ընկավ մրքից էնպես քաշեց, որ տերտերի աչքերից արտասուք եկավ: Տերտերը դեղնեց, սփրթնեց, թե «ես լավ նշան չէ, սա մարդասպան կդառնա» ... Բռնել տվավ Ավետիքին (Ստեփանին), մեկ լավ ծեծեց, հետո դուրս արավ. նա էլ կարծես էր որ ուզում. փախավ գնաց, էլ ետ չեկավ»:

Բայց ըմբոստանալով ուսուցման բարբարոսական ձևերի դեմ, Ստեփանը ցույց էր տալիս միայն արժանապատվության խիստ զարգացած զգացմունքը, ինքնասիրությունը, սեփական ուժի զիտակցությունը: Նա մարդասպան չդարձավ, ինչպես գուշակել էր տեր Օհանը: Նրա հայրն արդեն սովորացրել էր նրան, թե որն է մարդասպանը իսկական նշանակությամբ. այն որ զզվելի է, այն որ մեղք է և որի համար պետք է ամբողջ կյանքը ապաշխարել:

Բնությունից ստացած ընդունակությունները Ստեփանը չկարողացավ գործադրել մի ուրիշ ասպարեզում: Այդպիսի ասպարեզ դեռ չկար էլ: Տեր Օհանի փալախկան դեռ հնության շարունակություն էր: Ուսումը, դաստիարակությունը դեռ հերոսական գործերի ասպարեզ չէր դարձել:

Չկար այն, ինչ մենք անվանում ենք կուլտուրական առաքելություն:

Եվ տրագիկան է ուժերով լի երիտասարդի դրությունը: Հոր ժամանակներն անցել են, նոր ասպարեզ չկա: Ի՞նչ անել: Ո՞ր գործադրել այն բուռն հուզումները, որոնք վառում են արյունը նրա երակների մեջ:

Նստել տանը, կուչ գալ օջախի մոտ, մաճ բռնել, տավար արածացնել չէ կարող այդպիսի բնավորությունը: Հանդարտված, տափակացած կյանքը նրան դուրս է շարտում իր միջից: Եվ տափակությունը տանել անկարող երիտասարդը բռնում է վաղեմի ճանապարհը:

Այն ճանապարհին է դա, որով գնացել են Արևելքի ըմբոստ, ոչ սովորական բնավորությունները, որոնք հենց այդ անսովորականության պատճառով էլ «գիժ», «դալի» անուններն են ստացել: Այդ ճանապարհի վրա են մշակվել հերոս ավագակները, արկածներ, հանդիպումներ, սիրային տեսիլներ որոնողները, մեծ բանաստեղծները:

Ստեփանը գյուղի ջահելներից է, գյուղի «իգիթ» է: Ժողովուրդը սիրում է հերոսությունը, խիզախությունը, մանավանդ, երբ երիտասարդը գեղեցկատեսիլ է: Սիրում է, որովհետև այդ հերոսները պաշտպանում են նրան:

Բայց գյուղը բավականություն չէ տալիս Ստեփանին: Նրան հարկավոր էր գործունեության ավելի ընդարձակ դաշտ. նրան գրավում են ավելի մեծ մրցություններ: Ինքնասիրությունը քշում էր նրան հոր ճանապարհով: «Ուրիշներից որ իմանում էր, թե իր հերը, պապը շատ քաջ տղամարդիկ են էլել, խաների, բեգերի գլուխ չեն էլել վեր բերելիս, նա գծվում էր, չուլերն ընկնում, որ քաջությամբ նրանցից անց կենա, որ չասեն թե «դու քո հոր տղեն չես»»:

Եվ իգիթական արկածախնդրությունները նրան հեռու են տանում: Հայրն է նստած տանը, իսկ նա ... «Ամսով, տարով տանը չէր կենում. մեկ լավում էր, թե Երևան է, մեկ, թե՝ Ղարաբաղ, մեկ էլ, թե Քարթլ է. որտեղ մի ապստամբություն, մի շարժում էր լինում, նա իսկույն հասնում էր»:

Ինչո՞վ պիտի վերջանային Ստեփանի գծությունները:

Նրանք վերջացան այնպես, ինչպես սովորաբար վերջանում են այսպիսի արկածախնդրական պատմությունները Արևելքում: Սար ու ձոր ընկած իգիթին տուն է բերում, տան սյունից կապում է, տան տղամարդ է դարձնում կինը:

Հասան խանի տարին էր, պատմում է Ղազարոս Աղայանը: Այդ ի՞նչ տարի էր: Արարատյան դաշտի և շրջակա գավառների ազգաբնակչությունը շատ լավ ճանաչում է այդ խանին, շատ հաճախ է հիշում նրա ժամանակը: Ժամանակը առհասարակ, և ոչ մի հայտնի տարի: Այդ ժամանակը մանրամասն նկարագրել է Խաչատուր Աբովյանը իր «Վերք Հայաստանի» մեջ: Երևանի անգութ բռնակալի ժամանակը, այսինքն՝ մինչև 1826-1827 թվականների ռուս-պարսկական պատերազմը: Եվ ահա այդ խանի արշավանքները հասնում են և ռուսաց սահմաններին, իրարանցում են ձգում: Այդ ժամանակներից է վերցված հետևյալ պատկերը.

«Նա (Ստեփան-Ավետիքը) շուրավերցի Սոսի աջ կուռն էր: Երբ որ քուրդ ու ղզլբաշ չափմիշ արին, թալանեցին Ռատեւանա նեմեցներին, նրա չորս կողմի գեղերի ժողովուրդը փախել էին, հավաքվել Դաղեթի տակը, Խրամումը: Ավետիքն էլ (Ստեփանը) իր ընկերներովը դրսից ամեն բան հասցնում էր նրանց, որ քաղցած չմնան: Հարս ու աղջիկ, ծեր ու պառավ, ամենքն էլ փրկչի տեղ էին դնում նրան, սիրում, պաշտում»:

Այստեղ էլ նա մի օր տեսնում է գեղանի Հռիփսիմեին: Նրա սիրահարությունն էլ բուռն էր, ինչպես ամեն մի կիրք նրա մեջ: Այնպես է հափշտակվում, որ քիչ է մնում ուշաթափվի: Ձիուց վեր է գալիս և բռնում աղջկա ձեռքը: Առանց այլևայլության, առանց երկար մտածելու փախցնել աղջկան, տիրանալ նրան: Սա բնորոշ է: Եվ ուրիշ կերպ էլ վայել չէ «իգիթին»:

Սակայն այդ հափշտակումը չէ աջողվում: Շուտով խաղաղվում է երկիրը: Ստեփանը ստիպված է հպատակվել հասարակաց կարգին, որի պահանջած ծեսերով էլ առաջարկություն է անում Հսիփսիմեի ծնողներին: Սովորությունը պահանջում է, որ փեսացուն գնե հարսնացուին: Այդ առևտուրը կոչվում է «ճամբակտրեք»: Ստեփանը աղջկա տանն է, հարցնում է, թե ինչ պիտի տալ:

Հռիփսիմեն մի հորեղբայր ունի՝ Արզուման անունով: Տանը մեծը: Սա մի պաշտոն է, ընտանիքի արժանապատվության մարմնացումը: Բարձր պահելով այդ պատիվը, Արզումանը արհամարհանքով է վերաբերում Ստեփանին և թելադրում է մի շարք պայմաններ: Մի լավ մսացու կով, մի դոչ, հարյուր թունգի Շուլավերի գինի, մի լավ մահուդ չուխա, 25 մանեթնոց և այլն, և այլն: Պայմանները ծանր են: Բայց Ստեփանը գուցե և ոչինչ չասեր դրանց դեմ, եթե չլսեր վերջին պայմանը: Այդ այն է, որ պիտի համբուրե Արզումանի ձեռքը, «մեղա Աստծու» ասե:

Նրա ինքնասիրությունը շոշափված է: Եվ առանց այլևայլի, նա ձեռքը դնում է դեպի իր խանչալը ու գոռում. «Դու ո՞վ ես, որ ես քեզ մեղա ասեմ, ես իսկի տերտերին մեղա չեմ ասում: Ես իմ հոր տղեն եմ, քեզ պես մարդի գլուխը ինձ համար մի սոխ չարժե. ոչինչ չեմ տալու, աղջիկն էլ տանելու եմ, թե որ դոչաղ մարդ ես, չտաս: Էս գիշեր քեզ ժամանակ, մենք էգուց կհանդիպենք մեկ մեկու»:

Մրով, բռնությամբ է նա ուզում տիրանալ իր սիրածին: Արզումանը կաշկանդվում է այդ ըմբոստ, բուռն ուժից: Դուրս է վազում Ստեփանը և իր կատաղությունը թափում տան ամեհի շների վրա, կոտորելով նրանց:

Տունն անպատված է: Արզումանը չի կարող դիմադրել նույն միջոցներով, բայց ամեն ինչ հրամայում է նրան չտալ աղջկան այդ կատաղի մարդուն: «Ես էս աղջիկը կտանեմ Շորագյալու թոսովներումը մարդի կտամ կամ թե չէ կտանեմ ջուրը կզցեմ, էդ գողին, մարդասպանին չեմ տալ», - ասում է նա:

Կեսգիշեր է: Թուրք ծառաները պատրաստ են, Արզումանը աղջկան իր ձիու գավակն է առնում և ճանապարհում: Ստեփանին իմաց են տալիս: Նա վեր է թռչում տեղից, հագնված, ցուրտ գիշերին փողոց է վազում, իր ընկերներին իմաց է տալիս, որ գնան միասին: Ինքը վազում է, «գոմիցը տկլոր ձին դուրս քաշում, նստում ու դուրս թռչում գեղամեջը: Թո՛ւ՛ս՛ տեղը ձեռքը զցում է մի չափարի միջից մի մեծ բիիր է հանում, ու նրանց հասնելն ու մի երկու թուրք նոքարի խփելը մեկ է անում»:

Ընկերների օգնության գնալն ավելորդ էր, Ստեփանը ետ էր իլել աղջկան մենակ, առանց օգնականների: Ընկերները նկատեցին, որ Ստեփանը շապկանց է, շոր հագցրին, գլուխը ծածկեցին, որ չմրսի:

«Իգիթական» հարձակումը պարտուպատշաճ տպավորություն թողեց գյուղի վրա: Մի շաբաթ խոսքն ու զրույցը այդ դեպքն էր: Ու շտապեցին պսակել Ստեփանին Հռիփսիմեի հետ: Հասարակաց օրենքը խախտված էր: Ստեփանը իր վերջին գժությունն էր անում: Նա իլեց, հափշտակեց, նա բռնության, ուժի իրավունքը հանեց ընտանիքի անկախության դեմ:

Բայց այդ հաղթանակը փակեց քո փոթորկալից երիտասարդության ազատության շրջանը:

Նա այժմ ընտանիք ունի: Նա այժմ կին ունեցող տղամարդ է: Եվ նստում է տանը, մի կողմ է թողնում իր բոլոր արկածախնդրությունները, որպեսզի օրինավոր, պատիվը երեսին ամուսին դառնա, այսինքն՝ տան բռնավոր:

Վերդին, որ լուռ էր մինչև այդ, բաց է անում իր բերանը և այսպիսի խրատներ է տալիս իր որդուն.

«Որդի, ինչ որ ես արել եմ, դու ոչ կարող ես անել, ոչ կարող ես մտքովդ անցկացնել: Չէ, որդի, աննպատակ դոչադությունը մի տեսակ ավազակություն է, եղ լավ բան չէ: Հիմի կնկա տեր ես դառել, էգուց-էլոր որդոց տեր կդառնաս, նրանց պահել, պահպանել է հարկավոր. բաղդ մեծացրու, տավարդ ավելացրու, դոնաղ սիրի, խեղճի օգնիր: Թե որ ուզում ես անուն ունենաս, հացով կաց, հացի ձենը Հնդստան կհասնի: Ժամ գնա, աղոթք արա, հաղորդվիր»:

Կոպիտ ուժը, իգիթական խիզախությունները այժմ կանչվում են գործելու այլ, խաղաղ հողի վրա, կանչվում են տնարարության, աշխարհաշինության: Ավելի բարձր իդեալ չէր կարող լինել հասարակական այն կարգերի մեջ, որոնք այն ժամանակվա իրականությունն էին կազմում:

Եվ սանձահարված է տարերային ուժը: Ստեփանը ընտանիքի միջոցով մտնում է հասարակության մեջ, դառնում է նրա մի անդամը:

Ահա ինչպես կատարվեց այդ կերպարանափոխությունը: Ստեփանը շարունակում է երկրպագել «իգիթության», բայց այժմ տանն է. «իգիթի ապրանքը իր աչքի առջևը պիտի լինի»: Իսկ այդ ապրանքը, իհարկե, կինն էր: Այդ ապրանքը, որքան և ենթարկված իր տիրոջ անսահմանափակ կամքին, մարդ է դարձնում նրան, մարդ՝ սովորական մտքով:

Գեղեցիկ է այստեղ Ղազարոս Աղայանի նկարագրությունը, և ես չեմ կարող չբերել այստեղ նրան ամբողջությամբ:

«Սերի այս տաք-տաք ժամանակ Հոփսիմենն էլ սկսեց նրան քարոզել, ինչ որ աղոթք գիտեր, դիփ էլ սովորեցրեց. սկսեց պատմել ճգնավորներից, սուրբերից, մի խոսքով ինչ որ լսել էր Հեղինեից: Ժամ գնաց, հաղորդվեց, լուսահոգի տեր Ղուկասը նրա խղճմտանքն անհանգստացրեց, մեղքերը շինքին դարսեց, ծանր ապաշխարանքներ դրավ վրան և էսպեսով էն առյուծ տղային շինեց մի գառը: Շատ տեղեր էր ման եկել, քիչ-շատ քաղաքավարություն էր սովորել, վրացերեն, թուրքերեն ճարտար խոսում էր, ռուսերեն էլ կոտրատում էր: Մարդամեջ ընկավ, մարդիկ սկսեցին պատվել, պաշտել, մովրովի ու նաչալնիկի մոտ միշտ նրան ուղարկել, նրան քյոխվա շինել, նա էլ տեսավ, որ ոչով իրա չափ խելք ու շնորհք չունի, սկսեց նրանց գլխին փիլիսոփա դառնալ: Նա, որ մի ժամանակ ոչ հավատ ուներ, ոչ հույս, որովհետև նրա հավատն ու հույսը իր թուրն ու թվանքն էին, հիմի, ինչպես կասեն, «օխտը վարդապետի դադամ բան գիտե»: Հիմի որ հազար թուման տաս, նա պար չի գալ, թե ինչ է՝ պար գալով Օհաննես Մկրտչի գլուխը կտրել են տվել. ոչովի հետ պռոշտի չի անիլ, իր երեխին չի պաչիլ, թե ինչ է՝ պաչելով Հուդան Քրիստոսին մատնել է:

Մորթ անելը նրան հազար ու մեկ նզովքներով ու ապաշխարանքներով արգելված էր»:
Մեր հին կյանքի հիմնական գծերն են ցայտում այս կերպարանափոխության մեջ: Այսպես էր սանձվում երիտասարդությունը, այսպես էին մշակվում հասարակության անդամները:

Սակայն ի՞նչ էր այս կերպարանափոխությունը Ստեփանի համար: Արդյոք աղճատո՞ւմ, աղավաղո՞ւմ: Մենք այդ չենք կարող ասել: Ժառանգական հատկությունները շարունակում են ապրել նրա մեջ և նոր շրջանում, բարեփոխման, մշակման, հղկման շրջանում: Նա տոկուն է, երկաթե կորովով, համառ, իր ասածի տեր մարդ և ամեննին չէ փոխել իր դիրքը. ինքնասեր է, կեղծել, ստել, քծնել չգիտե: Ամբողջացած, ձուլված բնավորություն է: Կիսատ դեմք չէ, և բոլորակ դեմքի բոլոր գծերը արտահայտված են պարզ ու որոշ: Նա շարունակում է տիրող, հրամայող դիրք պահել և հասարակության մեջ: Փոխվել է կենցաղավարության ձևը: Նախկին արկածախնդրության, գծության տեղ խաղաղ աշխատավորի մեծ թափն է առաջ եկել:

Հասարակական պայմանները, դիրքը, եկեղեցին վայելչացրել են, մեղմացրել են նրան դրսում: Իսկ տանը, այդ լավ ծածկված և ավանդական սվորություններով պաշտպանված անկյունում, նա կարող է և իրավունք ունի ցույց տալ իրան նախկին իգիթական փայլի մեջ անգամ:

Այդ մարդն ունի մի աղջիկ: Ամուսնացնելու ժամանակն է և նա մի օր դատում է, որ լավ կլինի ամուսնացնել Օսանին մի թիֆլիսցու հետ: Ինչո՞ւ: Որովհետև Ստեփանը ամեն անգամ, երբ հարկավոր է լինում քաղաք գնալ, պիտի ախոռ վարձե իր ձիու համար, ինքն էլ չունի մի բարեկամ, որի մոտ կարողանար իջնել, ուստի մնում է իր ձիու հետ, վարձված ախոռում:

Այդ անհարմարություններն են, որ նրա համար անդառնալի վճիռ են դարձնում, թե Օսանը հավլաբարցու կնիկ պիտի դառնա: Իսկ Օսանը, եկեք ու տեսեք, սիրում է մի գյուղացի երիտասարդի և փոխադարձաբար սիրվում է նրանից: Մայրը այդ ամուսնության կողմնակիցն է: Եվ համարձակվում է այդ բանը թաքուն չպահել իր ամուսնուց:

Եվ պայթում է Ստեփանը: Ամենից առաջ նրան կատաղեցնողը այդ սերն է: Ղազարոս Աղայանը մի ավետարանական ճշմարտություն է արձանագրում, ասելով թե «մեզանում նույնիսկ ամուսնական սերը մի դատապարտելի հանցանք է: Հազար անգամ ճիշտ է այս: Մեր ժողովուրդը սեր է երգում, հարսանեկան շքեղ տոնախմբություններ է կատարում, բայց սիրո բացարձակ արտահայտությունը, հոչակումը նույնիսկ ամենանեղ մտերմական շրջանների մեջ, համարում է հանցանք, համարում է ամոթ և ապականություն»:

Ստեփանի կատաղությունը այնքան մեծ է, որ առաջին իսկ նվազում խանչալ է հանում: Հենց որ զենքը կայծակի պես պսպղաց, պատմում է Օսանը. «Ես թռա ընկա հորս գիրկը ... էլ չգիտեմ ինչպես եղավ, որ Աստված էդպես ինձ խելք ու միտք, ուժ ու զորություն տվավ... մի աչքաճպելումը մորս գլուխը պիտի թռչեր, թե որ մի քիչ ուշ կտրեի հորս առաջը... »

Սա դեռ սկիզբն է: Ստեփանն իմանում է, որ իր կինը նույնիսկ նշան էլ է վերցրել, կարելի՞ է երևակայել, առանց իր գիտության: Եվ այս անգամ այլևս չէ օգնում նույնիսկ աղջկա իր հոր գիրկն ընկնելը: Հռիփսիմեն ընկած է գետնի վրա, Օսանը լեղապատառ ճշում է և վազում դեպի հայրը, բայց հայրը նրան բռնում է և պատին խփում: Աղջիկը, գլուխը պատռած, ընկնում է մոր կողքին:

Վերջանում է բանը նրանով, որ սիրող երիտասարդը ինքնասպանություն է գործում, իսկ Օսանը մարդու է գնում Հավլաբար, որպեսզի իր հայրը իջևանելու տեղ ունենա, երբ գալիս է Թիֆլիս...

Ահա ինչ տիպ էր Ղազարոս Աղայանի հայրը:

Լրացնենք մի քիչ էլ այդ տիպը:

Ընթերցողս, երևի, արդեն հարցնում է, հապա ինչպես է, որ ինքը Ստեփանը, սիրելով Հռիփսիմեին, տիրացավ նրան բռնությամբ, ուժով:

Ինքը՝ այո՛: Ինքը նույնիսկ երգասեր է, աշուղներ է պահում իր տանը: Բայց ինքը ուրիշ բան է: Եվ եթե նա իր աղջկա վերաբերմամբ թույլ չտվեց այն, ինչ ինքն էր օրինավոր և արդար համարում, պատճառն այն էր, որ Օսանի սիրահարը Ստեփան չէ, սրով ու հրացանով չորսու եկավ Ստեփանի դեմ, ուժեղի, իզիթի իրավունք չգործադրեց: Եթե գործադրեր, և Ստեփանն էլ այնքան անկարող հանդիսանար, ինչպես Արզումանը, այն ժամանակ հարցը, իհարկե, սիրահարների համար բարեհաջող լուծում կունենար:

Եվ հասարակության մեջ նա շարունակեց մնալ իբրև ճարտար, խելոք մարդ, իբրև դեկավար: Կարո՞ղ էր նրա համբավին վնասել կնոջ վրա խանչալով հարձակվելը, աղջկա պատռված գլուխը:

Ո՛չ: Որովհետև ինքը հասարակությունը դավանում էր այն սկզբունքը, թե կինը չարիք է, կնոջը պետք է սանձահարել: Վարդապետները սովորեցրել էին. «Կինը, որ կա, սատանա է, էնդուր չեն վարդապետները կնիկ ուզում: Եվան աշխարքի տունը քանդեց, ամենքին էլ դժոխք տարավ: Կնիկ չէ՞ր, որ Օհաննես Մկրտչի գլուխը կտրել տվավ, որ մինչև հիմա էլ ոչ մի կնիկ չէ կարող ս. Կարապետի եկեղեցին ներս գնալ»:

Ահա և սրբազան ավանդություններով ամրապնդված գաղափարախոսությունը (իդեոլոգիան): Այդ տեսակետից Ստեփանը ոչ միայն կշտամբելի չէր, այլ պիտի նույնիսկ օրինակելի ամուսին համարվեր:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

I

Գյուղի մոնթը

Համեմատաբար շատ չեն, ոչ էլ բազմակողմանի՝ Ղազարոս Աղայանի տեղեկությունները իր մոր մասին:

Գիտենք արդեն, որ Հռիփսիմեն գեղեցիկ կին էր: Այս կողմից նա արժանավոր գուգակից էր Ստեփանին, որ նույնպես քաջատոջ և վայելչակազմ տղամարդ էր: Իմանում ենք նույնպես, որ Հռիփսիմեն էլ ուժեղ էր ֆիզիկապես: «Մայրս,- ասում է Աղայանը,- ուժի կողմից գյուղի մեջ մի բացառություն էր, որովհետև իր աննման գեղեցկության հետ ուներ և կարգե դուրս ուժ՝ համարյա հավասար հորս ուժին»: Մի տեղ էլ նա ասում է, թե գոռոզությունը և

ինքնահավանությունը միայն իր հոր ցեղական հատկությունները չէին, այլ հավասար չափով և մոր:

Ահա նմանությունները: Բայց հակադրություններն էլ քիչ չեն:

Մենք տեսանք, որ, այնուամենայնիվ, Հռիփսիմեն էր մեղմացնող, քնքշացնող սկզբունքը Ստեփանի պես մի մարդու օջախում: Ամենից առաջ նա հենց Ստեփանին նվաճեց, դաստիարակեց համայնքի աշխատող անդամ դառնալու համար: Ինչ էլ ասենք, Ղարաբաղի ըմբոստ և արկածախնդիր ծնունդը Ստեփանի մեջ հղկվեց և տաշվեց Հռիփսիմեի քնքուշ մատներով: Մայրական սերը նրա մեջ խանդավառ էր և վտանգի դեպքում ծառանում էր մոայլ խաչենցու դեմ՝ իր ճտերին պաշտպանելու համար: Այսպես էր նա Օսանի նշանադրության պատմության մեջ:

Նա գթոտ սիրտ ուներ: Խեղճերի, անօգնականների, պանդուխտների թշվառությունը նրան կարելի էր հայտնել և ոչ թե Ստեփանին:

Եվ որ ավելի նշանավորն է՝ նա գրասեր էլ էր: Նրա քույրը գրել-կարդալ գիտեր և սվորեցնում էր ուրիշներին: Անշուշտ սովորեցրեց և Հռիփսիմեին: Եվ նրա սովորացրած աղոթքներն ու սուրբերի կենսագրություններն էին, որ Հռիփսիմեն, դեռ ջահել նորահարս, սվորեցնում էր Ստեփանին:

Երկու ամուսինները ահա այսպիսի մի ամբողջություն էին կազմում ընտանեկան հարկի տակ:

Նրանք ունեցան ութ աղջիկ և չորս տղա: Տասներկու որդիներից մեկն էր Ղազարոսը, որ ծնվել էր Ակուռի⁵ կործանման տարին, այսինքն 1840 թվականին և մկրտվել էր Մեծ Պասին, Ղազարոսի հարության կիրակի օրը:

Մանկության առաջին իսկ տարիներում Ղազարոսը աչքի է ընկնում իբրև զարմանալի ուշիմ և ընդունակ մի երեխա: Նա ունի արտասովոր հիշողություն, և այն բանը, ինչով նա այնքան զարմացնում է գյուղացիներին, գրագիտությունն է, մի ասպարեզ, որի վրա Ղազարոսը ապագայում ընդարձակ տեղ պիտի գտներ հորից և պապից ժառանգած իր հերոսական հատկությունները գործադրելու համար:

Մայրը նրան նվիրել էր Աստուծո տաճարին, ամփոփելով նրա պորտը եկեղեցու պատի մեջ: Իսկ 5-6 տարեկան հասակում տարավ նրան գյուղի գրագետ մի կնոջ մոտ, որ տեր Ղուկասի աղջիկն էր և որի անունն էր Մանիշակ: Ղազարոսը այդ կնոջ մոնթն է: Սկզբում ուսումը վախեցնում է նրան, բայց մայրը ջանքեր է անում, որ նա չվախենա, չխորշե գրքից: Այսպիսով երեխան իր հոր հետևողը չի դառնում, այլ իր պապի: Գրասիրությունը նա ժառանգել էր պապից ու մորից:

⁵ Խոսքը վերաբերում է Մասիսի լանջին փոխած Ակուռի գյուղին, որը կործանվեց 1840թ. Հուլիսի 2-ի երկրաշարժի ժամանակ՝ ծածակվելով ժայռերի փլվածքներով: (հեղ.)

Եվ Մանիշակն էլ մեկը չէր մեր հին խալիֆաներից, որոնք ջարդելով էին ուսուցանում: Դա մի մեղմ, բարի կին էր, սիրեց Ղազարոսին իր հարազատ որդու պես, ներշնչեց նրան սեր դեպի գիրքը, նրա մանկական զգացմունքների մեջ փափկություն և քնքշություն մտցրեց:

Եվ մանուկը բացվեց: Նրա ընդունակությունները սկսեցին ծաղկել:

«Մանկությանս առաջին տարիներում,- գրում է Ղազարոսը,- մեր գյուղի մեջ ես մի բացառիկ ծնունդ էի, իբրև կարգից դուրս շնորհալի երեխա: Նեղ էր և մույժ իմ շրջանը, բայց ինչ որ կար այդ շրջանում գեղարվեստական համարված՝ ես յոթ տարեկան հասակումս արդեն բոլորն ամփոփել էի իմ մեջ, և այդ՝ ի հարկե իմ զարմանալի հիշողության և ըմբռնման շնորհիվ: Իմ բոլոր դասերս նախքան դաս առնելս բերան գիտեի՝ կույր աշրդի պես, որ կարդալ չիմանալով՝ ամեն ինչ բերան է անում, լսելով միայն: Երբ որ կարդալ սովորեցի, էլ հարկավոր չէր, որ ամեն դաս առնեի: Ժամասացությունը բոլոր երկար քարոզներով և փոխերով, նույնիսկ ժամումն էի բերան արել՝ լսելով միայն: Շատ ծիծաղելի էր իմ գիր սովորելը: Գրերի անունները գիտեի առանց նրանց ճանաչելու, փոխերն ասում էի առանց բառերը ճանաչելու: Տառերի և բառերի վրա չէի կարողանում կանգ առնել, չէի կարողանում աչքս կենտրոնացնել նրանց վրա, ուստոստում էի ճնճուկի պես: Սրա համար իմ ուսուցչուհին մի բարբարոսական դասատվություն հնարեց, դաս տալ սկսեց ոչ սկզբից դեպի վերջը՝ ինչպես անգիր էի արել, այլ վերջից դեպի սկիզբը. սկսած նույնիսկ բառերից: Օրինակ, «Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւնը» պիտի սովորեի՝ «օգնություն ինձ եկեսցէ ուստի ի լերինս իմ զաչս համբարձի»... Այս հանգամանքն ինձ մի քիչ նեղը լծեց, բայց շուտով ազատվեցի և սկսեցի ամեն տեսակ գիրք կարդալ առանց բովանդակությունն ըմբռնելու: Կարդացածը հասկանալու աղաթ չկար, հետաքրքրականը վարժ կարդալն էր, ու ես իմ վարժ կարդալովս զարմացնում էի ամենքին»⁶:

Դեռ այստեղ, դեռ մանկության այս արշավույսին, մենք պարտավոր ենք առանձին ուշադրություն դարձնել մի շատ կարևոր հանգամանքի վրա: Ուսուցումը արհեստական է, անհասկանալի գրաբար լեզվով, կյանքից կտրված, վերացական, ձանձրալի: Մաղմուսները, ժամագրքերը և այլ այսպիսի սկզբնական կրթության ձեռնարկներ, հարկավ մանկական սրտին ու երևակայությանը ոչինչ չէին կարող տալ: Բայց Ղազարոսը այդ պաշտոնական և պարտադիր գրականությունից դուրս գտնում էր իրան սիրելի, հասկանալի, հարազատ հոգեկան կերակուր: Դա ժողովրդական բանաստեղծությունն էր, այն, որ խաչենցի Ստեփանի որդուց շինեց իր նմանը չունեցող Ղազարոս Աղայան:

Նա գրում է. «Խաղերն էլ առաջ անգիր էի սովորում, բայց երբ գիր սովորեցի, սկսեցի գրել անթիվ խաղեր: Դրանց բովանդակությունը քիչ թե շատ հասկանում էի, և շուտով սկսեցի ինձանից էլ հորինել»:

Ուրեմն, դեռ այն ժամանակից, յոթը տարեկան հասակից էր ժողովրդական երգը աշուղական խառնվածք ցուցադրում Աղայանի մեջ: Երգասիրությունը ժառանգել էր հորից:

Շատ հետաքրքրական է և այն, թե որտեղից էր Աղայանը քաղում խաղեր հորինելու արվեստը:

⁶ «Իմ կյանքի գլխավոր դեպքերը», էր. 16-17

«Թափառական աշուղները,- շարունակում է նա,- իրանց աշակերտներով մեր տանն էին իջնում, մեր օդայումը, և շատ անգամ օրերով մնում: Ահա այդ ժամանակ աշուղները դաս էին տալիս իրանց աշակերտներին զանազան խաղեր, մեծերին սովորացնում և հորինելու ձևը, հորինել էին տալիս գոռով և ծեծում էլ էին սարսափելի կերպով: Ես շատ շուտ գլխի ընկա, թե ինչպես են հորինում և սկսեցի հորինել այն, ինչ որ չէին կարողանում իրանց աշակերտները»:

Շատ նշանակելի է այն, որ Աղայանը այդ տաղերը հորինում էր թուրքերեն լեզվով, ինչպես սովորություն էր այն ժամանակվա հայ աշուղների մոտ: Մաղմոսի և Ժամագրքի մեռած լեզուն չէր երեխային խոսեցնողը, այլ օտար լեզուն, որ օտար լինելով հանդերձ, ավելի մատչելի էր հայ մարդուն, քան գրաբար հայերենը: Դարերի ընթացքում էլ այսպես է եղել: Եվ հասկանալի է, թե ինչու հայ մարդը հեռու էր իր գրականությունից էլ, իր լեզվից էլ, այնքան հեշտությամբ ենթարկվում էր օտար լեզուներին, յուրացնում էր նրանց, մոռանալով և իր գործածական հայերենը: Առանց հասկանալի գրականության չկա և մայրենի լեզու:

Ղազարոս Աղայանի մանկության առաջին շրջանն էր այս, նախապատրաստականը: Մանիշակի գրագիտական պաշարը սպառվել էր: Այլևս ուսուցանելիք նա չունեւր: Ղազարոսը վերջացրել էր իր ուսման ընթացքը իրանց գյուղում: Բայց կար մոնթություն գրության մեջ և բարձր դասընթացը: Այդ բարձրությունից էլ զրկված չմնաց Աղայանը:

Նա տեղափոխվեց հարևան Շամշուղա գյուղը: Այստեղի քահանան՝ տեր Պետրոսը, Սանահնի վանքումն էր ուսումն ավարտած, շատ ու շատ բան գիտեր. քերականություն, ճարտասանություն, Ալբերտի աստվածաբանություն, նույնիսկ կախարդություն: Իմաստուն և գիտնական անունով հռչակված էր շրջական գյուղական աշխարհում: Ստեփանը իր Ղազարոսին նրան հանձնեց, որ տանի իր մոտ, իր բոլոր իմաստությունը սովորեցնե նրան:

Ես երկար չեմ պատմի, թե ինչ սովորեց և ինչպես սովորեց Ղազարոսը Շամշուղայում: Խալիֆայական ուսուցման մանրամասն ու վերին աստիճանի աղավաղված նկարագրություններ շատ կան մեր գրականության մեջ: Բաֆֆիի տեր Թողիկը, Արարատյան գյուղական Խալիֆան և ուրիշ շատ գրվածքներ մեր հին դպրոցի բարբարոսությունները պատմել են շատ լավ: Աղայանը ամենից առաջ է պատմել իր «Արություն և Մանվելի» մեջ: Եվ նրա նկարագրությունն էլ տաղանդավոր է:

Կասեմ այսքանը: Տեր Պետրոսը դպրոց չունեւր, և Ղազարոսը նրա միակ աշակերտն էր: Եվ բացի դրանից գիտնական քահանան իր աշակերտի վրա չէր գործածում «միսը քեզ, ոսկորն ինձ» սկզբունքը, որ խալիֆայական գրության հիմնական իմաստությունն էր: Պետք է ասել, որ նա լավ էր վերաբերվում իր աշակերտին, աշխատում էր սովորեցնել ամեն բան, ինչ ինքը գիտեր: Բայց և այդպես, նրա բարձր դասընթացը կատարյալ մի սպանդանոց էր 10-12 տարեկան երեխայի մտքի համար:

Ես ինքս էլ դժբախտություն եմ ունեցել խալիֆայական գրության մեջ սկսել իմ ուսումը: Բայց գոնե այնքան բախտ եմ ունեցել, որ չեմ արժանացել մանկության բարձր դասընթացին: Այնուամենայնիվ, ամեն անգամ, երբ կարդում եմ «Արություն և Մանվելը», չեմ կարողանում առանց սարսափի անցնել այն էջերով, ուր Աղայանը հիշատակում է իր սովորած առարկաները:

Առանց որևէ կասկածի, դուք տեսած չեք Ալբերտի աստվածաբանությունը⁷: Ես այդ գիրքը նկարագրել եմ «Հայկական տպագրության: Երկրորդ հատորի մեջ⁸: Ալբերտը միջնադարյան նշանավոր լատին սքոլաստիկ էր: Տասնութերորդ դարը ոչ միայն միջնադար չէր, այլև Վոլտերի ու Դիդրոյի դարը: Սակայն մեր բախտն էր, որ հենց այդ դարում Մխիթար աբբան հայ մտքի իբր թե զարգացման համար հրատարակում էր միջնադարյան Ալբերտի թարգմանությունը: Մանր տառերով բավական վատ տպված մի մեծ հատոր: Ի՛նչ դատողություններ, ի՛նչ աշխարհայացքներ: Մարդու սիրտն է սեղմվում, միտքն է ժանգոտվում, երբ կարդում է մի երկու էջ այդ գրվածքից: Եվ թարգմանված է՝ գիտե՞ք ինչ բարբարոսական գրաբարով: Ունիթոռների գրաբարը, աղճատված, աղավաղված, լատինացած:

Երևակայացեք այժմ... 10-12 տարեկան երեխան կոացած այդ սարսափելի գրքի վրա, սովորում է, վերլուծում է, պիտի պատմե: Երևակայելն անգամ դժվար է:

Բայց մեր Ղազարոսը սովորել է Ալբերտի աստվածաբանությունն էլ: Երբ այդ էլ վերջանում է, շամշուղացի տերտերը նրան մտցնում է Սողոմոն Իմաստունի «Վեց հազարյակի» կախարդական թալիսմանների, կախարդական բժշկության, կախարդական երդմնեցուցման և այլ այսպիսի բաների աշխարհը: Գիտե՞ք, որ ժամանակների ծնունդ է այդ «գիտությունը»: Նա ծնվեց ու մեծացավ Եգիպտոսում, մանավանդ Քաղդեայում մեզանից ամենքիչը մի 3000 տարի առաջ:

Եվ ի՞նչ: Մարդը դաստիարակվում է, ինչպե՞ դաստիարակում են: Ղազարոսը յուրացրել է իմաստությունները, մտածում է իր տերտերի նման, համարում է նրան իսկ որ գիտուն մարդ:

Մի փոքրիկ պատկեր՝ աշակերտի և ուսուցչի դրությունը պարզաբանելու համար:

Ղազարոսը ասում է տերտերին, թե մեկը իրանից մի բան է հարցրել և ինքը չի կարողացել պատասխան տալ:

-Ի՞նչ հարցրեց, - ասում է տերտերը:

-Հարցրեց, թե դժոխքումը քանի հոգի կան, ասացի՝ չգիտեմ...

-Եվ ի՞նչ բան է, որ չես գիտացել. մի թե ես չեմ ասել քեզ:

Եվ հետո շարունակում է տերտերը.

-Ականջ արա, ես քեզ ասեմ: Երբ որ Քրիստոս հոգվովն ի դժոխս իջավ, բոլոր հոգիք ազատեց, միայն թողեց չորսը՝ Կայենին, Հուդային, Սողոմոնին ու Անակին: Գրիգոր Լուսավորիչը, ձեռքը Քրիստոսին տված՝ դժոխքի դռնովը դուրս էր գալիս, ետ մտիկ տվավ: Քրիստոսն իմացավ, որ Գրիգորն իր հոր համար է մտիկ տալիս. - Հը՞, ասեց, մեղքդ է գալի՞ս. թող քո

⁷ Ակնարկում է Ալբերտ Մեծի «Համառոտություն աստուածաբանութեան» գիրքը, որի հայերեն թարգմանությունը հրատարակվեց Վենետիկում՝ 1715-ին: (հեղինակ)

⁸ Տես Լեո, երկերի ժողովածու, 10 հատորով, հատոր 5, Երևան, 1986, էջ 407-408:

խաթրու դժոխքի սյունը ականջիցը հանեն, աչքումը դնեն: Էնպես էլ արին. Նա մնաց էնտեղ: Գրիգոր Լուսավորիչը չկարաց իր հորն ազատել դժոխքից: Բայց Սողոմոնն իր իմաստությունը դժոխքումն էլ բանեցրեց: Երբ որ տեսավ, թե Քրիստոս նրան թողեց էնտեղ, սկսեց գլուխը քաշ գցած ետ ու առաջ անց ու դարձ անել դժոխքումը սաստիկ բարկացած: Սատանեք, որ Քրիստոս ներս մտնելիս փախել էին, նրա գնալուց հետո էլ թափվեցան դժոխքը, դրանք որ Սողոմոնին տեսան, մնացին զարմացած, թե սա ինչու է մնացել այդտեղ, բարի բանի համար չի լինիլ, երևի Քրիստոսի թողածը սա է ուզում լրացնել: Հետո մոտենալով Սողոմոնին, հարցրին,- Է՛յ, ուստա Սողոմոն, էստեղ ի՞նչ ես շինում, էդ ի՞նչ ես չափում-չափչփում, մտքիդ խորն ընկած: Ձեզ համար գերեզման եմ չափում,- պատասխանում է Սողոմոնը:

Հետո տերտերը պատմում է, որ սատանաները վախենում են և Սողոմոնից ազատվելու համար, հանում են նրան դժոխքից ու դնում արքայության ճանապարհին: Ի՞նչ եղավ հետո: Տերտերն ասում է.

-Ճանապարհին Ձիթենյաց սարի տակով անցկենալիս՝ վերև մտիկ տվավ (Սողոմոնը), տեսավ Ադամին Քրիստոսի կողքին նստած: Սողոմոնը Ադամին, որ տեսավ, ասեց՝ «օրհնյա տեր». Ադամն էլ իր ձեռքը Քրիստոսի կրծքին դնելով ասեց՝ «Աստված օրհնե»: Քրիստոսն էլ Սողոմոնի իմաստությունը գովեց, թե՛ «ես ինքս գիտեի, որ դու դժոխքումը կենող պտուղ չես»... Ահա էսպես, հիմա իմացա՞ր:

Իմացավ աշակերտը: Իր ձեռք բերած բոլոր իմաստությունների վրա ավելացրեց երկուսն էլ. Մեկ՝ թե քանի հոգի է մնացել դժոխքում, երկրորդ՝ թե որտեղից է «օրհնյա տեր, Աստված օրհնեն»:

Եվ աշակերտի իմաստությունները պարծանք էին ուսուցչի համար: Տեսերը սիրում էր նրան հարցուփորձի ենթարկել հասարակության առաջավոր անդամների, քեղիտղանների ներկայությամբ: Եվ տգետ ամբոխը զարմանում, ապշում էր: Եվ արդյո՞ք խիստ ուսումնական տերտերը շա՞տ էր տարբերվում իր տգետ ժողովրդից:

Ահա նրան ասում են, թե Երուսաղեմ գնացած մի մղղըսի պատմել է, թե ինքը մի աշխարհ է ընկել, ուր մարդիկ շների նման էին:

-Էդ ճշմարիտ է,- պատասխանում է տերտերը,- «շնագլուխների» աշխարհն է եղել:

Մղղըսին ասել է, թե մի աշխարհ ընկավ, ուր մարդիկ մի հաս աչք ունեին:

-Ճշմարիտ է,- հաստատեց տեր հայրը,- նրանց կասեն «քյալլազյոզ», «թափա-զյոզ», որ կնշանակե «ճակատ-աչք», որովհետև ունեցածները մի աչք է, էն էլ ճակատի մեջտեղը:

-Ասում էր՝ մի աշխարհ ընկա, էնտեղ մարդոց հասակը մի թիզ էր...

-Ճշմարիտ է. դա ասվում է «Թզկաց աշխարհ»...

Տեսնո՞ւմ եք՝ որքան առատ ճշմարտություններ էր սովորում Ղազարոսը, մեկը մյուսից գերազանց, մեկը մյուսից խոր ու մեծ:

Այդպիսի ճշմարտություններով բեռնավորված երեխան, ասում էին, իր ուշիմությամբ և ընդունակություններով պիտի գերազանցի եր տերտեր-վարդապետին:

Նա, այդ երեխան էլ, տերտեր կդառնար, ավելի հոչակված իր գիտնականությամբ: Եվ այդ տերտերը կշարունակեր վարժապետի գործը, մեծ-մեծ ճշմարտություններով կդաստիարակեր դժբախտ ամբոխը:

Ահա ինչ էր պատրաստվում: Ահա ինչն էր բնականը, անխուսափելին: Բայց Ղազարոսը ազատվեց այդպիսի ճակատագրից:

Եվ ո՞վ էր ազատողը:

II Դեպի քաղաք

Մոնթոթյան բարձունքները թևակոխած մանուկ Աղայանը դեռ վերջնականապես կազմակերպված մի բնավորություն չէր: Նույնիսկ ֆիզիկապես էլ թույլ էր նա զարգացած: Ամենաշատը նա այդ հասակում շնորհալի մի երեխա է, որ սովորում, յուրացնում է շատ լավ: Տաղանդավոր մի աշակերտ: Բայց դեռ որոշ ձուլվածք ստացած անհատ չէ, դեռ ինքնուրույն դեմք չէ:

Ուժեղ, ինքնուրույն անհատականության գծեր նրա մեջ մշակվում են աստիճանաբար, դանդաղ կերպով, տարիների ընթացքում: Մենք տեսնում ենք, որ ամենից առաջ նրա մեջ գլուխ է բարձրացնում ինքնասիրությունը: Նա սիրահարվում է ինքն իր վրա: Սա ստացական հատկություն է - բավական է մի անգամ էլ աչքի առջև բերել Ղազարոսի պապին ու հորը:

Եվ այդ ինքնասիրությունը, հիարկե, անբովանդակ ու սնամեջ չէ: «Երբ մի մանուկի ամենքը գովում և սիրում են,- ասում է Աղայանը իր ինքնակենսագրության մեջ,- երբ նրան համարում են կարգե դուրս մի բան ու զարմանում, անկարելի է, որ նա ինքն էլ չսիրահարվի իր վրա և չզարգացնե իր մեջ այն ընդունակությունը, որի համար որ սիրվում է ինքը»: Այստեղ արդեն զարթնում է նրա մեջ ինքնազարգացման և ինքնակրթության ոգին:

...«Ես շատ շուտ սիրահարվեցի ինքս ինձ վրա: Իմ այս զգացմունքս չէի թաքցնում և պարզմտությամբ խոստովանում էի շատերին, թե՛ գիտե՞ք, ես ուրիշ բան եմ, այսպես մի նայեք վրաս, ես շատ երևելի մարդ պետք է դառնամ: Բայց այս պարզմտությանս համար սարսափելի ծաղրի ենթարկվելով՝ զգացումս ծածկեցի իմ մեջ՝ առանց իմ վրա ունեցած կարծիքս փոխելու»...

Բնավորության կազմակերպման մեջ այս ինքնազգացումը, ինքնաներշնչումը կատարում է իսկապես ահագին դեր: Առանց այսպիսի խոր հիմնավորման չէր էլ կարող ծնվել ու զարգանալ գործիչ: Զգալ կոչում, հավատալ իր առաքելության՝ սա է ամենագլխավորը: Եվ որքան վառ է այդ զգացմունքը, այնքան անհատականապես ուժեղ, ինքնուրույնացած է գործիչը, այնքան նա հեռու է և բարձր է սովորական մակերևութից, շաբլոնից: Այդ է այն

մթերանոցը, որի մեջ երբեք չեն ցամաքում ուժի և եռանդի աղբյուրները, երբ ինքն իրան հավատացող գործիչը դառնում է մաքառող, երբ նա գործում է մրցությունների և պայքարների ասպարեզում:

Այդ ինքնասիրությունն էլ Ղազարոս Աղայանին հանում է մոնոթոթյան և գյուղացիության նեղ շրջանակից, տանում է աշխարհ տեսնելու, որոնումներ կատարելու:

Առիթը Ղազարոսի մանկական սիրահարությունն է:

Շամշուկա գյուղում նա սիրահարվում է Մայիկո անունով մի աղջկա վրա: Երկուսն էլ երեխաներ են, և նրանց սերը «սուրբ էր, անմեղ, անարատ, անիմանալի և անգիտակից»: Վարժապետ տերտերը նկատում է այդ և սկսում է խրատել Ղազարոսին: Մենք շատ լավ գիտենք, թե որքան անօգուտ են լինում և պիտի լինեն խրատները այդպիսի դեպքերում, երբ սրտերը կապված են իրար հետ, և մարդը, թեկուզ 12-13 տարեկան մի երեխա, հափշտակությունների և երազների աշխարհն է մտնում:

Անմեղ սերը զարթեցնում է Ղազարոսի մեջ նորանոր զգացմունքներ, նորանոր տրամադրություններ: «Միրոս այնպես կպավ Մայիկոյին, որ էլ չէի կարողանում նրանից բաժանվել, միշտ ուզում էի նրա հետ նստել, նրա համար երգել: Նրա անունով գրում էի սիրո երգեր, իհարկե, նախագեղարվեստական, բայց սքանչելի երկուսիս համար էլ. քաշում էի և իմ ու նրա պատկերները կողք-կողքի, ինչպես հարս ու փեսա, իհարկե, նախապատմական ճաշակով, բայց մեր երևակայության համար շատ զմայլեցուցիչ: Դասերս այլևս չէի սերտում և բերան անում առաջվան ժրաջանությամբ. այժմ նրանք շատ չոր էին թվում և շատ տաղտկալի, ինչպես որ էին իրոք էլ»:

Հեղաշրջումը կատարյալ է: Նա զարթեցնում է հույզեր, նա գալիս է անմիջական զգացմունք հաղորդելու երգասեր երեխային, որ վաղուց արդեն սկսել էր բանաստեղծության մեջ որոնել թարմություն և կյանք: Ու, դասերը, միանգամայն հասկանալի է, դառնում են ձանձրացուցիչ: Ալբերտի աստվածաբանությունը և այս թարմ հոտավետ իրականությունը - կարո՞ղ էին հաշտ ապրել իրար կողքի: Աստվածաբան սքոլաստիկը չպիտի տնկեր Ղազարոսի սրտում մարդկայնության, առաքինության սերմերը, այլ այս փոքրիկ և սիրուն աղջիկը, որ անգիտակցաբար տաքացնում էր Ալբերտի աշակերտին: «Մայիկոյիս կարոտը քաշելով՝ սկսեցի օրեցօր նվազել: Որքան նվազում էր մարմինս, այնքան դյուրագրգիռ և դյուրագգաց էի դառնում և այնքան քնքշանում: Կոպիտ գործ ու խոսք տանել չէի կարողանում, ուրիշների թշվառ վիճակը, նրանց աղքատությունը, մերկությունը, տկարությունը այնքան ունեցողների վրա չէին ազդում, ինչքան ինձ վրա, որ միայն ականատես էի»:

Ահա երբ և ինչպես է սաղմնավորվում Ղազարոսի մեջ լացն ու մեծ մարդասեր սիրտը:

Բուռն է Մայիկոյի սերը: «Ես սկսեցի իմ լավ հեքիաթների հերոսների ջունուն դառնալ և սար ու ձոր թնդացնել իմ սիրուհու անունով»:

Ամառը Մայիկոն գնում էր սարը, իսկ Ղազարոսը կեսգիշերին փախչում էր տերտերի մոտից, որ գնա տեսնե իր սրտի թագուհուն: Գնում էր ոչ թե սովորական ճանապարհներով, այլ խոր ձորերով և խիտ անտառներով, որպեսզի իրան տեսնող չլինի:

Գիտենք արդեն, թե ինչ է սերը մեր ժողովրդի համար: Բնականաբար այս անժամանակ, երեխայական սիրահարությունը ավելի ևս պիտի գայթակղություն պատճառեր: Այլևս չէին հիանում Ղազարոսի վրա, այլ համարում էին նրան հրեշ: Նա ընկնում է ամենքի աչքից: Իսկ ի՞նչ պիտի աներ Ստեփանը:

Լսում է նա թե չէ՝ իսկույն որդուն բերել է տալիս իր մոտ, որ արդեն ինքը խրատե: Եվ ահա ինչ է պատմում Ղազարոսը.

«Մայիկոն մտիցս չէր ընկնում: Նորանոր երգեր էի հորինում, որոնց մեջ կարոտ էի հայտնում՝ ինչպես Քյարամն իր կորած Ասլուն: Գիշերները տեսնում էի երագումս, ուրախությունիցս զարթնում էի իսկույն, բայց տեսնելով, որ երագ է, սկսում էի լաց լինել: Իսկական պատճառը չէի հայտնում, ասում էի՝ գլուխս է ցավում: Բայց մեկ օր հայտնեցի մորս: Մայրս կարծելով, որ աղջկա մայրը ինձ կախարդել է, հորս խնդրում է, որ գիր անող մուլլաներին դիմե և ինձ փրկել տա այս ցավից: Գիր-միր հարկավոր չէ, պատասխանել էր հայրս, ես ինքս շատ լավ գիր կանեմ: Եվ ճշմարիտ, մի գիշեր էլ, երբ ըստ սովորության սկսեցի լաց լինել և տուս չկացա, հայրս վեր կացավ, մի փափուկ ճիպոտ վեր առավ, որ իր լավ գիրն անի ինձ վրա, ես իսկույն վեր թռա տեղիցս, և շապկանց ու ոտաբոբիկ փախա մինչև գյուղի ներքի թաղը՝ քեռանցս տունը, որ ինձ պատսպարեցին՝ իմանալով բանի հանգամանքը»:

Իր հոր տղան, ասում եք դուք, կարդալով այդ տողերը: Եվ սխալված չեք:

Ստեփանի դեմ ծառանում է նրա սեփական, նրա տոհմի ինքնասիրությունը՝ մարմնացած այդ երեխայի մեջ: Դա նույն այն ինքնասիրությունն է, որ մի ժամանակ հարկադրել էր Ստեփանին հարձակվել Արզումանի վրա, երբ սա, ըստ սովորության, պահանջեց փեսացուի «մեղան» ասել:

Ղազարոսը այլևս տուն չվերադարձավ: Ստեփանը այնպիսիներից չէր, որոնք շատ հեշտ են մոռանում այնպիսի ըմբոստ արարքներ: Մայրն է, որ լուծում է երկու ինքնասիրությունների ընդհարումից գոյացած կնճիռը: Ղազարին նա ուղարկում է Թիֆլիս, իր աղջկա՝ Օսանի մոտ:

Այդ ճանապարհորդությունը նկարագրված է «Արություն և Մանվելի» մեջ: Քաղաք տանողը տեր Պետրոսն է, վարժապետը: Եվ այստեղ, այս ճանապարհին, մենք չենք տեսնում Ղազարոսին սիրով խենթացած: Մի ուրիշ մեծ հանգամանք, նրա վաղեմի տենչանքը, նրան վաղուց հափշտակած ձգտումը, իրականացած է: Դա քաղաքն է: Եվ տեսնելու, որոնելու, նոր-նոր բաներ սովորելու նվիրական ուխտը այնքան ուժեղ է, որ հետզհետե նսեմացնում է գյուղական աղջկա հմայքը:

Ահա նա մոտեցել է այն սարին, որի ետևում Թիֆլիսն է: Իջնում է տերտերի ձիու զավակից, վազեվազ բարձրանում է սարը, որպեսզի շուտ տեսնե կախարդական քաղաքը: Նա սարի գլխին է: Թիֆլիսը, Նավթլուղից մինչև Վերա, փռված է նրա առաջ: Տեսարանը դյուրում է գեղջուկ պատանուն և գրգռում է նրա երևակայությունը: Խոսում է հիացմունքը, խոսում է «Պղնձե քաղաքի», Սողոմոնի «Վեց հազարյակի», Աստվածաշնչի աշակերտի լեզվով:

«- Հրաշալի՜ տեսարան, բացականչեց վերջապես Արությունը (Ղազարոս Աղայանը):

- Մա ինքն է «Պղնձե քաղաքը»,- ասում է Արությունը և քիչ է մնում Տալիփի նման «Չաբա՛ 2, Չաբա՛ 2» աղաղակելով թռչել սարի գլխից և ընկնել իր ներքնն ընկած խորերն ու ձորերը:

- Էս անպատճառ Սողոմոնի հրաշագործությունովը կլինին էսպես պայծառացրած... Ա՛խ, Աստված, թն տուր ինձ, էս բոպեիս կթոչեի ու կսկսեի նրա վրա պտույտ-պտույտ գալ: Քաղաքացիք կգարմանային, կասեին՝ «Էս ով է, երկնքիցն է գալիս»... Տերտերը Եղիսեի նման կաղաղակեր. «Հա յր, հա յր, կառքդ Իսրայելի և հեծեալդ դորա»... հենց կիմանար թե Եղիայի նման երկինք են տանում ինձ...»:

Բազմաթիվ գավառացի երիտասարդների համար է Կովկասի մայրաքաղաքը եղել երագ, տենչանք. բազմաթիվ ջահել ու թարմ մարդկանց վրա է նա թողել այսպիսի խոր տպավորություն:

Բայց ի՞նչ ուներ այդ կախարդիչ Պղնձե քաղաքը այն միջոցին, երբ Ղազարոս Աղայանը առաջին անգամ մտնում էր նրա մեջ:

Այդ մուտքը տեղի ունեցավ 1853 թվականին: Եվ այդ միջոցին Թիֆլիսը շատ բանով չէր կարող պարծենալ, մանավանդ նրա հայ ազգաբանակությունը: Ուսում որոնողի համար նա դեռ մի Շամշուղա էր, միայն ավելի մեծ չափերով: Տեր Պետրոսի դպրոցը այդտեղ մի հատ չէր: Տերտերներ, տիրացուներ, թերուսներ էին վարժապետները, որոնք մի-մի դպրոց բացած՝ Շամշուղայի իմաստությունները, գուցե նրանցից մի քիչ ավելի բան, սովորացնում էին աշակերտներին:

Չկար հայերեն գրականություն, չէր հրատարակվում հայերեն և ոչ մի լրագիր:

Կար միայն մի հիմնարկություն, որ պայծառ ճրագ էր խավարի թագավորության մեջ:

Ներսիսյան դպրոցը:

Ինքնըստինքյան դա էլ մի մեծ բան չէր: Ուներ երեք դասարան, ուր «ուսման առարկաներն էին՝ հայոց լեզու, ընդարձակ, և կրոն իր բոլոր մասներով, ռուսաց լեզու, մասամբ կամավոր, և մի կտոր թվաբանություն, և այն էլ ավանդվում էր չինական մեթոդով: Դպրոցի բոլոր ջանքը երկու առարկայի վրա էր դարձրած - կրոնի և լեզվի, և այդ վատ չէր այն ժամանակվա ամենակարևոր պահանջին նայած: Այդտեղ հայախոս էին դառնում և լավ գրում, կարդում ու տեախոս, չերքեգախոս և վրացախոս պատանիք: Մի երկրորդ լավ բանն էլ այն էր, որ սովորություն ունեին բարձր դասատան աշակերտներին քարոզներ գրել տալու»:

Աղայանը մտնում է այդ կրթարան, որ, ինչպես տեսնում եք, իր ուսման ծրագրով շատ բան չպիտի տար նրան: Բայց Ներսիսյան դպրոցի նշանակությունը այդ միջոցին այնքան առարկաների բազմազանության մեջ չէր, որքան ոգու, ուղղության մեջ:

Լինելով գերազանցորեն կրոնական կրթարան, դպրոցը միաժամանակ հանդիսանում էր այն միակ ասպարեզը, ուր հանդես էր եկել նոր, ավելի ազատ մտածողությունը: Շանշյանի տեսչության ժամանակն էր: Իսկ Շանշյանը խոր հավատացող մի քրիստոնյա էր, դաս էր տալիս կրոն, դա մի ամբողջ հեղափոխություն էր մտցրել մեր ավանդական սքոլաստիկ կրոնագիտության մեջ: Եվրոպական կրթություն ստացած մարդը, իհարկե, այն չպիտի լիներ իբրև կրոնուսույց, ինչպես էին մեր նույնիսկ «գիտնական» վարդապետներն ու տերտերները: Առողջ քննադատության սկզբունքներ, որոնք արմատախիլ են անում նախապաշարմունքները, կրոնական ֆանատիկոսությունը, լայն հայացքներ, հայտնի չափով պատմական աշխարհագիտություն են մտցնում իբրև ուսումնասիրություն - այսպես էր

երևան գալիս ազատ միտքը մեր իրականության մեջ: Այդ տեսակ մտքի ռահվիրաներից էին Ստեփանոս Նազարյանը, Պետրոս Շանշյանը:

Դրանք էին նոր սերնդի ներկայացուցիչները դպրոցի և գրականության մեջ: Վերանորոգիչներ շատ անձուկ մասնավոր իմաստով: Մակայն այս անձուկ հանգամանքը ամեննին չէր սահմանափակում նրանց կատարած դերի նշանակությունը: Վերցրեք տեր պետրոսների ավանդած գիտություններով ապրող մի ամբողջ ժողովուրդ, և դրեք նրա մեջ անհատներ, որոնք հին աշխարհայացքները, ավելորդապաշտությունները խորտակում են վերլուծության, քննադատության, լայն հայացքների անդիմադրելի ուժով: Նրանք նոր հորիզոններ էին բաց անում մատաղ սերնդի աչքերի առջև, թարմ հոսանքներ էին մտցնում վանական ավանդապահությամբ կաշկանդված մտքերի մեջ:

Հայրերի և որդիների մշտնջենական հաջորդումների մեջ նրանք որդիներն էին: Եվ ինչպես միշտ ու ամեն տեղ է եղել, ընդհարումը այդ երկու սերունդների մեջ կատարյալ էր և մեզանում: Հին ավանդապահությունը արշավանքներ էին գործում Ներսիսյան դպրոցի վրա, ուր բույն էր դրել հիմքեր փորող ազատամտությունը: Պայքարը խիստ էր: Եվ այդ պայքարի մեջ Շանշյանի աշակերտները ցույց էին տալիս, որ օրենքը օրենք է և մեզանում, որ նոր գաղափարների կողմնակիցները, զինվորները ամենից առաջ երիտասարդությունից են դուրս գալիս:

Աղայանն էլ այդ երիտասարդության մեջ էր: Դպրոցում խառնակություններ սկսվեցին, Շանշյանը հեռացավ, նրա հետ հեռացան և շատ աշակերտներ: Աղայանն էլ հեռացողներից էր: Դպրոցում նա շատ քիչ մնաց, հագիվ երկու տարի: Կարելի է ասել, թե նա այդտեղ նոր ուսման համը միայն առավ, տեսավ ինչ բան է եղել, սակայն չստացավ նրան: Դպրոցից նա դուրս եկավ ավելի ևս ծարաված, ավելի ևս կարոտ ուսման:

Հեռացած աշակերտները պատրաստվում են պետական դպրոց մտնելու: Աղայանն էլ սկսում է պատրաստվել: Եվ պատրաստողները զիմնագիտի վեցերորդ դասարանի մի քանի հայ աշակերտներ են, որոնք օգնության են գալիս իրանց կարոտ և չունևոր ընկեր աշակերտներին:

Ահա դրանց շրջանում Աղայանը ճաշակում է գիտության պտուղները: Շրջանը ընկերական էր, ոչինչ պաշտոնականություն չկար, որ արգելեր ազատ զարգացումը: Եվ առարկաներն էլ բոլորովին ուրիշ էին, այնպիսիները, որոնցից գուրկ էր խեղճ հայ դպրոցը, սկսած տեր Պետրոսի մոնթանցից մինչև Ներսիսյան դպրոցը: «Մտավոր հեղաշրջում»- այսպես է անվանել Աղայանը «Արություն և Մանվելի» այն գլուխը, ուր նկարագրել է Թիֆլիսի իր դպրոցական կյանքը:

Հեղաշրջում՝ այս բառի իսկական մտքով: Շամշուղայի աստվածաբանությունը, պղնձե քաղաքները, վեցհազարյակները մի կողմ են քաշվել, նրանց տեղ հանդես են եկել նոր ու հրաշալի ուսմունքներ՝ բնագիտություն, աշխարհագրություն: Նոր, անհայտ աշխարհներ են բացվել: Աղայանին նոր մարդ են դարձնում: Մինչև այդ նրան պակսել էր մի մեծ հայտնություն. «Բնություն և կյանք, որոնք մի բառով կարող են և կյանք անվանվել»:

Իսկ ա՞յժմ, հայ իդեալիստ ուսանողների շրջանո՞ւմ: «Բնագիտության անխախտ օրենքները, - ասում է Աղայանը, - թվաբանության ճիշտ կանոնները, պատմության երևելի անցքերը,

աշխարհագրության գեղեցիկ նկարագրությունները, բանաստեղծական սրտաշարժ գրվածները, թեև փոքր սահմանի մեջ, իբրև մի փնջիկ միայն, բայց բավական է մի մատաղահաս և դեռ փոքր գլխի մեջ ահագին հեղաշրջում ձգելու»:

Ինքն իրան Աղայանը սրամիտ այլաբանությամբ նմանեցնում է աղբով պարարտացրած մի հողի, որի մեջ ընկած բեղմնավոր սերմը կարող էր մեկին հարյուր տալ: Մտավոր հողը պարարտացնող աղբը տեր Պետրոսի տված ուսմունքն էր:
Սակայն ստացվե՞ց հունձ մեկին հարյուր:

Դրա համար հարկավոր էր, որ շնորհալի պատանին կարողություն ունենար շարունակելու իր մտավոր զարգացումը՝ ստանալով կանոնավոր և սիստեմատիկ ուսում:

Նա զրկված է այդ կարողությունից: Նա միջոցներ չունի: Եվ գնում է միջոցներ գտնելու: Ո՞ր: Իհարկե իրանց տուն, ուրիշ տեղ չունեիր նա: Իրանց տուն, ուր Ստեփանն էր տիրապետում:

Այժմից իսկ կարելի է գուշակել, որ դա մի անհուսալի ձեռնարկություն էր: Ուստի մենք պիտի տեսնենք, թե Աղայանը ինչ էր կրում իր մեջ, որ կարող կլինեիր նրա համար նյութ կազմել ապագա ինքնագործունեության համար:

Թիֆլիսից մեկնելուց նրա ընկեր Մանվելը ընտանեկան քեֆ է կազմում: Աղայանը դեռ բոլորովին չէ կազմակերպվել: Նա մի տեսակ ընկճված է, հոգսերի տակ ճնշված: Մանվելն է նրան խոսացնում, նրա լեզուն բաց անում:

Եվ մենք տեսնում ենք, որ Ղազարոսի մեջ ավելի զարգացել է աշուղական տրամադրությունը: Նա կատարելապես յուրացրել է աշուղության արվեստը, ուսումնասիրել է այդ արվեստի բոլոր տեսակները: Հարուստ նյութեր ունի, բացատրություններ է տալիս:

Բայց այդքան լավատեղյակությունը կույր յուրացում չէ ցույց տալիս: Աղայանը աշուղական երգերի վերլուծումների միջոցով ապացուցում է, թե որքան արհեստականություն, որքան մթություն է դիտավորյալ կերպով մտցվում այն բանաստեղծության մեջ, որ ահագին ազդեցություն ունի ժողովրդի վրա, որ դաստիարակում է նրա ճաշակը, նրա աշխարհայեցողությունները: Նա ցույց է տալիս և այն, թե որքան կեղծ ու պատիր բաներ է ստեղծվում և ընդունվել տալիս ժողովրդին:

Վերանորոգություն մտցնել ժողովրդական բանաստեղծության մեջ, պարզություն, դյուրըմբռնելիություն հաղորդել նրան, մաքրել ավելորդություններից ու հնարավոր ստություններից՝ ահա, իմիջիայլոց, ինչ գաղափար է ծնել նրա մեջ իբրև արդյունք այն կարճատև անսիստեմ կրթության, որ նա ստացել էր քաղաքում:
Մերմերը, ճիշտ որ, պարարտ հողի մեջ էին ընկել:

Այս է ասում ընթերցողը, մինչդեռ Ղազարոսը, բաժանվելով Մանվելից, Բոլնիսի ս. Գևորգ ուխտատեղին գնացող ուխտավորների սայլն է մտնում:

Հեռանում է նա Թիֆլիսից: Աջողության ի՞նչ հույսով: Մանվելը գիտեր, որ իր ընկերի մեջ

ապագա «կովասեր զինվորի նշանները երևում են արդեն»: Գիտեր, որ իր ընկերը «մի ծայրահեղությունից դեպի մյուսը թռչելու հակումն ուներ»:
Իսկ այդ ընկերն ասել էր նրան. «Մենք մարդիկ ենք, բանական մարդիկ, մենք պարտական ենք գնալ դեպի հառա ջ, հառա ջ, ո՛ն անդր հառա ջ, մի ձախ, մի աջ, դեպի կատարյալն և դեպի բարին...»:
Հիշեցեք տեր Պետրոսի մոնթին Թիֆլիս մտնելիս: Եվ հիմա ինչպես է նա Թիֆլիսից գնում դեպի այն գավառը, ուր Շամշուղա կա, ուր Աղանց Ստեփանի աշխարհն է:

III Թափառումներ

«Կովասեր զինվորի» նշանները Աղայանը ցույց տվեց հենց ճանապարհին, ուխտավորների մեջ: «Պղնձե քաղաքի» աշակերտը քաղաքում դարձել է մի կատարյալ հեղափոխիչ: Եվ վերադարձին նա զինված է այն իսկ նախապաշարմունքների, սնտիպաշտությունների դեմ, որոնք մի ժամանակ նրա ստացած կրթության գլխավոր պաշարն էին կազմում:

Խեղճ ու մութ ուխտավորները գնում են իրանց երեսը քսելու ս. Գևորգի քարերին: Դարերով հարթված, սրբագործված մի ճանապարհ, որի վրա քարերից ու կոշկոռներից ավելի շատ թափված են միամիտ, տգետ ավանդություններ, պաշտամունքներ, հավատալիքներ: Եվ ահա այդ հի՛ն, հի՛ն ճանապարհին մի պատանի է լույս ընկել, որ հարվածում է պապերի ավանդությունները, ծաղրում է սնտիպաշտությունները, նույնիսկ ս. Գևորգին մեծ բան չէ համարում: Գոնե՛ նա, այդ հոչակված Գևորգ գորավարը, հենց ս. Վարդանից մեծ չէ: Այսպես է ասում այդ պատանին:

Նրա դեմ վրդովվում են ջերմեռանդ ուխտավորները: Ուրիշ կերպ չեն կարող լինել նրանք: Եվ Աղայանը ի վերջո վճռվում է իրան հյուրընկալած սայլից, ստիպված է ոտով գալ մնացած ճանապարհը:

«Կովասեր զինվորի» բնավորությունը արդեն շատ բնորոշ գծերով է ցույցանում: Նա ինքն է կռիվ որոնում, նա չէ պաշտպանվում, այլ հարձակվում է: Հարձակվում է նույնիսկ այնպիսի հանգամանքների մեջ, ուր չկան ստիպողական դրդիչներ: Զուր չէ Աղայանը շատ տեղ իրան համեմատում Դոն-Քիշոտի հետ: Նրա կռիվները, ճիշտ որ, շատ են հիշեցնում լամանչեցի ասպետին: Մեղի-շենցի Աղանց Վերդին կովում էր արդարության և իրավունքի համար. Կովում էր սրով և հրով, կովում էր՝ հարյուրից ավելի սպանությունները օրենք և կարգ համարելով և ոչ թե հանցանք: Այդ կռիվը դարերով հարթված ուղիներ ուներ, նորություն չէր մարդկության համար: Մեկը բյուրավորներից - ո՛չ ավելի:

Նրա թոռը ժառանգել է այդ կովասիրությունը, բայց ապրում է բոլորովին այլ հանգամանքների մեջ, բոլորովին այլ կենսական-կուլտուրական պահանջների արտահայտիչ է: Նա էլ կովում է մարդկանց բարիքի համար: Բայց նրա զենքը ջոկ է, նրա գաղափարը կարող էր Աղանց Վերդիի ոսկորները տակնուվրա անել գերեզմանի մեջ:

Աղանց Վերդիին հասկանում և մեծարում էին մարդիկ: Հասկանում էին և նրա որդի Ստեփանին: Քաջությունը, հերոսությունը պաշտվում էր, քանի որ նրան ճանաչել, մեծարել

Էին անհուն դարերից ի վեր: Այլ է Աղանց Ղազարոսը: Մա պապենական ժրությունը, քաջությունը ցույց է տալիս պապենական հայեցողությունները կործանելու, նոր աշխարհայացքներ կանգնեցնելու համար: Եվ նրան դուրս են անում ուխտավորների սայլից, և նա պիտի ոտով գնա՝ իր հարձակումները շարունակելու համար:

Ահա թե ինչ կերպարանափոխության է ենթարկվել Աղանց տան ժառանգական քաջամարտությունը:

Նա վերադառնում է իր հայրենի միջավայրը որպես բողոք նրա կարգերի ու հասկացողությունների դեմ: Նա սիրահար չէ իր թողած կյանքին, գյուղի ու գյուղացիության անվերապահ սիրահարը չէ: Երևոյթները այդ աշխարհում այլևս անբարբառ չեն նրա համար, զգվանք և կսկիծ են պատճառում նրան:

Ի՞նչ է նա տեսնում հայրենի աշխարհում:

Նույնը, ինչ տեսել էր առաջ, ինչ մշտական իրականություն էր կազմում: Բայց այդ բոլորը այժմ բոլորովին այլ լեզու առած են նրա համար:

Ահա մայրը: Քնքշասիրտ, զավակասեր, բարի: Զավակներին սիրելուց է, որ նա հաճախ ծեծվում է իր ամուսնուց: Արտասուքներն են նրա միակ բաժինը, բայց ավա՛ դ, աղի արտասուքները ե՞րբ են կարողացել աշխարհի վրա փրկել, դրությունը փոփոխել:

Մտնելով գյուղը, Ղազարոսն զգում է, որ այս աշխարհում ինքը ապրել չէ կարող: Աղբը, կեղտոտությունները, կոպտությունները, խավարն ու անասնականությունը հեղձուցիչ տպավորություն են գործում: Բայց որպիսի՞ հեզանք պատանու այդ զգացմունքների վրա. հայրը նրան ուղարկում է գյուղական աշխատությունների - տավար պահել, փայտ բերել և այլն:

Այդ հայրն էլ նույնն է, ինչպես առաջ: Մի լավ մարդ իբրև հասարակության անդամ, բայց եսամոլ բռնակալ իր տանը: Առանց հյուրի հաց չի ուտում, բայց իր երեխաներին սկլոր է պահում: Հավ չէ մորթում՝ իր երիտասարդական մեղքերը քավելու համար, բայց կնոջը ծեծում է: «Հայրս,- գրում է Ղազարոսը,- մի զարհուրելի մարդ է նաև իր հսկայական հասակով, իր բարկացկոտ և կնճռոտ դեմքով, իր ծանրաբարոյությամբ և մանավանդ իր կամակորոյթյամբ և այն մեծ համարմունքով, որ վաստակել է իր մասին»:

Եվ Ղազարոսը գնացել է, որ օգնություն ստանա նրանից՝ ուսումը շարունակելու համար... Եվ նա, իհարկե, մերժում է օգնել ոչ թե ժլատության պատճառով, այլ որովհետև ավելորդ է համարում: Ավելորդ է այնպիսի մեկին օգնել, որ շեղվել է ուղիղ ճանապարհից, որին ուսումը դարձնում է առնվազն անհավատ, խենթ:

Հոր և որդու մեջ ընդհարումը անխուսափելի է: Նա տեղի է ունենում, չէ կարող տեղի չունենալ: «Վեմն ապառաժի է հանդիպել,- ասում է Ղազարոսը:- Եթե Ստեփանը վեմ չլինի, նրա որդին էլ ապառաժ չէր լինի»: Մա շատ ճիշտ է:

Ընդհարումը սկսողը նույնիսկ հայրը չէ, վեմը չէ, այլ որդին՝ ապառաժը: Հայրը հանդարտ է խոսում, բացատրություններ է տալիս: Որդին հարձակողական դիրք է բռնում, դատապարտում է հոր հնապաշտությունը, տգետ հավատալիքները, ինքն է առաջ քաշում

«մարդագելի» առասպելը, որ այնքան տարածված է ժողովրդի մեջ և որ, ինչպես գիտեք, ասում է, թե մարդը գայլի մորթի հագնելով, դառնում է իսկական գայլ, մինչև որ մորթին խլվում է նրանից: Գուցե սա այլաբանական մի բարոյախոսություն է ժողովրդական փիլիսոփայության մեջ, բայց ժողովուրդը նրան հասկանում է բառացի մտքով, հավատում է, որ չար ոգիները այդպիսի դժվարություն են պատճառում մարդկանց:

Ղազարոսը ուզում է գտել առասպելը, ցույց տալ նրա իսկական նշանակությունը, ցույց տալ մանավանդ հակաբանական հանգամանքները, որոնք սուտ ու պատիր հասկացողություններ են կազմում: Հայրը պաշտպանում է հինը- և պաշտպանողի բնական հետևողությամբ գալիս կանգնում է այն եզրակացության, թե իրանք, հայր և որդի, միասին ապրել չեն կարող:

- Ես հիմա լավ ճանաչեցի քեզ,- ասում է Ղազարոսը,- քո գլուխը ծուռ ու մուռ գաղափարներ է լցվել, էլ ուղիղ մտքի, ուղիղ գաղափարի համար տեղ չի մնացել:

- Եղբայր,- պատասխանում է Ստեփանը,- որ դու հենց եղպես ես ճանաչել, դուրս ուրեմն իմ տանիցս, էլ ինձ մոտ մի՛ կենալ, վե՛ր կաց, վե՛ր կաց կորիր... Հակառակի պես որտեղից եկավ էլի քաջքերս մոդ արավ գլխիս, մաղուլ մեզ համար հանգիստ նստած էինք...

- Քաջքեր էլ ունի՛ս, ի՛նչ տեսակ գատեր են քաջքերը...

- Դե՛, հառամզաղա, դո՛ւրս, դո՛ւրս իմ տանից, գնա՛ կորի, էլ աչքիս չերևա...

Եվ Ղազարոսը, մի քանի զենքեր վերցնելով պատից, դուրս է գնում տանից: Արհամարհում է մոր արտասուքները, գնում է սարերն ու ձորերը ընկնելու:

Տոհմի արկածախնդրական ոգին է ծուլ-ծուլ եղել երիտասարդի մեջ: Հարկավոր էր մի այդպիսի շրջան էլ՝ բնավորությունը վերջնականապես կազմակերպելու համար:

Յոթ տարի տնեցին նրա թափառումները:

«Ես ընկա երկրիս օվկիանոսը ինչպես մի հեքիաթական աշխարհի մեջ, ինչպես մի առասպելական, այլ ոչ իրական կյանքի մեջ: Այդ կյանքի հետ ես բնավ ծանոթություն չունեի, դրսի կեղևն էի տեսել միայն և շատ հավանել, բայց չգիտեի, որ նա մի զարդարուն գերեզման է, չգիտեի, որ նրանում զարհուրելի գազաններ և միջատներ կան: Շարունակ յոթը տարի պտտվեցի ես այդ զգվարանումը»:

Հայրենագիտության գործնական դասեր: Ինչպե՞ս և ո՞ւր է նա շփվում հայրենի իրականության իսկականի, բուն արմատի հետ:

Այս շատ դժվար է ասել, որովհետև մեր թափառականը մի տեսակ հեքիաթական Սինդբադ է մեր գյուղական աշխարհի ծովում: Այսօր այստեղ, վաղը մի ուրիշ հեռու տեղ: Այսօր Լոռի, վաղը Շիրակ: Այսօր վարժապետ գյուղում, վաղը ծառայող Աղբուլաղի կապալառուի մոտ, որ ուտեստ է հայթայթում գորքերին: Այսօր որսորդ, վաղը աշուղ: Այսօր Լոռու անտառներում, վաղը կաթուղիկ հայերի գյուղում, ֆանատիկոս կաթուղիկ տերտերի հետ վիճելիս:

Շատ մանրամասնություններ Ղազարոս Աղայանը տվել է մանավանդ իր որսորդական կյանքի մասին: Ամիսներով լեռնային բնության զոգում է անտառաբնակ, հեռու մարդկանցից, տարված որսորդի արկածալից որոնումներով: Շփվում է մարդկանց հետ այնքան, որքան

հնարավոր է բոլորովին վայրենի, խոտեղենով ու վայրի պտուղներով չապրելու համար: Ահա և նրա հագուստը. «Նա ուներ վայրի վարազի հաստ կաշվից տրեխներ, արխալուղի փեշերքը հավաքած էր բրդե շավվարի մեջը, օսի չուխա ուներ հագին՝ փեշերքը վեր կապած, մի մեծ՝ թարաքյամի փափախ ուներ գլխին՝ ճակատի կողմը ներս ծալած: Վայրի այծի կաշվից մի պարկ ուներ շալակին՝ մեջը մի կտոր սև հաց և մի կտոր էլ թել պանիր: Ատրճանակը մեջքի կողմից գոտիկը խրած, խանչալը ձախ կողմից կախած, հրացանը ուսը գցած և մի հաստագլուխ թավարզին անունով մահակ ձեռքն առած»:

Մի վայրենի՞: Ո՛չ: «Առանձնությունը և՛ վայրենացնում է մարդուն, և՛ փիլիսոփա է շինում, - գրում է Ղազարոսը: - Արությունը (այսինքն՝ ինքը) չէ վայրենանում, բայց փիլիսոփա էլ չէ դառնում»:

Մի ավագա՞կ գուցե: Այսպես կարծողներ էլ կային, երբ տեսնում էին այդ անտառաբնակի բարձր հասակը, վառվռուն աչքերը, հանդուգն բնավորությունը:

Բայց նա, իհարկե, ավագակ էլ չէր:

Ի՞նչ էր ուրեմն:

Բնության մեջ կազմակերպվող մի բնավորություն, վայրենի, լեռնային անասելի մեծ բնության մեջ: Փիլիսոփա, ճգնավոր, բնագանցական մտքերով հափշտակած ասկետ դառնալ չէր թողնում նրա խառնվածքը: Չափազանց դյուրագրգիռ էր նա, չափազանց դյուրագգաց էր, և փիլիսոփայի պաղարյունություն չէր կարող լինել նրա մեջ: «Նրա բոլոր ուղիղ կամ խելոք ասած բաները մի սրտի փղձկուն էին, կիրք դարձած զգացողության արտահայտություն»:

Եվ այդ մարդը ընկերությունից զրկված, խոսակից չունենալով, ինքն իր հետ էր խոսում, ինքն իրանով էր ապրում:

Եվ նրան ղեկավարում էր լեռների, մույժ ձորերի, կուսական անտառների ահեղ ու սքանչելի բնությունը: - Ի՞նչ էր նա տալիս այդ մենավոր թափառականին:

Ալբերտի աստվածաբանության աշակերտից, իհարկե, այլևս ոչինչ չէր մնացել: Բայց կարճ ժամանակի ընթացքում Թիֆլիսի մեջ դեսից դենից հավաքած մտավոր պաշարը նստած էր նրա հոգու խորքում: Լեռնային բնությունը զարգացնում էր նրա ժառանգական հասկությունները: Իսկ հոգու խորքում նստած մտավորականը, գաղափարականը զարգացնում էր մեղմը, զգացողությունը, մարդկայնությունը:

Եվ գոյացավ երկվորություն կազմակերպվող բնավորության մեջ: «Բնավորությամբ երկու սեռերի մի խառնուրդ էր ներկայացնում, և այդ երկու իրար հակառակ կողմերը մերթ հաշտվում և օգնում էին միմյանց և մերթ կռվում և ընկճվում միմյանցից, նայած թե որտեղ, որ կողմն էր ավելի պետք, կամ որպիսի տրամադրություն ուներ հոգին... Նա մի գազան էր և միննույն ժամանակ մի սոխակ, գոռում էր գազանի պես և երգում սոխակի նման:

Պատահումները երբեմն այնպես է կրթում մարդու, որպես կարող չէ կրթել ոչ մի տաղանդավոր դաստիարակ. ո՞վ կարող է արհեստական կերպով տալ մեկին այն, ինչ որ միայն բնությունը կարող է տալ... Մտածող միտքը, զգայուն սիրտը միայնության մեջ, բնության գրկում, նրա մեղմ ու ահեղ երևույթների ազդեցության տակ՝ վերանում է մտքով և հափշտակվում մինչև երկինք, հմայվում, կախարդվում է և հոգով ու մարմնով անձնատուր լինում մի աներևույթ

գորության: Այնուհետև գիտակից ոչինչ չէ լինում նրանում, նա վարվում է ինչպես մի խենթ, բայց խելքը չկորցրած, այլ վերացրած, թոցրած դեպի վեր, դեպին բարձրը»: Այդ բնավորությունը, երկվոր, այրական և կանացի, կոպիտ ու քնքուշ, Ղազարոսը պատկերագարդել է մի վերին աստիճանի տիպիկ և գեղեցիկ միջադեպով:

Իբրև որսորդ, նա ընկերանում է Դսեղ գյուղացի Պողոսի հետ, որ նույնպես որսորդ է և Լոռու հարազատ զավակ: Ընկերակցությունը երկար է տևում, բայց պատահում է և գժտություն: Հետաքրքրական բույն այս է: Միմյանց դեմ են ելնում երկու լեռնաշխարհ. Պողոսի մեջ մարմնացած է Լոռին, Ղազարոսի մեջ՝ Ղարաբաղը: Վիրավորում են իրար գավառական հայրենասիրությունը: Մոտ է վայրկյանը, երբ գենքերը պիտի գործ տեսնեն: Բայց լռեցին խոհեմության է դիմում, ավելի լավ է համարում հեռանալ գժից:

Եվ ահա այդ գիժը կերպարանափոխվում է մի ակնթարթում: Նա գոջում է և հարկադրում է լռեցուն վերադառնալ, հաշտվել: Բայց ի՞նչ պայմաններով: Մարտնչող լեռնաստաններից ոչ մեկը չէ ուզում մյուսի մոտ գնացող լինել: Հաշտության գործը սկսող լինել: Արժանապատվության հարց կա: Եվ ոչ մի զիջում: Ի՞նչ անել: Միջոցը գտնում է Ղարաբաղը:

- Դե որ ըտենց ա,- ասում է Ղազարոսը,- ոչ դու արի ինձ մոտ, ոչ ես քեզ մոտ: Դու էլ վեր կաց, ես էլ: Դու դեպի ինձ արի, ես դեպի քեզ:

- Դե լավ, ըտենց անենք, դարաբաղցին անկոտրում կըլի: Ես մի ոտ... դե մի ոտ էլ դու առաջ դիր... ես երկու ոտ... հիմի մեկել ոտդ փոխի... ես իրեք... դե ասա՝ մեղա Աստծու...

- Ինչո՞ւ առաջ դու չես ասում...

- Չէ, առաջ դու պիտի ասես:

- Չէ, դու պիտի ասես:

- Ոչ դու, ոչ ես, մըտեղ ասենք...

- Մըտեղ ո՞նց ասենք, դե դու ասա, ես էլ քեզ հետ կասեմ:

«Վերջապես «մեղա Աստծու» ասելը գլուխ չէ գալիս,- շարունակում է Աղայանը:- Մերտ սիրով զգվում են միմյանց և համբուրում իրար շրթունքից և հետո լուռ ու մունջ իրանց տեղերը նստում»:

Մքանչելի է այս լեռնական պատկերը՝ իբրև արյուն ու խառնվածք բնորոշող:

Լեռը այսպես դաստիարակեց, կամ ավելի ճիշտ ասած՝ վերահաստատեց, ամրապնդեց այն, ինչ բերել էր Աղանց Վերդին Խաչենի անտառապատ լեռներից և տվել էր իր ժառանգներին:

Բայց ես ասացի, որ Թիֆլիսում ստացածն էլ մնացել էր այս խաչենցու սրտի խորքում: Եվ ճիշտ, մենք տեսնում ենք այս որսորդին ոչ որսորդական դերում: Նրա մեջ հզոր շեշտերով խոսում է հասարակաց ցավը: Անտառների խորքից նրան դուրս է քաշում հասարակական զգացմունքի ջիղը, և նա գնում է Լոռու Հայդարբերգ գյուղը՝ մի շատ անվանի աշուղի հետ մրցելու համար:

Գիտենք արդեն, որ Ղազարոսը կատարելապես յուրացրել էր աշուղական արվեստը: Գիտենք

նույնպես, որ նա ուզում էր բարեփոխել այդ արվեստը, շինծու, արհեստական, տգետ բովանդակությունից ազատել նրան, դարձնել բնական, պարզ, ազգայնացրած: Այդ նպատակով էլ նա «բաս է մտնում» աշուղ Շոհիլայի հետ: Եվ հաղթում է նրան, սազը ձեռիցն առնում: Ինչո՞ւ վ է հաղթում: Ոչ թե միայն լուծելով աշուղի առաջարկած այլաբանական հարցերը: Այդ անում է նա աջողությամբ: Եվ երբ հերթը իրեն է գալիս, նա հարցնում է հռչակված աշուղից. «Ո՞վ է հիմքը դրել հայոց ազգության»:

Եվ պապանձվում է աշուղը, նա, որ այնքան հմուտ էր թուրքական արվեստի բոլոր մանվածապատ կանոններին ու գաղտնիքներին:

Ազատել հային կույր ու հին նախապաշարմունքից, զարթեցնել նրա մեջ նոր ոգի և ազգային գիտակցություն- ա յս էր և ա՛յս կարող էր լինել այն ժամանակների կրթական կուլտուրական առավելությունը: Դա առաջին և գլխավոր նպատակը չէր Աղայանի թափառումների մեջ, բայց կարևոր դեր էր կատարում:

Նույն այն նպատակով նա վեճի բռնվեց հայ կաթոլիկ գյուղի քահանայի հետ: Գնացել էր այդ գյուղում դպրոց բաց անելու, բայց այնպիսի խստությամբ առաջ տարավ իր վեճը քահանայի հետ, որ հետո ինքն զգաց. թե վարժապետ դառնալ չէ կարող: Մարդկանց հետ խոսելն էլ մանվածապատ արվեստ է: Ո՞վ էր տվել այդպիսի լեզու լեռան որսորդին: Հարազատ հորը չխնայողը կարո՞ղ էր «պալիտիկա» ունենալ մի մոլեռանդ հոգևորականի մոտ:

Հայոց պատմությունից մի դաս է նա տալիս և դստեղցի որսորդ Պողոսին: Եվ տեսնում է, թե ինչ զգացմունքներ է հարուցանում հայրենի անցյալը լեռան կոպիտ ու անտաշ զավակի մեջ:

Բայց ու՞ էր սկսվել Պողոսի դաստիարակությունը: Ղազարոսը այլևս ժամանակ չունեիր:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

I

Տպարանական բանվոր

Յոթը տարվա թափառումներից հետո Ղազարոս Աղայանը դարձյալ ընկնում է կուլտուրական միջավայր: Դարձյալ Թիֆլիսում է նա:

Այս անգամ նա վերջնականապես կազմակերպված մի բնավորություն է, մի ամբողջացած ֆիզիկական և բարոյական ձուլվածք: Վերջացել է «գծությունների» շրջանը: Նա կայչում է կյանքին՝ այլևս նրանից չբաժանվելու, նրան արհամարհանքով չլքելու համար: Եվ մենք կարող ենք նկարել կյանքի և աշխատանքի շեմքով նոր ներս մտնող այդ նոր մարդուն:

Նախ՝ ֆիզիկական կազմվածքը:

Արտաքինով - ճիշտ իր հայրը, «ինչպես մի խնձոր կես արած»: Եվ նրա պես ուժեղ: «Ես շատ ուժեղ էի և օրինավոր ըմբիշ,- ասում է նա:- Եթե բանն ուժի ընկներ, գրաշար ժամանակս ես այնքան ուժեղ էի, որ «Կռունկի» բոլոր աշխատակիցները միասին հավաքված կարող չէին կուռս ոլորել... Վազելում, ցատկելում, մազլցելում և մենամարտելում միշտ հաղթող էի

հանդիսանում և ոչ հաղթվող»:

Ղազարոսը բաց է անում և իր հոր հոգին, և մենք տեսնում ենք ըմբիշի քաջարի կրծքի տակ մի անսահման հավատացող հոգի: Նա մեծ հավատ ունի: Եվ սա մեծագույն ապահովությունն է, որ կյանքի մեջ այդ եփված, ամրապնդած կազմվածքը ինքնավստահ առաջ կերթա, ինքն իր համար ճանապարհ բաց կանի՝ հույսը դրած իր սեփական ուժերի վրա, չարքաշությունների և գրկանքների մեջ բովված իր կազմվածքի, անվհատ ինքնագործունեության վրա: Այդ հավատը՝ մաքուր, բյուրեղային, զուտ մանկական-միամիտ, թովիչ ու ապշեցուցիչ, անփոփոխ մնաց Աղայանի մեջ մինչև վերջին շունչը:

«Շնորհակալ եմ Աստվածանից,- ասում է նա,- որ ինձ շատ շուտ մոտեցրեց իրան և ազատելով ինձ ամեն տեսակ բարեխոսներից և չարախոսներից, ուղղակի իր հովանավորության տակ առավ, որում կամ և մնամ ցմահ և հետմահու... Ես իմ բոլոր գոյությամբ այս հավատի արդյունքն եմ, չեմ ունեցել մի այլ խնամակալ և հովանավոր՝ բացի Աստվածանից»...

Այնուհետև Աղայանի մեջ տեսնում ենք մանկությունից ի վեր զարգացող ժառանգական և ինքնուրույն հակումներ, սեր դեպի ուսումը, որ մոռացնել է տալիս նույնիսկ իր առաջին սիրահարությունը, գիտության և ճշմարտության որոնում, շիտակություն, որ հասնում է նույնիսկ լեռն ական խաչենցու կոպտության, կովասիրության, դիմացկունության:

Սարերից ու անտառներից քաղաք եկած երիտասարդը բանվոր է դառնում, նա գրաշար է և ձուլարանի աշակերտ Համբարձում Էնֆիաջյանի տպարանում, որ այնքան խոշոր դեր է կատարել մեզանում:

Ինքը Ղազարոսն էլ լավ չէ հասկանում, թե ինչպես կարող էր կատարվել այսպիսի մի ծայրահեղ կերպարանափոխություն: «Ձարմանալի կթվա շատերին,- գրում է նա,- թե այդ աստիճան վայրենացած մեկը ինչպես է վիզը ճկում ձուլողի և գրաշարի ծանր լուծի տակ, անտառի ազատ արծիվը ինչպես է կամովին վանդակի մեջ ձգում իրան»: Եվ ավելացնում է. «Թո՛ղ ավելի մեծ հոգեբանները մեկնաբանեն այդ երևույթը, իսկ ես այսքան կասեմ միայն, որ այդ վայրենության մեջ ես այնպես էի, ինչպես մի կորուստ փնտրող»:

Մենք տեսանք, որ այս միանգամայն ճիշտ է: Որոնող, փնտրող- այս է Աղայանի բնավորության հիմնաքարը: Եվ երբ կա այս հիմնաքարը, առանց մեծ հոգեբանների միջամտության էլ կարելի է հասկանալ մեր առաջ դրած խոշոր երևույթը:

Պատահաբար այդ ամենի բնավորությունն ընկնում է մի միջավայր, ուր նրա մշտատև որոնումների համար առատ նյութեր կան: Եվ ամենի բնավորությունը իրան հատուկ խանդավառ հափշտակությամբ կաչում է այդ նյութերին, սանձահարվում է ու կանգ առնում: Հեքիաթական Քյարամը գտել է իր տենչացած սիրուհու, իր Ասլիի հետքերը: Եվ նա այլևս չէ կարող հեռանլ այդ տեղերից, ուր հետքերն են երևում: Նա պիտի գտնե իր սիրուհուն ամբողջապես:

Առանց երկմտության կարելի է ասել, որ մի ուրիշ, սովորական, անհայտ, զուտ առևտրական տպարանում Ղազարոս

Աղայանը երկար չէր դիմանա: Ձուլողի և գրաշարի ծանր աշխատանքը, առանց գաղափարական տեսիլների, լոկ իբրև արհեստ, չէր կարող ընկճել Լոռու սարերից իջած

ամեհի բնավորությունը:

Բայց Էնֆիաջյանի տպարանը մի հասարակ արհեստանոց չէր: Այդտեղ էր խփում Թիֆլիսի հայ մտավորականության զարկերակը: Ինքը Էնֆիաջյանը ոչ միայն գրասեր կուլտուրտրեզեր էր, այլև գրող, մեկենաս նույնիսկ: Այդ տիպը վաղուց անհետացել է մեզանում:

Եվ Թիֆլիսը այլևս այն չէր, ինչպես տեսել էր նրան Աղայանը առաջին անգամ, երբ մոնթությունից ազատվեց:

Այժմ, 60- ական թվականների սկզբին, այստեղ կար գաղափարապաշտ մտավորականություն, ինտելիգենցիա, կար գրականություն, հրապարակախոսություն, կային հասարակական հրատապ խնդիրներ: Ներսիսյան դպրոցի և պետական գիմնազիայի առաջադեմ աշակերտներից կազմվել էին թարմ ուժերի շրջաններ, որոնք տաղանդով և ավյունով աշխատում էին զարթեցնել հասարակական միտքը, ինքնուրույնացնել հայկական կյանքը նոր ժամանակների պահանջների համեմատ:

Այդ թարմ ուժերը համախմբված էին գլխավորապես «Կռունկ» ամսագրի շուրջը, որ տպվում էր Էնֆիաջյանի տպարանում, որի հրատարակիչը Համբարձում Էնֆիաջյանն էր, իսկ խմբագիրը՝ մի բազմաշխատ և վառվռուն թուրքահայ, Մարկոս Ազաբեկյանը: Այդտեղ էին գրում և աշխատում էին գյուղից դուրս եկած Գարեգին Մուրադյանը (հետո Մելքիսեդեկ արքեպիսկոպոս), Պերճ Պռոշյանը, նույնպես մի շատ ինքնատիպ և նշանավոր գյուղական բնավորություն, որ իբրև գործիչ՝ Աղայանի չափ ամբողջացած մի հոգեբանություն էր, բայց տարբերվում էր նրանից և շատ բաներով, իբրև բոլորովին ուրիշ աշխարհագրական միջավայրի արդյունք:

Այդտեղ աշխատում էին և Ալեքսանդր Երիցյանը և Գևորգ Տեր-Ալեքսանդրյանը, որոնք ոչ միայն գրողներ ու հետազոտողներ էին, այլև կազմել էին հայ գիմնազիստների շրջան, որ ճրի ուսուցչություն էր անում քաղաքի ետ ընկած մասերում, դասախոսություններ էր կարդում, գրքեր էր հրատարակում: Ավելացնենք այս բոլորի վրա և հայկական նորածիլ թատրոնը, որ անասելի թարմություն էր մտցրել հասարակաց մտքի մեջ, և որ իր շուրջն էր հավաքել երիտասարդ եռանդոտ ուժերի մի պատկառելի թիվ:

Մի խոսքով՝ Ռուսաստանի համար հավետ անմոռանալի վաթսունական թվականները ծաղկաբույր գարուն էին բացել և Թիֆլիսում:

Ռուսահայ միտքը արդեն գունավորումներ էր ստացել և այդ գունավորումները արդեն ներկայացվում էին պարբերական մամուլի օրգաններով:

Ծայրահեղ ձախակողմը Մոսկվայի «Հյուսիսսփայլն» էր: Հակառակ ծայրը, աջակողմը, հրատարակվում էր միննույն տեղը, միննույն տպարանում՝ «Ճռաքաղը»: Մրա հարազատ եղբայրակիցներն էին Թեոդոսիայի «Մասյաց աղավնին» և Թիֆլիսի «Մեղու Հայաստանին»:

Երբևիցե, երբ կգրվի մեր գրականության պատմությունը, մեր առջև կբացվի գրական մի հզոր ազդեցություն, մի ամբողջ դպրոցի երկարատև և շատ հզոր աղդեցությունը ամբողջ հայության վրա: Դա Մխիթարյանների դպրոցն է՝ գերազանցորեն կրոնական- ազգասիրական: Իր կրոնական իդեալներով Մխիթարյան դպրոցը կաթոլիկության ջերմ պաշտպանն էր, և նրա

քարոզությունները ոչ միայն համահայկական համակրանք չէին գտնում, այլև առաջ էին բերում դիմադրություն և բանակոչվներ մյուս դավանություններին պատկանող հայերի կողմից:

Ընդհանուրը, համազգայինը Մխիթարյան դպրոցի ազգագրությունն էր: Նա հիմնվում էր բացառապես հայ ազգի պատմության վրա, որ և ներկայացնում էր իբրև անսպառ աղբյուր փառքի, պարծանքի, ինքնագոհության: Մխիթարյանների ազդեցությունը սաստիկ էր մանավանդ թուրքահայերի վրա: Եվ որովհետև թուրքահայերը ավելի առաջադեմ էին, քան ռուսահայերը, ուստի ազդեցություն ունեին և վերջիններիս վրա:

Այդ տեսակ պատմությունը-ազգային սնապարծությունը և շովինիզմը կերակրող պատմությունը կատարելապես ողողել էր ամեն ինչ և՛ թատերական ու բանաստեղծական գրականությունը, և՛ մամուլը, և՛ դպրոցը:

Եվ ահա այդ ծայրահեղ միակողմանի ուղղության, ոգևորության դեմ առաջին անգամ ռեակցիա է կազմում Ռուսաստանի դպրոցներում կրթված հայ երիտասարդությունը: Չհերքելով միանգամայն պատմության նշանակությունը, հեռու չմնալով նույնիսկ այդ պատմության գեղեցիկ կողմերով ոգևորվելուց, նա առաջ քաշեց իրական կյանքի պահանջները, այժմեության հարցերը: Պատմության մատակարարած ինքնագոհությունը, մեծամտությունը և սնապարծությունը միայն օրորում, քնացնում էին հասարակաց միտքը, նրա խավար հետամնացությունը: Կյանքի երևույթների քննադատությունը առաջ բերեց և պատմության քննադատությունը: Եվ կծու, վիրավորական էր նրա լեզուն: Նա պահանջում էր վերանորոգություն, լիովին վերածնություն հասարակական գաղափարների և նրանց գործոնները կազմող եկեղեցու, գրականության, դպրոցի մեջ:

«Հյուսիսափայլը» ռուսահայ ինքնատիպ, նոր կազմակերպվող, ռուսական հզոր ազդեցության տակ դաստիարակվող մտավորականության օրգանն էր: Անողոք, խստապահանջ, մերկացնող և խարազանող:

Նրան դիմադրում էին երեք դաշնակիցները, Թիֆլիսի «Մեղուն» դիմադրական եռանդի կողմից «Մայայց աղավնիի» չափ ուժեղ Է: Բայց իբրև գրական երևույթ՝ շատ խղճուկ է: Շատ քիչ են նրա մեջ երևան գալիս վարժ գրողներ, սովորական տեսքն է՝ գրական բթամտությունը:

«Կռունկը» գրական արժանիքների կողմից անհամեմատ բարձր է իր բոլոր ժամանակակիցներից: Իսկ հրապարակախոսական ուղղության տեսակետից միջին տեղն է գրավում «Հյուսիսափայլի» և «Մեղվի» մեջ: Մարկոս Աղաբեկյանը Մուրադյան վարժարանի աշակերտ էր, ուրեմն ամբողջապես Մխիթարյան գրական ազդեցության արդյունք, բայց մի ինքնուրույն առանձնահատկությամբ: Նա և նրա ընկեր Մատթեոս Մամուրյանը հավատարիմ մնալով լուսավորչական եկեղեցուն, Մխիթարյանների կաթոլիկական պրոպագանդայի ուխտյալ հակառակորդներ հանդիսացան և, իբրև այդպիսին, չափազանց բարձրացրին ազգային եկեղեցու պատմական և այժմեական նշանակությունը:

Աղաբեկյանը մի սերտ կապ հաստատեց հայության երկու անջատված խոշոր մասերի՝ արևմտյան և արևելյան, մեջ: Եվ սա մի չափազանց խոշոր երևույթ է մեր հասարակական կյանքի պատմության տեսակետից: «Կռունկը» միացնող օղակը հանդիսացավ, և ազգային կյանքի հորիզոնը ընդարձակեց Բոսֆորի ամբարից մինչև Կասպից ծովի փերեր:

Այնտեղ հաճախ երևում էր տաղանդավոր և բազմավաստակ Մատթեոս Մամուրյանը: Այնտեղ մանրամասն նկարագրություններով հանդես էին գալիս թուրքահայերի այդ

Ժամանակվա վերին աստիճանի հետաքրքրական և նշանակալից ազգայնական շարժումները:

Ազգային ինքնագիտակցության մի կրակարան հանդիսացավ «Կռունկը»: Մարկոս Աղաբեկյանը բավականաչափ զարգացած մի մարդ էր, որպեսզի կարողանար Այվազովսկու, Չերքեզյանի, «Մեդվի» լուսավախության և անհամբերությունների կողմնակից լինել: Բայց նա չէր սիրում մերկացումներ, հարձակումներ, ազգային արատների դեմ, թեև նա էլ լույս և առաջադիմություն էր կանչում: Նրա ազգասիրությունը ավելի լուսավորված էր, ավելի մեղմամուշ, սենտիմենտալ: Հինգերորդ դարը «Կռունկի» համար մի մեծ պաշտամունք էր, հափշտակության առարկա, ինչպես և Մխիթարյանների համար: Իր էությանը, իր դավանանքներով նա ավելի մոտ էր «Մեդվին», բայց «Հյուսիսափայլի» կողմնակիցն էլ էր մի քանի դեպքերում, թեև հակառակ էր նրա այնպիսի առաջարկություններին, որոնք ծայրահեղություն էին համարվում այն ժամանակ:

Ահա այս «Կռունկի» շրջանումն է Ղազարոս Աղայանը իբրև տպարանի բանվոր: Գործի գլուխ անցած երկու անձնավորություններն էլ՝ Համբարձում Էնֆիաջյան և Մարկոս Աղաբեկյան, ամենագեղեցիկ ազդեցություն են անում գրաշար Ղազարոսի վրա իբրև «լավ մարդիկ», նրան խրախուսում են, և Ղազարոսը իր ինքնակենսագրության մեջ խոսք չէ գտնում նրանց բարերար ազդեցությունը դրվատելու համար: Մարկոս Աղաբեկյանը, քնքշասիրտ և բարի մի մարդ, Աղայանի մենտորն է հանդիսանում, նրան խորհուրդներ է տալիս, վառ է պահում նրա մեջ մշտական որոնումների՝ ուսման և գիտության տենչանքը: Նույնպիսի սքանչելի տպավորություն թողնում է նրա վրա նաև ժամանակի նշանավոր և ազդեցիկ մարդը՝ բժ. Յուրի Հախվերդյանը⁹, «Մայաթ-Նովայի» հմուտ հրատարակիչը: Եվ ահա թե ինչ ընդարձակ, նոր, գեղատեսիլ աշխարհ էր Աղայանին առել իր մեջ: Ահա թե որքան քնքուշ, սրտագին թելերով նա կապվեց գրական-մտա վորական այն շրջանին:

Թիֆլիսի հայության համար մի ամբողջ ազգային երևույթ էր Խրիմյան Հայրիկի ճանապարհորդությունը դեպի Կովկաս: Հայաստանցի պարզ վարդապետի հրաշունչ, զգլխիչ հայրենասիրական քարոզները Թիֆլիսի եկեղեցիներում ցնցող-հեղափոխող էին: Աղայանն էլ ենթարկվեց Խրիմյանի հմայքին: Ահա ինչ է գրում նա.

«Հայրիկի քարոզը ես առաջին անգամ լսեցի Մեյդանի ս. Գևորգ եկեղեցումը: Կանգնած էի առջևի կարգումը: Դեռ չէի տեսել Հայրիկի պատկերը: Երբ որ բարձրացավ բեմի վրա և հայացքը ձգեց ժողովրդի վրա, դեռևս ոչինչ չխոսացած՝ սուկ այդ հայացքը ինձ վրա մի չլսված տպավորություն գործեց: Մեծն Ներսես, Սահակ Պարթև և սուրբ Մեսրոպ վայրկենապես պատկերացան երևակայությանս մեջ իբր կենդանացած և առջևս կանգնած: Միտոս լցվեց, բուկս խեղդվեց, քիչ մնաց բղավեմ- վա յ, օգնեցե՛ք, մեռա... Բայց ամենայն ուժովս զսպեցի ինձ և տեղս ու տեղս չորքեցի, գլուխս դրի գետնին երկու ձեռքիս մեջ և խեղդված հեկեկանքով հորդ արտասուք թափեցի: Նա սկսեց խոսել, բայց ես չէի իմանում ոչինչ, իմ հոգին իր բոլոր զգացումներով թռել էր Հայաստան...»:

Այս գերագույն էքստազը և՛ հատկանշական է, և՛ հասկանալի: Նա ցույց է տալիս, թե որպիսի բուռն, փոթորկային հույզերով էր Ղազարոսը տպավորությունները յուրացնում: Այդ

⁹ Գևորգ Ախվերդյանը հանդես է եկել նաև այս անունով (ծանոթ.կազմողի)

միանգամայն հարազատ է նրա բնավորության, նրա սրտի և հոգուն: Խրիմյան Հայրը հուզված, հափշտակված ունկնդիրներ շատ է ունեցել: Բայց այսպիսի մի ուրիշ ունկնդիր հավանական է, որ չէ ունեցել: Հայ հայրենիքը, հայ պատմությունը Աղայանի համար ս. Գևորգ եկեղեցում հանկարծակի ծնված տեսիլներ չէին: Ինչպես տեսանք, սքոլաստիկայի կապանքներից ազատող առաջին թարմ և հափշտակիչ գաղափարները հայ հայրենիքն ու հայ պատմությունն էին, և այս նա ցույց է տալիս Լոռու անտառներում անգամ: Այստեղ, եկեղեցում, հանձին Խրիմյանի Աղայանը տեսնում է իր մտապատկերների կոնկրետ թանձրացումը: Եվ հասկանալի է, որ հույզերը այնքան բուռն ու սանձակտոր էին: Ժամանակը ամբողջովին հայրենասիրական, «Կռունկի» դպրոցը ամբողջովին այդ հայրենասիրության քնարերգություն

«Ահա այս ժամանակը,-ավելացնում է Աղայանը,- իմ առաջվան ցավերի վրա ավելացավ և այս ցավը և ինձ համար անբուժելի դարձավ: Աստվածասիրություն, հայրենասիրություն և ուսումնասիրություն երրորդություն պես միացյալ ուժով տիրեցին իմ ամբողջ բնությանը, այլևս ուրիշ զգացումների տեղի չտեվին»:

Հայրենասիրության «անբուժելի ցավն» էր, որ ապագայում նրան, ծերության հասակում, բուռն և միամիտ ոգևորությամբ մտքրեց թուրքահայ հեղափոխության մեջ և աքսոր ուղարկեց նրան:

Աղայանի բնավորության տիրած երրորդության վերջին անդամը՝ ուսման տենչը, պակաս կրակոտ չէր: Իր մի ուրիշ աշխատության մեջ նա ասում է, որ, տեսնելով գիմնագիան վերջացրած հայ երիտասարդների գործունյան շրջանը, ասում էր ինքն իրեն. «Ա՛ իս, ե՞ ըբ կլինի, որ ես էլ սրանց չափ բան գիտենամ»:

Այս հառաչանքը, այս ցանկությունը մի գրաշար բանվորի ամբողջ անօգնականությունն էին ցույց տալիս: Ո՛վ է տվել... Ինչպե՞ս կարելի է, որ վառ ցանկությունը հառաչանքների աշխարհից դուրս գա, իրականանա:

Իսկ Մարկոս Աղաբեկյանը շարունակ խորհուրդ է տալիս նրան գնալ մայրաքաղաք, այնտեղ սովորել, այնտեղ ուսում ձեռք բերել: Համբարձում Էնֆիաջյանը, ընդհակառակը, խրատում էր նրան ետ կենալ այդ տեսակ դիտավորությունից: Խոստանալով ամեն հարմարություն տալ Թիֆլիսում՝ պատրաստվելու, ուսում առնելու համար:

Ղազարոսին ավելի հափշտակողը Աղաբեկյանն է: Իսկ նա ծարունակ ասում է իր Ղազրիկին. «Գնա, Տերը քեզ հետ կլինի միշտ: Ինչ որ այնտեղ կսովորես միայն տեսնելով ու լսելով՝ այստեղ ամենալավ վարժապետից անգամ չես կարող սովորել»:

Եվ այս միտքը հաստատվում է Ղազարոսի մեջ: Նա շատ էր ուզում հնալ Վարագի վանքը, մտնել Խրիմյանի աշակերտների շրջանը, բայց թե՛ իր ունեցած ուսումն էր քիչ համարում և թե՛ իր հմտությունը տպարանական արհեստի մեջ: Այս վերջին հանգամանքն էլ ձգում էր նրան դեպի հեռավոր հյուսիս:

Բայց մենք չմոռանանք Աղանց Ստեփանին:

Այն օրվանից, երբ «անառակ որդին» Լոռու սարերից եկել էր Թիֆլիս և գործով էր զբաղված, ստեփանը հաշտվեց նրա հետ:

-Փառք իմ ստեղծողին, որ քեզ ջուր ու կրակ գցելուց հետո վերջապես օրինավոր մարդ շինեց,-
ասում է նա:- Ապրես, որդիս, ապրես, հիմա կարող եմ ասել, որ իմ հարազատ ծնունդն էս, իմ
սիրելի զավակս: Ես էլ քիչ դառն օրեր չեմ քաշել, էս էլ գծություն շատ եմ արել, բայս դու չափն
անցկացրիր, այնպես որ էս չէի կարող ուրիշ կերպ վարվել, ուրեմն ներելի է և իմ վարմունքս
դեպի քեզ:

-Իհարկե ներելի է,- ասացի,- հա՛յր: Ամեն բանի մեջ Աստուծո մատը կա, եթե դու այնպես
չվարվեիր, էս էլ այսպես չէի դառնալ կամովին:

Խեղճ Ստեփանը, հարկավոր է, որ այս անգամ «խեղճ» անունը հատկացնենք նրան, չգիտեր,
որ իր որդին մինչև այդ դեռ իսկապես չափը չէր անցկացրել: Չափը անցկացնելը նա դեռ պիտի
տեսներ...

II

Հյուսիսում

1862-ի ամառը Թիֆլիսից փոստի կառքով դեպի Վլադիկավկազ ճանապարհ ընկան երկու
երիտասարդներ: Մեկը Աղայանն էր, մյուսը՝ նրա մտերիմ ընկեր Միքայելը, նույնպես
գրաշար:

Գնում էին Ռուսաստանի մայրաքաղաքները ուսում և արվեստի կատարելագործություն
որոնելու:

Այդ ճանապարհով նրանցից առաջ հարյուրավորներն էին գնացել, նրանցից հետո
հազարավորներն էլ գնացին: Բայց ոչ ոք նրանց պես չէր: Ոչ ոք չէր պատրաստել նրանց, ոչ ոք
չէր օգնել: Եվ նրանք գնում էին այնքան հեռու և հույսները միայն իրանց բանվորական
բազուկների վրա դրած: Նրանց գրպանում միայն 75 մանեթ կար:

Ղազարոսը ինչ որ աշխատում էր տպարանում, տալիս էր իր հորը: Եվ ահա նա մի օր
հայտնում է նրան իր նպատակը, խնդրում է իր աշխատանքը իրան տալ:

Որդու դիտավորությունը ապշեցնում է հորը: Ոչ Վերդին, ոչ ինքը՝ Ստեփանը, այդքան հեռու
չէին գնացել, գծությունը այդ աստիճանին չէին հասցրել: Եվ ընդդիմացավ հայրը, սկսեց
խնդրել որ Ղազարոսը ձեռք վերցնե այդ մտքից: Մայրն էլ, որ միշտ պաշտպանել էր նրան, այս
անգամ նույնպես դեմ է այդ հեռավոր պանդխտության: Լաց է լինում, աղաչում է չգնալ:
Որդին սկսում է բացատրել, բերելով այնպիսի փաստեր, որոնք շատ համոզիչ պիտի լինեին
շինականի համար: Նա ասում է, որ իր ունեցած ուսումով ոչինչ չի կարելի անել և միայն
Ռուսաստանում կարելի է այնքան սովորել, որ կարգին ապահովված մարդ կարելի է դառնալ:
Այն ժամանակ ծնողներն էլ կազատվեն գյուղական ցավերից ու տանջանքներից: Դեռ
մանկությունից Ղազարոսը մինչև հոգու խորքը վրդովվում էր, տեսնելով մովրդների,
յասատվների գործ դրած բռնությունները գյուղացիների վրա, տեսնում էր, թե ինչպես էին
ծեծում, ինչպես էին խլում-տանում: Ստեփանը մի տարի գրկվեց վար անելու
հնարավորությունից, որովհետև նա հարկավոր էր մովրդվին և ակամա, բռնադատված
ապրում էր նրա մոտ, հեռու իրանց գյուղից, որպեսզի թարգմանի դեր կատարե, օգնե
մովրդվին գողեր գտնելու և այլն:

Ահա այս տանջանքների վերացումն էր խոստանում Ղազարոսը: Բայց նրա դիտավորությունը չափազանց անօրինակ էր, ճանապարհորդության նպատակակետը չափազանց հեռու էր, և ծնողները չհամաձայնվեցին:

Այսպես էին և Միքայելի ծնողները: Ու տեսնելով, որ ասելով ոչինչ չի դառնա, երկու ընկեր ծախեցին իրանց ունեցած-չունեցածը, և ահա գնում են:

Մինչև Վլադիկավկազ նրանք սովորական ճանապարհորդներ էին: Բայց այնտեղից սկսվում էր նրանց արկածալից ողիսականը: Եվ մենք անշուշտ կասեինք, թե Ղազարոսի մեջ էլի գլուխ է բարձրացրել, և այս անգամ ավելի բուռն կերպով, արկածախնդրական թափառումների սերը, եթե չտեսնեինք նրա առջև որոշակի դրված նպատակ, ուղիղ ճանապարհ: Փոստային սայլակը այլևս երկու ընկերների համար անմատչելի մի շոայլություն է: Եվ նրանք շարունակում են ճանապարհը բեռնակիր քարավանների հետ, ոտով կամ բեռնակիր սայլերի վրա նստելով:

Չարքաշ, ուղղակի դաժան տեղափոխություն: Բայց մեր երիտասարդները սովոր են: Միքայելը անգին հատկություններով օժտված մի համեստ մարդ է, որ տանում է ամեն մի գրկանք առանց մի ծպտուն հանելու: Իսկ Ղազարոսը նրանից ավելի եփված է: Ահա նա պատմում է մի միջադեպ, որ ուղղակի աննման է նրան բնորոշելու համար: Քարավանը բաղկացած է երեսուն բեռնակիր միաձի սայլերից(պովոզկա): Գլխավորն է մի հսկա միականի ռուս, որին դուր չեն եկել երկու հայ երիտասարդները և որ հենց այդ պատճառով նրանց ծաղրում է, արհամարում է «արմյաշկա» է ասում, շուտ-շուտ հրնդում է: Ղազարոսը վերջապես դուրս է գալիս համբերությունից: «Մեկանգամ էլ,-ասում էնա,- երբ պիտի մոտովս անցներ, ես պատրաստվեցա, և հենց ուզեց հրնդել, ես այնպիսի մի զարկ տվի ոտքովս, որ նա բերանքսիվայր փովեց գետնի վրա: Նա վեր կացավ և ուզեց բռնել ինձ, բայց ես սպառնացի ասելով.«Չմոտենաս, եթե ոչ՝ խանչալս փորդ կկոխեմ: Ուզում ես ուժդ փորձել, ես պատրաստ եմ, առաջներիս դվորումը կոխ կենանք, տեսնենք ով ում կհաղթե»: Այդպես էլ համաձայնություն է կայանում: Եվ ահա տեսարան: Իջևանում հավաքվել են բոլոր սայլապանները, նրանց մեջ Ղազարոսը կոխ է բռնել ռուսի հետ: Այդ գոտեմարտը նա նկարագրում է իրեն հատուկ գրավիչ, միամիտ պարզությամբ: «Ես չգիտեի, թե ռուսներն ինչպես են կաչում: Վրաստանի սովորությամբ երկու ձեռքով խաչմերուկ բռնեցի օձիքից և աջ ծունկս հանկարծ գետնին խփելով՝ ուսիս վրայով մեր հասկային կլոխպուզ արի այնպես, որ առաջ գագաթը դիպավ գետնին, հետո մեջքի վրա փովեց գետնին ահագին թրմփոցով: Սարսափելի էր հարվածը, բայց վեր կացավ տեղից և բողբոջեց, թե այդ սատանություն է և ոչ կաչել. Պետք է կաչել իրանց օրենքով»:

Գոտեմարտը նորից սկսվում է, այժմ արդեն ռուսական եղանակով: Ղազարոսը նորից տապալում է ռուսին: Մա վեր է կենում և սկսում է կռիվ: «Նա ինձ խփեց, ես՝ իրան, բոլոր ռուսներն իրար խառնվեցան և բոլորն էլ շների պես թափվեցին վրաս, որ զգոզեն: Այդ միջոցին Միքայելը՝ չգիտեմ որտեղից՝ ճանկ գցեց մի ահագին մահակ և տուր թե կտասս՝ մեկ սրան և մեկ նրան»:

Կռիվը, որ սպանությամբ պիտի վերջանար, ընդհատվում է հանդիսատեսների միջամտությամբ և երկու ընկերները մի ուրիշ սայլ վարձելով, իսկույն ճանապարհվում են Ստավրոպոլ:

Ռոստովում նրանց փողը հատում է: Բայց նրանք երկյուղ չունեին, թե քաղցած կմնան կամ կկորչեն անծանոթ աշխարհում: Արհեստավորներ են, և ընդհատում են ճանապարհորդությունը, մինչև որ փող կվաստակեն:

Գնում են Թեոդոսիա, որ Գաբրիել Վարդապետ Այվազովսկին Խալիֆյանի հաշվով տպարան էր բացել և հրատարակում էր «Մասյաց աղավնին»: և զանազան գրքեր: Ընդունվում են այդ տպարանում, աշխատում են ամբողջ ամառը և շարունակում ճանապարհը դեպի հյուսիս: Շարունակում են, ինչպես կարող էին շարունակել իրանց աշխատանքի մի մասը ետ դրած բանվորները: Երկաթուղիներ չկային, փոստային երթևեկությունը անմատչելի է բանվորական գրպանին:

Ու գնում են դարձյալ նույն միջոցով, ինչպես գնացել էին Վլադիկավկազից Ռոստով: Դարձյալ բեռնակիր սայլերի քարավան, դարձյալ ճանապարհի մեծ մասը ոտով:

Ղրիմից նրանք ճանապարհ են ընկնում մրգեր տանող սայլերի հետ՝ սեպտեմբերի սկզբներին:

Մոտ երկու և կես ամսվա ճանապարհ կար նրանց առջև: Ռուսական ստեպների (դաշտավայրերի) անծայր տարածությունը՝ միանման, տափակ, ձանձրացուցիչ, ճանապարհների ուղղությունը ցույց էին տալիս տեղ-տեղ դարսած քարերը: Բայց և այդպես, ռուս սայլավարը մի գիշեր կորցրեց ճանապարհը և սկսեց հակառակ ուղղությամբ դեպի հարավ գնալ: Աստղերն էին ուղղություն ցույց տալիս, ինչպես օվկիանոսում:

Աղայանը մանրամասն չէ նկարագրել այդ ճանապարհորդությունը, որպեսզի իմանանք, թե ինչեր են քաշել ուսման և արհեստի գնացող մեր երիտասարդները: Այդ հասկանալի է: Ամեն տեղ մենք նրան տեսնում ենք դժվարություններն արհամարհող, զվարթ ու կայտառ: Իսկ այդպիսի մի ճանապարհորդ չէր կարող խոր տպավորություններ ստանալ արգելքներից, բանի տեղ դնել արգելքները և նկարագրեր նրանց մանրամասն: Սակայն ռուսական ստեպներում ճանապարհորդությունը նկարագրել է Չեխովը, և մենք կարող ենք մեր երևակայության մեջ ներկայացնել 2,5 ամիսները, որ անցկացրին Աղայանը և իր ընկերը ճանապարհին:

Մոսկվա հասան նրանք նոյեմբերի կեսին, բավական տխուր դրության մեջ- զգզված, քաղցած: Հինգ մանեթ չունեին, որ սայլապանի վարձը տային:

- Հաց չունինք,- ասում է Միքայելը:
- Ի՞նչ անենք, թե հաց չունինք,- ասացի ես:
- Երևակայիր, որ շատ հաց ունինք, և քեզ բոլորովին կուշտ կզգաս:

Ասում է, բայց ինքն էլ գիտե, որ իր առաջարկածը մշտական ու ապահով միջոց չէ: Ու շտապում է իսկույն կեթ, առանց հանգիստ իսկ առնելու, գործ որոնել:

«Կոշիկներ չունեինք և ոչ տաք հագուստ,- ասում է Աղայանը,- իսկ Մոսկվայումն արդեն ձյուն կար և ռուսական «մարոզ»: Եմ կոշիկներս ոչ երես ունեին և ոչ տակ, իսկ Միքայելինը երես ունեին, բայց տակ չունեին: Հագա ընկերիս կոշիկները, բան, ուզեցի և մեր սայլապանի

արմյակ վերարկուն, և այս տարազի մեջ շատ նման էի սալմաստեցի խաչագողի, որպիսիք մեզ շատ պատահեցին Ռուսաստանում»:

Այդ կերպարանքով նախ՝ Լազարյան ճեմարանի տպարանը, ապա այն ժամանակ անուն հանած հայ մտավորականների մոտ՝ Նազարյանի, Էմինի, Մսերյանի: Հիասթափումներ: Ի վերջո գործ են գտնում տպարանում: Վերջացավ երկու ընկերների ողիսականը, որ նմանեցնել կարող ենք ուխտագնացության, այն էլ ասկետական ժամանակների ուխտագնացության: Մեզանում այդ ժամանակները հավատում էին, որ մտավոր շնորհք, բանաստեղծի կամ փահլևանի տաղանդ, մի խոսքով որևէ արտակարգ կարողություն ստանալու համար պետք է յոթը տարի պաս պահել, հետո ոտով գնալ ս. Կարապետ, որ սա մուրազ տա, ուխտը, հայցվածքը կատարե:

Ահա այսպիսի ջերմեռանդ հավատով, այնքան չարքաշություններով եկել հասել են այս երկու ուխտավորները: Ո՞ւր է նրանց մուրազը:

Նա դեռ հեռու է: Մայրաքաղաքում գիտություն, այո, կա: Բայց տպարանի խորքում մրտած գրաշարի համար չէ նա: Նրան պետք է որոնել, Նրան պետք է հասնել: Եվ այդ կողմից շատ տխուր է մանավանդ Ղազարոսի կացությունը: Նրա ընկեր Միքայելը բոլորովին ձգտում չունեի դեպի ուսումը, նա ուզում էր միայն իր արհեստը կատարելագործեր: Մինչդեռ Ղազարոսը դրա համար չէր չորս հազար վերս ճանապարհ եկել: Նրան ոգևորում էր մեծ օրինակը-ամերիկացի Բենիամին Ֆրանկլինը¹⁰:

Աշխատելով Լազարյան ճեմարանի տպարանում, Աղայանը գտնվում էր Մոսկվայի այն ժամանակվա հայ գրական շրջանի մեջ: Բայց ոչ «Հյուսիսափայլը», ոչ «Ճռաքաղը» նրա համար «Կռունկ» չդարձան: Եվ Մոսկվայում մնալն էլ ժամանակավոր հանգամանք ուներ: Ճանապարհաձայս աշխատել և Պետերբուրգ գնալ-այս էր երկու ըմկերների նպատակը: Հայկական շրջանները իրանց ցուրտ, պաշտոնական վերբերմունքով չգրավեցին Ղազարոսին: Ի՞նչ կտար Նևայի ափին շինված մայրաքաղաքը:

Առաջին անգամ նա էլ շատ բան չտվեց: Ղազարոսը բանում էր Ռափայել Պատկանյանի տպարանում: Բայց հայ նշանավոր բանաստեղծի մասնավոր շրջանն էլ ոչ մի գրավչություն չունեցավ նրա համար: Ամեն ինչ նրան հրում էր, հեռացնում հայկական շրջաններից: Եվ օտար հիմնարկությունները, օրինակ՝ Ակադեմիայի տպարանը և Լեմանի ձուլարանն էին այն տեղերը, որ երկու ընկերներ իրանց դրությունը բավարար էին համարում:

Սակայն 1863-ի վերջերին Ղազարոսը նորից գնում է Մոսկվա, ուր շատ ձեռնտու պայմաններով աշխատում էր «Հյուսիսափայլի» վրա: Կարևորը, իհարկե, գրաշարական գործունեությունը չէր, այլ հիմնական նպատակը, գրաշարի մուրազը:

Եվ ահա վերին աստիճանի հետաքրքրական երևույթ: Ղազարոսը մոտենում էիր իդեալին, հասնում էիր մուրազին: Բայց ո՞ւմ միջոցով:

¹⁰ Նկատի ունի այն փաստը, որ Բ. Ֆրանկլինը ժամանակի ամենազարգացած մարդկանցից է դարձել ինքնակրթությամբ:

Նա միանգամայն հեռու է Մոսկվայի հայերից, նույնիսկ հայ ուսանողությունից: «Հայ ուսանողներին,-ասում է նա,-ճանաչում էի միայն հեռվից, տեսնելով նրանց թղթամուկությունը և բուլվարներում քարշ գալը անանուն աղջիկների հետ, ես ըստում էի դեպի նրանց խորին արհամարհանք: Չուր տեղ վատնում էին իրանց հայրերի և բարերարների փողերը, առանց հոգ ընենելու իրանց բարոյական և մտավոր զարգացման վրա»:

Գրաշարությունը երկու մայրաքաղաքների հայ խմբագիրների մոտ (Նազարյան, Պատկանյան) նույնպես բավական մեծ առիթ էր, որ նա ոչ միայն սառնասիրտ մնա դեպի այդ անձնավորությունները, այլև զգա այդ արհեստից ազատվելու անհրաժեշտությունը, մի արհեստ, որ ստորացնում էր նրանով ապրողի արժանավորությունը, վրդովեցուցիչ դեպքերի առիթներ տալիս:

«Մենակ մեր խմբագիրների տմարդի վարմունքը բավական էր, որ մի ազատասեր սրտի մեջ կրակ վառեր, առաջ մղեր և այդ կախարդական շրջանից դուրս մղեր: «Ի՞նչ հայեր են այստեղի հայերը, ասում էի ես,-ինչպես կան ոսի նեմեցներ, ոսի ջիուդներ, այնպես էլ կան և ոսի հայեր.դրանց բոլորին միմյանցից զանազանել չես կարող բարոյական կողմից»:
Եվ Ղազարոսը ռուսական և լեհական շրջանների մեջ է պտտվում, այդտեղ է գտնում և՛ սրտագին վերաբերմունք, և՛ գաղափարականություն:

Համալսարանի մի խումբ ուսանողներ ձրի դասատվություն էին անում զանազան գործարանների աշակերտներին և վարպետներին:

Ղազարոսն էլ իր գրաշար ընկերներով դասեր է առնում: Նրա խումբը բաղկացած էր քսան հոգուց, իսկ դասատու ուսանողների թիվը չորս էր: Հետզհետե սովորողների թիվը նվազեց և վերջը Ղազարոսը մեն-մենակ մնաց:

Եվ ահա այդտեղ Աղայանը առաջին անգամ ծանոթություններ է ստա նում գիտական մանկավարժությունից, մի առարկա, որ պիտի նրա համար ստեղծեր մի եզակի, նշանավոր դիրք հայերի մեջ: «Այս ուսանողները,- ասում է նա,- հմուտ էին ժամանակակից մանկավարժական գրականությանը, որ նոր էր զարգանում, հետևում էին նորագույն մեթոդներին, ունեին և դասատվության շնորհք: Երբ որ մենակ մնացի, այլևս տպարան չեկան, այլ ուղղակի իմ սենյակը: Նրանք աղքատ էին և իրանց ստացած նպաստի փոխարեն էր, որ դաս էին տալիս ձրի»:

Այս ուսանողական շրջանը, ինչպես երևում է, շատ խոր ազդեցություն է ունեցել Աղայանի վրա, որովհետև նա ասում է, թե այդ ժամանակամիջոցը իր մտավոր զարգացման «ուկեղարն» էր: Մակայն դա դար չէր, այլ միայն մի տարի: Մի տարուց հետո Աղայանը ստիպված է հեռանալ, կամ ավելի ճիշտ՝ փախչել Մոսկվայից:

Պատճառները մի քանի հատ էին:

Տպարանական բանվորներից և ուսանողներից մի խումբ էր կազմվել, որ ժողովներ էր անում, զանազան նախագծեր կազմում, դատում «մեր խելքից շատ վեր բաների վրա...»: Այս դեռ ոչինչ, ինքնազարգացման նտաստող ժողովներ էին: «Բայց մեր ժողովներից հետո,- ասում է Աղայանը,- խենթություն շատ էինք անում: Միքայելը մոտս չէր, որ ինձ զսպեր, գժության մեջ

չէի ուզում ոչ մեկից ետ մնալ, այլ թե կարելի է, գերազանցել բոլորին: Ուր որ գնում էինք խմբովին, մեր առաջին գործն էր լինում անկարգություն անել: Տակնուվրա էինք անում շատ պանդոկներ և կանանոցներ մի որևէ առիթով, իսկ առիթներ այդպիսի տեղեր միշտ լինում էին և այն էլ շատ առատ»:

Խմբի անդամներին հաճախ տանում էին ուստիկանատուն, բայց այդ ժամանակները խատություններ շատ չկային, նրանց խրատում էին և արձակում: Բայց և այդպես, Ղազարոսը զգում էր, որ այդ «գժությունները» կարող են շատ հեռու տանել, «մանավանդ որ մտադրվել էինք ծեծել մի քանի գերմանացի ֆակտորների (տպարանական կառավարիչներին), որոնք շատ բարբարոսաբար էին վարվում ռուս գրաշարների հետ»:

Մյուս պատճառը ավելի հզոր ու վճռական էր: Ղազարոսի վրա սիրահարվել էր մի ռուս տղջիկ՝ Վարվառա անունով: Ինտելիգենտ, զարգացած, գրականության սիրահար մի աղջիկ: Ղազարոսի գրական դաստիարակության մեջ խոշոր դեր է կատարել և այդ աղջիկը: «Սիրահարված էի և ես, - ասում է նա, - մինչև անգամ հիացած և հափշտակված, բայց իդեալական սիրով, պաշտելու չափ: Շատ անգամ ամբողջ գիշերներ էինք լուսացնում... Նա պատմում էր իր կարդացած վեպերի բովանդակությունը, և այդ տեղից սկսում էինք մարդկային հոգու զանազան հատկությունների մասին ճառել, զոռ տալով մեր երևակայությանը, որ անսանձ կերպով թռչում էր առանց մեր կամքի»: Սիրահարված գույզի այս դրական մարզանքները, փոխադարձ սիրային զիջումները իրանց բարերար ազդեցությունն էին անում: Այս երկրորդ սերն էր, որ գալիս էր քնքշացնելու Ղազարոսի սիրտը, նրա «շատ կոպիտ բնավորությունը»:

Բայց Ղազարոսը իբրև ժամանակի վատվածն ազգասեր երիտասարդներից մեկը, չէր կարող թույլ տալ, որ օտարուհու, մանավանդ ռուսուհու սերը բոլորավին հաղթահարե իրան. Նա վախենում է «ռեալան սերից», վախենում է սրբապղծություն կատարել, գրկելով իր պաշտած աստվածուհուն երկնային գորությունից. Վախենում է, թե միգուցե կրակի հետ խաղալով՝ «ընկնեի մեջը՝ ճրագի չորս կողմով թրթռող թիթեռնիկի նման»: Եվ վճռում է փախչել այդ սերից: Վերջապես կա և այն, որ Ղազարոսը կռվում է Նազարյանի հետ:

Մենակ էր «Հյուսիսափ այլի» խմբագիրը, ինքը պիտի լցներ իր ամսագիրը: Նյութերն ուշացնում էր և հանկարծ բերում էր տպարան ու պահանջում, որ շուտ շարվեն: Սակայն Ղազարոսը չէր ուզում դրա պատճառով զրկվել իր դասերից: Մի օր գալիս է տպարան, տեսնում է, որ Ղազարոսը այնտեղ չէ և տեղեկանալով, որ նա դասի է գնացել, տաքանում է և ասում, «Այդ ասիացի ախմախը ահագին կենդանի է դառել, նոր ուզում է ուսում առնել, գնացեք շուտ, կանչեցեք»:
Այնուհետև թող ինքը՝ Ղազարոսը պատմե.

«Գնացի և կանգնեցի տառարկղիս առջև՝ բիզը ձեռիս: Նա դուրս եկավ գրասենյակից և սկսեց իր հանդիմանությունը կոպիտ խոսքերով, ես պատասխանեցի իրանից ավելի կոպիտ կերպով: Նա աչքերը խփեց, ինչպես սովորություն ուներ և սկսեց ձեռքերը շարժել, որ ասածն ավելի ազդու դուրս գա, բայց այս անգամ նրա մի ձեռքը դիպավ իմ ձեռքի բիզի ծայրին, որ անգիտությամբ մեկնեցի դեպի իրան՝ ուզենալով պատասխանս իր ձեռքը տալ: Նազարյանը

վիրավորվելով թե իմ խոսքերից և թե խթանից, երեսը շրջեց ու հայհոյելով հեռացավ, իր հետ տանելով և իմ հայհոյանքը, որ անխնա իր ետևից թափեցի գլխին»:

Նկատենք այստեղ, որ Աղայանը, ընդունելով հանդերձ 60-ական թվականների մեր գործիչների մեծ երախտիքը, մերկացնում է նրանց պակասություններն էլ: Ահա Նազարյանն ու Էմինը: Նազարյանը թույլ չէ տալիս, որ Ղազարոսը Էմինի մի ռուսերեն գործի համար անհրաժեշտ մի քանի տող հայերեն շարվածքն անե, նա ասում է Ղազարոսին. «Եղբայր սիրելի, նա մարդ չէ, այլ խոզ է, խոզ, քո տեսած խոզերից չէ, դա վատթար տեսակից է»: Իսկ Էմինն ասում է Նազարյանի մասին. «Դուք ինչո՞ւ եք լսում, դա խելագար է, գուրկ մարդավարությունից»:

Այս տեսակ կրքոտ վերաբերմունք հատուկ է մեր բոլոր գործիչներին: Եվ այս հատկությունը անհազիս բացասական ազդեցություն է ունեցել մեր գրականության և մանավանդ մամուլի վրա:

Ղազարոսը գրում է. «Մտքումս ասացի՝ ..., երկուսիդ էլ երեք նահլաթ, ամեն մեկիդ հինգ»: Եվ պե՞տք է ավելացնել, որ ինքը Ղազարոսն էլ ազատ չէր մեր բոլոր գործիչների սեփականությունը կազմող կրքոտությունից...

1864-ի վերջերում նա նորից Պետերբուրգ է: Եվ նրա շրջանը դարձյալ այն է, ինչ Մոսկվայում՝ գլխավորապես լեհական: Պետք է չմոռանալ, թե ինչ դրության մեջ էին այդ ժամանակ լեհերը. 1863-ի ապստամբությունը ճնշված էր և Մուրավյովի դաժան խստությունները կսկիծ էին պատճառում լեհերին, ավելի ևս վառելով նրանց հայրենասիրությունը: Աղայանը իրան հատուկ հափշտակվող բնավորությամբ մասնակից է դառնում լեհական վշտին: Նա հիշատակում է մի ճաշկերույթ լեհ մի ընտանիքում և ասում է. «Ամբողջ կյանքումս չեմ կարող մոռանալ այդ ճաշը, ուր լաց ու խնդում իրար խառնված տևեց վեց ժամ: Ի՛նչ ճառեր, ի՛նչ կենացներ»:

Նա ինքն էլ ճառ ասաց: Եվ նրա ասածն այս էր. «Լացը կյանքի նշան է, նորածին երեխան երբ լաց է լինում իսկույն, ամենքն էլ ուրախանում են, տեսնում են, որ կենդանի է. մենք հայերս դեռ չենք արժանացել այդ բախտին»:

Սա մի ամբողջ քաղաքական դավանանք էր մեր շատ գործիչների համար, և այդ դավանանքից ծնունդ առավ թուրքահայ դատի ռազմական ընթացքը: Շատ և շատ գործիչների չվիճակվեց տեսնել հային արժանացած «լացի բախտին»: Աղայանը տեսավ, չափազանց շատ տեսավ, մի քանի տասնյակ տարիների ընթացքում, և համոզվեց, որ մի փոքրիկ, աղքատ, տղետ ու ցրված ազդի համար «բախտ չէ լացը»:

III

Նոր աշխարհ

Մինչդեռ Աղայանը այսպես օտար շրջաններում էր որոնում գաղափարականություն, ոգևորության և հոգեկան մխիթարանքների աղբյուրներ, նրա առջև հանկարծակի, անսպասելի կերպով բացվում է Պետերբուրգի հայ իրականության մի փոքրիկ անկյունը. մի

բոլորովին նոր աշխարհ, որ և գրկաբաց ընդունում է նրան իր մեջ:

Այդ նոր աշխարհը Պետերբուրգի հայ ուսանողական շրջանն էր, որ մի պաշտոնական հիմնարկություն չէր, այլ կազմվել ու պահպանվում էր մի մասնավոր անհատի, այժմ հանգուցյալ Կարապետ Եղյանի ջանքերով:

Եղյանը ամեն շաբաթ հավաքում էր հայ ուսանողներին իր տանը՝ նրանց ազգային ուղղությամբ ինքնազարգացման նպաստելու համար: Այդ ժողովներում տիրում էր հայ լեզուն: Ամենալավ և ախորժելի ժամանցն այն էր, որ ուսանողները հայերեն շարադրություններ էին գրում, կարդում էին, որից հետո գրվածքը ընդհանուրի քննադատության էր ենթարկվում:

Եվ մենք պետք է ասենք, որ այստեղ, Եղյանի հարկի տակ, իրար հանդիպում էին, զուտ հայկական երեկույթներ էին անցկացնում մի շարք այնպիսի ուսանողներ, որոնք հետո նշանավոր հանդիսացան, անուն հանեցին մեր գրական-հասարակական կյանքում: Մա անշուշտ պատահումն է: Շրջանը, գաղափարները անշուշտ որոշ դաստիարակչական ազդեցություն ունեին հայ երիտասարդների վրա, տալիս էին նրանց ապագա գործունեության հրահանգներ, դրդիչ էին հանդիսանում:

Այդ երիտասարդների մեջ էին Արծրունի եղբայրները (Գրիգոր և Անդրեաս), Աբգար Հովհաննիսյան, Գևորգ Եվանգուլյան, Ավետիք Բաբայան¹¹, Կարապետ Կոստանյան, Սեդրակ Մանդինյան և շատ արիշներ: Ղազարոս Աղայանին այդ շրջանի մեջ մտցնողն էր ուսանող (հետո փաստաբան, այժմ հանգուցյալ) Ռուբեն Զալալյանը:

Առաջին իսկ երեկոն գրաշար Ղազարոսը գրավում է ամենքի սերն ու համակրանքը և արժանանում է մի պատվի, որ ցնցող և հափշտակիչ ազդեցություն է ունենում նրա վրա: Նա միաձայն ընտրվում է ուսանողական ժողովի անդամ:

Այդ ընտրությունը նրա ներկայությամբ չէ կատարվում, այլ այն ժամանակ, երբ նա հարևան սենյակում խոսում էր Եղյանի հետ: Ոչ ոք չէ հայտնում նրան այդ մասին: Ժողովի վերջին միայն, երբ քարտուղար Ռուբեն Զալալյանը կարդում է արձանագրությունը, Ղազարոսը լսում է այսպիսի բան. «Այս երեկոյին, անդամների միաձայն հավանությամբ, պ. Ղազարոս Աղայանը ընդունվեց ուսանողական ժողովի անդամ»): Հետևում են բուռն ծափահարություններ, Եղյանը սեղմում է նրա ձեռքը, շնորհավորում է և ասում. «Հուսով եմ, որ եկող ժողովին դուք էլ մի բան կբերեք կարդալու»:

Իսկ ի՞նչ էր զգում ինքը, այդ նոր անդամը: Աչքի առաջ բերենք նրա ամբողջ կյանքը, նրա բուռն ձգտումները, նրա կրած տանջանքները, և ամենևին չենք զարմանա՝ կարդալով նրա ինքնակենսագրության մեջ հետևյալ տողերը.

«Ուսանողական ժողովի անդամ ընդունվելս այնքան անակնկալ էր ինձ համար, հանկարծական, որ երբ լսեցի արձանագրությունը, քիչ մնաց ուշաթափվեի իսկույն և վայր կընկնեի, եթե չբռնեի աթոռի մեջքից:

¹¹ Աղայանի մահվան առիթով Ավետիք Բաբայանը (բժշկապետ) «Հորիզոնի» մեջ խոստացավ տալ իր հիշողությունները Պետերբուրգի ուսանողական շրջանի մասին: Ես հույս ունիմ, որ հարգելի բժշկապետը անպատճառ կկատարե իր խոստումը և կտա մեզ մեր նոր պատմության համար կարևոր այդ նյութը (ծանոթ. հեղ.):

Շատ հետո ես հանդիմանեցի Ռուբենին, որ շատ անզգույշ վարվեց: Մենք ամենքս էլ նկատեցինք, ասաց Ռուբենը, որ դու շատ զգացվեցար, բայց չէինք կարող իմանալ դրա չափը:

Ժողովից հետո ես և Ռուբենը միասին գնացինք տուն: Ամբողջ ճանապարհին ես լուռ էի, էլ այս աշխարհումս չէի և չէի իմանում ինչ էր խոսում Ռուբենը: Հենց որ հասա հոշակավոր անկյունի սենյակը, ուր գիշերը ես մենակ էի լինում, որովհետև տանտիրոջս արհեստանոցն էր և ոչ ննջարանը, ես բերանքսիվայր ընկա մ ահճակայիս վրա և մի կուշտ լաց էլա: Այսպես թեթևացնելով լցված սիրտս, վեր թռա տեղիցս և բացականչեցի.
- Ես պետք է գրեմ, այո՛ , պետք է գրեմ»:

Ինչպես գիտենք, նա վաղուց էր սկսել գրել ոտանավորներ: Հենց այդ միջոցին էլ գրում էր մի ոտանավոր պոեմ, որի մեջ իր կյանքն էր նկարագրում: Բայց պատռում է այդ ոտանավորը, նստում է և մի շարքավա ընթացքում, մեծ հափշտակությամբ, գրում է իր «Արություն և Մանվելը»:

Հոգեբանական մոմենտը չափազանց ճիշտ է ներկայանում Աղայանի այդ լացի, այդ հափշտակության մեջ: Նա միանգամայն հասկանալի կլինի այն ինքնուս սկսնակներին, որոնք հանկարծ իրանց զգում են ցածրից բարձրացած, զգում են, որ բարձրացնողը իրանց շնորհքն է, զգում են, որ այդ շնորհքն է տեղ բաց անում նրանց համար և ոչ թե ստացած բարձր կրթության իրավունքը, վկայականը: Մա հոգեկան կարողության մեծագույն նվաճումն է, որ չէ կարող չլցնել նվաճողի սիրտը այդպիսի ծայրահեղ հույզերով:

Ահա ինչ արավ բարոյական խրախուսանքը: Նա մի ահագին հեղաշրջում է մտցնում Աղայանի մեջ: Այդ րուպեից նա գրող է: Որոշված ու սահմանված է ճակատագիրը:

Վեպը կարդացվում է հաջորդ ժողովին և, իհարկե, հիացում է պատճառում: Այլապես չէր կարող լինել: Նայեցեք այն ժամանակվա մեր գրականության:

Թողնենք առայժմ «Արություն և Մանվելը»: Ասենք, որ նա ճանապարհի հարթեց իր հեղինակի համար, Աղայանի դրությունը փոխված է: Նա ընդունվում է Պետերբուրգի եկեղեցու երգիչ, ռոճիկ է ստանում և բնակարան, արժանանում է Լազարյան տոհմի վերջին շառավիղի ուշադրության: Հիմա արդեն կարելի է ամբողջովին նվիրվել ուսման:

Բայց ի՞նչ տեսակ ուսման:

Խոսք է լինում համալսարան մտնելու մասին: Սակայն ո՞ր է սիստեմատիկ պատրաստությունը, առանց որի չէր կարելի իրագործել այդ միտքը: Ժամանա՞ կն էր անցել, թե Ղազարոսն էլ զգում էր, որ անհնարին է պատրաստվել քննություն տալու: Նա հրաժարվում է ընդունել Մանասարյանից թոշակ, որովհետև վստահ չէր, թե կարող է պատրաստվել համալսարան մտնելու: Համեմատաբար դժվար չպիտի լիներ արևելյան ֆակուլտետ մտնելը, բայց Ղազարոսը ներկա է լինում այդ ֆակուլտետում հայերենի դասախոսության և գտնում է, որ այդտեղ ինքը սովորելու բան չունի, այն, ինչ ավանդվում է հայրենից, ինքը արդեն շատ լավ գիտե:

Այսպես թե այնպես, համալսարան մտնելը չէ աջողվում: Մնում է դարձյալ ինքնակրթությունը:

Եվ Աղայանը շարունակում է այդ բանը և Պետերբուրգում հաճախելով հասարակական և մասնավոր գրադարանները և ընթերցանության նվիրվելով: Այդ գրադարանի մեջ էլ, իհարկե: նա չէ հետևում որոշ ու խիստ սիստեմի: Կարդում էր իրան հետաքրքրող գրքերը, ինչ բովանդակություն էլ ունենային նրանք: Նա չէր կանգ առնում նույնիսկ լուրջ մասնագիտական բովանդակության առջև:

Մի ուրիշ ժամանակ այդ տեսակ ինքնակրթությունը գուցե այնքան էլ արդյունավետ չլիներ: Բայց Ղազարոսի բախտից Պետերբուրգը այդ ժամանակ ներկայացնում էր մտավոր եռուն շարժման և գաղափարական հեղաշրջման ասպարեզ:

«1864 թվականի վերջին և 1865 թվականի սկզբի ամիսները Պետերբուրգի մտավոր կյանքի վերածնության ամենաթունդ ժամանակն էր:

Ինչպես գարնանամուտը ավելի քնքուշ ծաղիկներ է բուսցնում, իսկ ամառնամուտը սար ու ձոր լցնում է ամեն տեսակ լավ ու վատ, կոշտ ու քնքուշ, հոտավետ և անհոտ բույսերով, այնպիսի մի ամառն էր ներկայացնում Պետերբուրգի այդ ժամանակվա մտավոր կյանքը: Հնությունն ու նորությունը պատերազմ էին հայտնել իրար դեմ... Արևմտյան Եվրոպայի լուսավոր մտքերի առջև դրված թումբը քանդվելով՝ այդ քաղաքը հեղեղեց նորանոր գաղափարներով: Դա էր առավելապես թարգմանական գրականությունը: որ յուրաքանչյուր օր տասնյակ հատորներով էր դուրս գալիս: Մարդ շշկվում էր, չգիտեր որը կարդա և որը թողնի, քանի որ մեկը մյուսից զարգացուցիչ էր, մեկը մյուսից գրավիչ: Դուրս եկավ Բոքլը և ահագին հեղափոխություն ձգեց ոչ միայն իր գրքովը այլև իր անձովը: Այդ մարդը համալսարանի երես չէր տեսել, ուրեմն կարելի է եղել երևելի հանդիսանալ և առանց համալսարանի: Այդ համոզումները հաստատեց Սմայլսի «Ինքնօգնությունը»: Սա հազարավոր կենսագրական փաստերով ցույց տվեց, թե մարդս ինքը կարող է միայն զարգացնել իրան. թե՛ «ուրիշի օգնությունը պակասեցնում է ինքնօգնության ուժը»:

Եվ մտքի նոր, առաջավոր հոսանքների մեջ ընկած Աղայանը, բնականաբար, պիտի ենթարկվեր և նոր աշխարհայացքների ազդեցության. «Որով,- ասում է նա,- և ընկա պ. Եղյանի աչքից»: Պահպանողական հայր կարծում է, թե Աղայանը զանազան իզմերի և իստերի կարգն է ընկել և հենց այդ պատճառով էլ նրա մեջ թուլացել է համալսարան մտնելու ցանկությունը:

Ահա, այսպիսի հանգամանքների մեջ, այսպիսի միջավայրում Աղայանը առաջ է տանում իր ինքնագարգացումը, որքան կարող էր և ինչպես թույլ էր տալիս նրա որոնող, կրակոտ բնավորությունը: Միաժամանակ նա և կատարում էր գրական աշխատանք, թարգմանություններ անելով Միքայել Միանսարյանի համար:

Ռուսաստանի երկու մայրաքաղաքներում անցկացրած ժամանակամիջոցը բավական երկար էր, որ Աղայանը այդպիսի ճանապարհներով մտավոր պաշար ձեռք բերե: Թիֆլիսից հեռացավ, ինչպես գիտենք, 1862 թ.: Իսկ Պետերբուրգից հեռանալու պատճառ դարձավ Գևորգ կաթողիկոսը: 1867-ին նա գնացել էր կայսրին ներկայանալու և այդտեղ նա հայտնեց տեղական հայերին, որ դիտավորություն ունի վերանորոգել Էջմիածնի տպարանը և ամսագիր հրատարակել: Եղյանի խորհրդով կաթողիկոսը Աղայանին հրավիրեց Էջմիածին՝ այդ նպատակներն իրագործելու համար: Եվ նա նույն թվականի վերջերին հեռացավ Պետերբուրգից:

Փակվում է Աղայանի կյանքի առաջին շրջանը: Եվ մենք դուրս ենք գալիս այն վերին աստիճանի հարուստ, հետաքրքրական աշխարհից, ուր նախապատրաստվում էր մեր մտավոր-կուլտուրական կյանքի հզոր անհատներից մեկը: Բոլնիսի Խաչեն գյուղում էր սկսվել այդ շրջանը: Եվ այն տեղն էլ վերջանում է նա:

Ահա այդ վերջին տեսարանը:

Թիֆլիս հասնելուն պես Աղայանի առաջին գործն է լինում գնալ տեսնել իր ծնողներին: Ստեփանը այժմ հո բոլորովին փոխվել է: Վաթսուն յոթը տարեկան էր նա, որդու կարոտը քաշել էր և հետո, որ գլխավորն է, իմացել էր, որ իր «անառակը» արդեն այնպիսի մարդ է դառել, որ հայոց կաթողիկոսը հրավիրել է նրան իր մոտ, մեծ պաշտոն պիտի տա: Եվ այժմ արդեն նա բոլորովին սովորական մի հայր է դարձել:

«Հայրս,- պատմում է Ղազարոսը,- որ նույնիսկ իր գավակներին չհամբուրելու մի նախապաշարմունք ուներ, որովհետև Հուդան համբուրելով էր մատնել Քրիստոսին, այս նախապաշարմունքը ծնողական ծովացած կարոտի առջև ջարդուփշուր եղավ: Ինձ առավ իր հայրական բազուկների մեջ և սկսեց հեկեկալ երեխայի նման և համբույրների հեղեղ թափել: Մորս հերթ չէր տալիս: Խեղճ մայրս ժպիտը բերանին և արտասուքն այքերին կանչում էր.- Ա՛յ մարդ, երեխիս կսպանես, թող մեկ էրեսին մտիկ տամ: ...Հայրս բաց թողեց թե չէ՝ ես «ազի ջան» գոչելով ընկա մորս գիրկը և երեսս թաղեցի երկու հսկայական ծծերի արանքում: Ամբողջ գյուղը հավաքվեց, ո՛րը ժպտում և ո՛րը լաց էր լինում ուրախությունից»:

Օրերով Ստեփանը ուրախություն կատարեց: Նրա սուփրեն բաց էր առավոտից մինչև կեսգիշեր: «Իմ բացակայության ժամանակ բավական կոտորվել էին թե՛ հայրս և թե՛ մայրս: Հայրս մեջքից կոացել էր և գավազան էր առել ձեռքը, կորցրել էր իր առաջվան ուրախությունն ու աշխույժը: Բայց երբ տեսավ ինձ, երբ իմացավ, որ առաջիս մեծ ասպարեզ է բացվում... մեջքը շտկեց, գավազանը դեն ձգեց, վերանորոգվեց վաթսունը յոթը տարեկան հասակում և առաջվա պես սկսեց Քյոռոլին երգել»¹²:

Հին մարդը բոլորովին եղծվել է, տեղի տվել նոր մարդուն: Որովհետև այդ նոր մարդը ոչ միայն ամբողջովին իր մեջ է առել հին մարդուն ու հանդիսացել մի նոր, մշակված, կոկված ուժ, այլև սիրում, պատվում է նրան, իր հորը, ինչպես կարող է ամենալավ որդին: Անցյալի բոլոր տխուր հիշողությունները հիմնավորապես մոռացված են - այսպես է որդին և այսպես էլ պիտի մնա իր ամբողջ կյանքում: Գիտե այդ որդին, որ իր հայրը տվել է իրան շատ և շատ բան, և անչափ շնորհակալ է դրա համար:

- Եթե իմ հայրս դու չլինեիր,- ասում է նա,- քո բոյ ու բուսաթով, քո առողջ կազմվածքով, քո բնական ձիրքերով և շնորհքով, այլ լինեիր մի անշնորհք մարդ, մի ապուշ և թույլ արարած, ինչ ես կարծում, ես այնուհետև մի թե կարող կլինեիր բանի նման մի բան դառնալ, թեկուզ միլիոններ ծախսեիր վրաս: Ո՛չ, հայր, դու շատ բան ես տվել ինձ...

Եվ հայրը միայն օրհնել կարող էր այդպիսի որդուն: Եվ նա օրհնում է: Այդ պիտի լինի նրա դերը այնուհետև, մինչև գերեզման:

¹² Ինքը Ղազարոսն էլ աննման կերպով երգում էր Քյոռոլին (ծանոթ. հեղ.):

Այսուհետև այլևս կարիք չկա, որ մենք քայլ առ քայլ հետևենք Ղազարոս Աղայանի կյանքին: Ամենագլխավորը, հիմնականը մենք արդեն իմացանք մանրամասնորեն: Վերջնականապես պատրաստվել է ֆիզիկական և բարոյական ձուլվածքը: Մտել է կյանքի մեջ, երկար ու երկար տարիներ պիտի գործե այդտեղ:

Նրան տեսնում ենք այլևայլ ասպարեզներում տեսա-տեսակ գործունեության նվիրված: Պետերբուրգից հետո Էջմիածնի մթնոլորտը, «Արարատի» խմբագիր: Ուսուցիչ զանազան քաղաքներում: «Փորձ» ամսագրի քարտուղար: Թեմական տեսուչ: Մանկավարժական ուրույն սիստեմի հեղինակ: Մանկական գրող: Մեծերի համար գրող, հրապարակախոս և քննադատ: Լեզվաբանական հարցեր վճռող: «Աղբյուրի» իրական խմբագիր: Դաստիարակ Գևորգյան ճեմարանում: Առանց պաշտոնի մնացած, նյութական զրկանքների ահագին բեռի տակ: Հնչակյան կուսակցության անդամ: Մասնավոր հանձնարարությամբ Երուսաղեմ, Խրիմյանի մոտ ուղարկված: Հոգաբարձու Ներսիսյան դպրոցում: Անդամ Հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովի: Եվ այլն, և այլն:

Այս բոլոր տեղերում, այս բոլոր հանգամանքների մեջ, ուր և լինի, երբ և լինի, եթե կամենանք մի բնորոշ բան ասել Աղայանի՝ իբրև մարդու և գործիչի մասին, այդ միայն այն կարող է լինել, որ Աղայանը՝ Աղայան էր: Իսկ այս անունը՝ Աղայան, ինքնըստինքյան չափազանց խոշոր ու անջնջելի գծերով հաստատված ու բյուրեղացած մի հասկացողություն է:

Աղայան ասելով, մենք ամենից առաջ իսկույն ներկայացնում ենք մեզ մի հոյակապ առանձնատեսակություն, անհատականություն: Նա կարող էր հարց տալ իր ամբողջ շրջապատին «ապա՛, ո՞վ է ինձ նման»: Եվ հարյուրավորների մեջ չէր գտնվի մեկը, որ վեր կենար և ասեր, «ե՛ս»: Եվ եթե լիներ էլ այդպիսի մեկը, ո՞վ կհավատար նրան: Ամենից առաջ մենք, ընթերցողներս չէինք հավատա, մենք, որ արդեն ծանոթացել ենք նրա տարօրինակ, ինքնուրույն, ինչ-որ տարբերական հանգամանք ունեցող կյանքի հիմնավորմանը: Հազվագյուտ, հիացուցիչ է այն միա բան աշխատակցությունը, որով տոհմը, միջավայրը, բնությունը, ժամանակը կերտեցին, կռեցին, կոփեցին միանգամայն անուղղելի, ավելի ճիշտ՝ անաղճատելի ջղեր ու մկաններ այդ բնավորության համար: Ոչ ոք Աղայանի պես չապրեց, ոչ ոք, ուրեմն, Աղայան լինել չէր կարող: Իր տեսակի մեջ դա միանգամայն անհամե մատելի տիպ է:

Նյութական կյանքի մեջ նվաճումներ անելու, դիրք ու բախտ ստեղծելու, կյանքի խնջույքի մեջ վերևում նստածներից մեկը լինելու ոչ մի ընդունակություն չուներ նա: Այդ կողմից Աղայանը մի խեղճություն էր, հարստահարվում էր նույնիսկ ամենավոքորիկ տգրուկների ձեռքին:

Ինչ որ ուներ, ինչ որ ստացել էր այնքան առատությամբ, միայն գաղափարական կյանքի համար էր: Այդ կյանքի մեջ նա նետվեց իբրև ըմբիշ: Կռիվ էր տանում ամեն տեղ: Առանց կռվի, հաշտ կամ անտարբեր կացության մեջ, նա շատ քիչ է ապրել: Հաշտ կամ անտարբեր կարող են լինել հեղհեղուկ, թեքվող, իրանք իրանց հետ առնտուր անող բնավորությունները: Աղայանը, ինչպես գիտենք, այդպիսի «բարիք» չէր ստացել բնությունից: Այդ առանձնացած, ինքնատիպ ձուլվածքը չափազանց ուժեղ էր, չափազանց եռանդալից, որպեսզի կարողանար

անգործ ու անդարդ նստել: Մինչև գերեզման իջնելը նա հասարակության խղճմիտ անդամ էր, կատարում էր իր պարտքը դեպի այդ հասարակությունը: Ամեն տեղ, ուր նա լինում էր, նրա հուժկու անհատականությունը պիտի խոսեր բարձր ու խրոխտ ձայնով: Եվ ընդհարումները անխուսափելի էին այդպիսի մի մարդու ճանապարհին: Այլապես չէր կարող լինել: Այլապես պետք է ընդունել թե ուժեղ անհատականությունը բնության անմիտ խաղ է:

Բուռն տարերային էր Աղայանի բնավորությունը, և այդպես էլ պիտի լիրներ նրա պայքարը կյանքի ասպարեզում: Լեռնային բնությունը ծայրահեղություններով, հակասություններով, հակադրություններով է վիթխարի և ընկճող: Այսպես էր և նրա մարդը: Աղայանի մեջ հակասական ծայրերը միշտ շփվում էին իրար հետ, միշտ արտահայտվում էին կարճ տարածությունների վրա: Նրա բնավորությունը խոշորացնող էր, սաստիկ արձագանքող: Մեղմ գծեր, հարթություններ, ամփոփող, խլացնող տափակություն չկար նրա մեջ: Եվ ամեն ինչ – թե՛ ոգևորություն, թե՛ հավատ, թե՛ սեր, թե՛ ատելություն, արտահայտվում էին սովորականից շատ հեռու, սովորականին չնմանվող խոշոր, եթե կարելի է ասել՝ որոտալից չափերով:

Եվ այդ է պատճառը, որ մենք նրան տեսնում ենք իրար հաջորդող տարբեր կացությունների մեջ: Բուռն տրամադրում է, բուռն տաքացում, բռնկում է: Պարզ ու չքնաղ էր լեռնային երկինքը. հանկարծ տեսար, մի բուռն փոխված է նա, շանթեր է արձակում, հեղեղ է թափում, որպեսզի մի բուռնից հետո ուրիշ տեսարան ցույց տա - մեղմացողի, ժպտողի, սիրողի տեսարան: Առաջին պետական Դումայի ընտրությունների ժամանակ Աղայանը թիֆլիսում սոցիալ-դեմոկրատների թեկնածուն էր իբրև ընտրող: Այդ շատ զարմացում էր նրա բարեկամներին: Եվ ամեն անգամ, երբ խոսք էր լինում այդ մասին, նա սքանչելի միամտությամբ ասում էր. «Եկան ասացին, ժամանակն այնպես էր...»: Եվ նրա գեղեցիկ աչքերը, նրա ամբողջ դեմքը այդ միջոցին այնպիսի արտահայտություն էին ստանում, որ նայողը մինչև սրտի խորքը լցվում էր այս համոզմունքով թե՛ այն՝ ուրիշ կերպ չէր կարող լինել, թե այս ծերունուն ոգևորելով դեռ կարելի էր էլ հեռու տանել, թե նրա մեջ խոսում են երիտասարդական ժամանակների «գժությունները», թե կյանքի և թե հասարակական կազմի այլ պայմաններում նա ընդունակ կլիներ նույնիսկ հանճարեղ «գժություններ» անել: Ուրիշ ի՞նչ պիտի աներ սրտի, զգացմունքների, հույզերի հուժկու մարդը:

Եվ հակասությունները, ծայրահեղությունները Աղայանին չէին իջեցնում այն դիրքից, որի վրա նա կանգնած էր իր ամբողջ հասակով: Մխավել, մարդկային թերություններ ունենալ, միշտ կարելի է և առանց դրան մարդ էլ չկա: Բայց այդ պակասությունները Աղայանի բնավորությունն ինքն էր ջնջում, ոչնչացնում: Ինչո՞վ: Իր շիտակությամբ, անկեղծությամբ: Նրա շիտակությունը, «դուզությունը» նույնպես բարձրահայաց և ուղղաձիգ էր, ինչպես Խաչենի անտառներում ցցված հաճարկի ծառերը: Նրա անկեղծությունը նույնքան վճիտ էր, ինչպես Խաչենի լեռնային աղբյուրները: Ի՞նչ աղբյուր: Խաչենը մի ամբողջ գետ ունի (Քոլատակի գետ), որ հեղուկացած բյուրեղ է, որ չունի իր հորձանքների մեջ և ոչ մի խառնուրդ, որ հանդգներ աղարտել ջինջ մաքրության ամենաբարձր, պահանջոտ հասկացողությունն անգամ: Այդպիսի հրաշք ես ոչ մի տեղ չեմ տեսել...

Ահա ինչն էր հմայիչ դարձնում Աղայանի տիպարը նրա բնավորության բոլոր հախուռն արտահայտությունների մեջ: Եթե նա անհեթեթություններ էլ ասեր, դարձյալ նրան կնայեին

բարեկամական ժպիտով և կասեին՝ «Աղայան է»: Մանուկ, մանուկ մինչև վերջը: Այսպես էին ասում նրան բոլոր ճանաչողները: Մանուկ, իհարկե, անարատ սրտի, բյուրեղ զգացմունքների կողմից:

Այդ զգացմունքները պատկերացնելու համար ես մի փաստ կհիշատակեմ: Մի անգամ անպաշտոն էր մնացել Աղայանը: Չգիտեմ, որ քաղաքից դալիս է Թիֆլիս: Հիվանդ է, ոչ մի միջոց չունի, վաղվա հացի խնդիրն է կանգնած առջևը: Սենյակ է վարձում Քուռ գետի ափին, ոչինչ չունի, ոչ կահ-կարասիք անգամ: Նրա մոտ գնում է Հովհաննես Թումանյանը՝ «հալը հարցնելու»: Նրա հալը շատ վատ է, բայց ոչ մի գանգատ, ոչ մի հոգս: Այդ բոլորին նրան մի բան է միայն զբաղեցնում: Ի՞նչ: Քուռը վարարել է, խոր քանդել իր ափերը, և մյուս ափի մի խոռոչում մի շուն է մնացել, որ գիշերները ոռնում է քաղցից: «Պետք է ազատել նրան», - ասում է Ղազարոսը: Երկուսով դնում են ազատելու: Գետի ափին հավաքվել է ամբոխ, «թամաշա» է անում երկու տարօրինակ մարդկանց: Իսկ «թամաշայի» շատ բան կա: Մադաթյան կղզում երկուսին էլ շրջապատում է շների մի մեծ ռիմակ: Պետք էր պաշտպանվել: Եվ Աղայանը իր ամբողջ հնարագիտությունը գործ է դնում իրան և իր մտերիմին պաշտպանելու համար: Երկար կռիվ է լինում շների դեմ: Բայց հոգնում են ազատիչները, չեն կարողանում հասնել իրանց նպատակին: «Ի՞նչ արած, - ասում է Աղայանը, - ընկերները չեն ուզում, որ իրանց ընկերը ազատվի...»:

Այս դեպքը ինքը Աղայանը երբեք չէ պատմել: Թումանյանն էր պատմում, իսկ նա մի տեսակ ամոթխածությամբ ժպտում էր:

Այս տեսակ մարդիկ, եթե նույնիսկ ստացած էլ չլինեն բնությունից առանձին առաքելություն, առանձին տաղանդ, հենց իրանց այս սրտով, այս վերաբերմունքով բավական են, որ կյանքի զարդը կազմեն:

Եվ հասկանալի է, որ այս տեսակ խառնվածքը չենթարկվեր կյանքի սովորական, հղկած ու տափակած նորմաներին: Հասկանալի է, որ Աղայանը չպիտի կարողանար տեղավորվել այն նեղ խորշերի մեջ, որոնք գոյանում են հասարակական ուժերի այս կամ այն դասավորումից: Այդ պատճառով է, որ Աղայանը չմնաց մեզանում գոյություն ունեցող որևէ կուսակցության մեջ, իբրև նրա մշտական անդամ, նրա դիսցիպլինային անխոս ու անկամք ենթարկված: Նա եղավ համարյա բոլոր կուսակցությունների մեջ, բայց նրա հուժկու անհատականությունը չհպատակվեց շաբլոնին, կռիվներ հարուցեց և հեռացրեց:

Նա մենակ էր: Նա չէր կարող այդպես չլինել:

Ահա մարդը: Խոշոր մի ինքնուրույնություն: Ուրեմն և խոշոր մի երևույթ:

Այժմ մենք համառոտ կերպով կներկայացնենք նրա կատարած գործը:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

«Արություն և Մանվելը», Աղայանի առաջին գրական լուրջ գործը, ինչպես տեսանք, գրվեց արտակարգ հանգամանքների մեջ, ոգևորության բուռն հույզի դրդմամբ և շատ գեղեցիկ ընդունելություն գտավ ուսանողական ժողովում, ուր կարդացվեց նրա ձեռագիրը:

Գեղեցիկ ընդունելության պատճառը շատ պարզ է: Միայն հայ ուսանողները չհիացան այդ «ազգային» վեպի վրա: «Արություն և Մանվելը» մեզանում անուն ստեղծած գրական երկերից մեկն է: Նա շատ է կարդացվել և միշտ սիրով, նույնիսկ հափշտակությամբ:

Իբրև իր ժամանակի գրական արդյունք, վեպը միանգամայն արժանի է իր համբավին: Այս վկայում է նախ և առաջ հայ վեպի պատմությունը:

1840-ական թվականների սկզբից է, որ վիպագրությունը սկսում է մուտք գործել մեր գրականության մեջ: Այդ սկզբնական շրջանը տևում է մինչև 1870-ական թվականների սկիզբը, երբ երևան է գալիս Ռաֆֆին:

Ամենագլխավոր և հետաքրքրական հանգամանքը այդ շրջանի մեջ այն է, որ Աբովյանի «Վերք Հայաստանին» թեև գրված է, ինչպես հաստատում են, 1842 թվականին, բայց մնում է անտիպ ու անհայտ մինչև 1858 թվականը: Եվ ահա, մինչդեռ հայ ինքնուրույնության տիպար այդ գործը ձեռագրի դրության մեջ է, զանազան տեղեր զանազան փորձեր են լինում ինքնուրույն վիպագրությունը հայկական հողի վրա դնելու համար:

Այս փորձերը մեզ տանում են Հնդկաստան, Վիեննա, Կ, Պոլիս, Մոսկվա, Փարիզ: Առաջին տպագրական փորձն անում է Մեսրոպ Թադիադյանը Կալկաթայում. 1846-ին նա հրատարակում է իր գրած «Վեպ Վարդգիսի Տեառն Տուհաց» և 1847-ին «Վեպ Վարսենկան սկայուհույ Ադանից»:

Վեպ բառը մեր հին գրականության մեջ գործ է ածված ընդհանրապես բերանացի պատմության և մասնավորապես դյուցազներգության մտքով: Թադիադյանը իր այդ երկու գործերը հասկանում էր նույն մտքով, - երկուսն էլ պատմական են, հին հայկական և աղվանական կյանքից: Բայց դյուցազներգության հյուսվածքը կատարել է նոր ձևով, այսինքն այնպես, ինչպես գրվում են եվրոպական վեպերը, ռոմանները: Այստեղ «կան» և՛ երևակայություն, և՛ նկարագրություններ, տեսարաններ, և՛ խոսակցություններ: Հինն ու նոր ձևերը խառնված են իրար հետ: Վեպերի լեզուն գրաբար է, բավական խրթին, նյութը՝ ոչ ժամանակակից, բարոյախոսական- ազգասիրական:

Պատմական վեպի նախատիպ կարող ենք համարել և Վիեննայի Մխիթար յանների մի երկու գրվածքները, որոնք հրատարակվեցին 1851 -1852 թվականներին: Այսպես են, օրինակ, Հ. Թոռնյանի «Արտաշեսյան Արտավազդա բարքն ու վախճանը» և Հ. Միպիլյանի «Տրդատա առանձնանալը, վերջին օրերն ու մեռնելը»: Վիպագրական հանգամանքներն այստեղ ավելի ևս թույլ են, բայց կա և մեծ նորություն - նրանք գրված են աշխարհաբար լեզվով:

Միաժամանակ, նույն 1851-ին, Կ. Պոլսի «Բանասեր» ամսագրի մեջ լույս է տեսնում նրա խմբագիր Հ. Հիսարյանի «Խոսքով և Մաքրուհի» թուրքահայ առաջին ինքնուրույն վեպը, որ ոչ միայն աշխարհաբար էր, այլև աշխարհիկ էր: Առաջին սիրահարական վեպը, բովանդակության, կերտվածքի տեսակետի շատ խիստ նմանություն ֆրանսիական վեպին,

մասնավորապես Շատորբիանին: Ինքնություն է, բայց տեղայնություն շատ քիչ ունի: Անհավատալի գուգադիպություններ, խորհրդավորություն, արկածներ: Տեխնիկայի տեսակետից բավական զարգացած: Բնության նկարագրությունները՝ ճոխ, նոր լեզվի ուժն ու ճկունությունն են ցուցադրում:

Այսպիսով Կ. Պոլսում հաստատվում էր ֆրանսիական խիստ ազդեցությունը, որ չափազանց թուլացնում է ինքնությունությունը: Նույն Հիսարյանը վաթսունական թվականների վերջերում հրատարակեց «Նեոն կամ կոտորած աշխարհի», թեև հայկական կյանքից, բայց ոչինչ իրական. հեքիաթային-արկածախնդրական, եռժեն Սյուրի ոգով և թելադրություններով:

Բայց Կ. Պոլսում իրականն էլ, այժմեությունն էլ վեպի նյութ է դառնում: Համարյա «Խոսքով և Մաքրուհիի» հետ միաժամանակ հրատարակվում են երկու պոլեմիկական վեպեր: Հայ լուսավորչականների և հայ կաթոլիկների վեճերը այդ ժամանակ շատ էին սաստկացել: Եվ այդ վեպերը լուսավորչական հայերն էին գրել՝ կաթոլիկ հոգևորականների մոլեռանդությունն ու անհամբերությունը պարսավելու համար: Տարաբախտաբար մեր գրականության մեջ ոչինչ տեղեկություն չկա այդ երկու հասարակական վեպերի մասին: Նրանց վերաբերմամբ տեղեկություններ տալիս է հայտնի հայագետ Դյուլորիեն, որ և ասում է, թե դրանք թուրքերեն լեզվով էին գրված, բայց հայերեն տառերով տպված: Չհամակրելով հանդերձ կրոնական վիճաբանություններին, ֆրանսիացի հայագետն ընդունում էր, որ իբրև գրական գործեր դրանք վատ չէին, մանավանդ լավ էր նրանցից մեկը, որ պատկերազարդ- երգիծաբանական էր և որի անունն էր «Բոշբողազ ռեզալէսի»:

Այնուհետև հայերեն ինքնություն վեպ մենք տեսնում ենք Մոսկվայում: Հեղինակը Միքայել Նալբանդյանն էր: 1857-ին նա հրատարակեց «Մինին խոսք, մյուսին հարս» աշխարհաբար վեպը: Տարաբախտաբար, այդ գիրքը այժմ միանգամայն անգյուտ է, և ես չգիտեմ կա մեզանում մեկը, որ տեղյակ լիներ նրա ամբողջ բովանդակության¹³: Ինքս կարդացել եմ նրա մի մասը միայն, որ արտատպված է Պոլսի «Մեդվի» մեջ: Եվ հիմնվելով կարդացածիս վրա, կարող եմ ասել, որ դա հարազատ կտորն է այդ հեղինակի «Մեռելահարցուկի», որ տպվեց «Հյուսիսափայլի» մեջ 1859 թվականին և վերջացրած էլ չէ: Նույն երկար ու ձիգ դատողություններ ալխամիայի, փիլիսոփայա կան քարի մասին: Բայց ասում են, որ այդ վեպի մեջ կան և ժողովրդական կյանքի պատկերներ (ուխտագնացություն):

Իսկ «Մեռելահարցուկը» արդեն մի գործը ապացույց է, որ Նալբանդյանը ոչ միայն չէր հասկանում գեղարվեստի և իրական վեպի նշանակությունն ու պահանջները, այլև դարձրել էր վեպը պարսավագրության, պասկվիլի միջոց:

Հիշատակենք նաև թուրքահայ նշանավոր հրապարակախոս Ստեփան Ոսկանյանի «Հայ դյուցազնուհի մը» փոքրիկ պատմվածքը, որ չունենալով գեղարվեստական և վիպական մեծ հավակնություններ, հմուտ գրչի և հայրենասեր սրտի գործ է, թեթև, կիսահրապարակախոսական ձևով մշակված:

¹³ Գիրքը հայտնաբերված է. լույս է տեսել Երևանում՝ 1971թ.: Տեղ է գտել նաև Նալբանդյանի երկերի լիակատար ժողովածուի 1-ին հատորում (Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1979, էջ 159-235):

Այսպես էր հայկական վեպի կացությունը, երբ նրա պատմության մեջ հանդես եկավ Թիֆլիսը. 1858-ին այդտեղ տպվեց «Վերք Հայաստանին»: Մի ամբողջ դարագլուխ մեր գրականության մեջ: Ուժեղ հայկական ինքնուրույնություն, անթարգմանելի տեղայնություն: Ազգայնացրած է գեղարվեստը: Առաջին գյուղական վեպն է: Ժողովրդապաշտություն, հերոսապաշտություն, գաղափարապաշտություն: Ինքնաքննադատություն, լավագույնի որոնումներ:

Ահա միանգամից ինչ է տալիս այդ անգուգական երկը:

Նրա թողած տպավորությունը ահագին է: Նա գրական մի ամբողջ հոսանքի ծնող է հանդիսանում:

Սակայն «Վերք Հայաստանին» դեռ գեղարվեստական կատարելատիպ չէ: Դա կրակոտ զգացմունքների մի ամբողջ խառնարան է, որի մեջ և՛ քարոզ կա, և՛ ազգագրություն, և՛ առհասարակ այնպիսի գրական տարրեր, որոնք մի վեպի անհրաժեշտ պատկանելիքները չեն կազմում և որոնք գեղարվեստը ավելորդ բեռնավորումներով ճնշող են, նույնիսկ աղճատող:

Եվ այնուամենայնիվ, Աբովյանը օրինակ ու ոգևորիչ է դառնում նոր սերնդի համար: Երկու տարի չանցած, նրա վեպի նմանությունն արդեն կա մեր գրականության մեջ:

Դա Պերճ Պռոշյանի «Սոս և Վարդիթերն է», որ տպվեց «Կռունկի» մեջ 1860 թվին:

Սակայն ի՞նչ է ներկայացնում այս նմանությունը, գյուղական այս երկրորդ վեպը արվեստի տեսակետից:

Արվեստ համարյա թե չկա նրա մեջ. Պռոշյանը հայ գյուղի սովորություններն ու ավանդությունները արձանագրել է: Ազգագրությունը, խոսք չկա, կարող է գեղարվեստական երկի բովանդակություն դառնալ: Ազգագրական վեպեր գոյություն ունեին և ռուսաց գրականության մեջ և նրանց շատ էր հավանում Բելինսկին: Բայց տեղային առանձնահատուկ ազգագրական երեվոյթները գեղարվեստի մեջ կարող են տեղի ունենալ միմիայն այն դեպքում, երբ նրանք ձուլված են ստեղծագործության մեջ, իբրև միջավայր, իբրև գործողության, դեմքերի բնորոշման և բացատրության համար անհրաժեշտ ծննդաբանական հիմնավորում: Սակայն Պռոշյանի վեպի մեջ ազգագրական առատ ու երկարապատում նյութերը ոչ մի կապ չունեն վեպի բովանդակության հետ և ներկայացնում են առանձին, անջատ կուտակումներ, որոնք և սպանում են գեղարվեստը:

Չնայած այս բացասական հանգամանքներին, «Սոս և Վարդիթերն է» մի երևույթ է, որ ցույց է տալիս, թե Աբովյանի դպրոցը հիմք է բռնում ռուսահայերի մեջ: Դա ինքնուրույն ազգայնական-ժողովրդական արվեստի դպրոցն է: Ռուսահայերի և թուրքահայերի գրական ճանապարհը հենց այստեղից էլ ճյուղավորվում է. թուրքահայերը գնում են ֆրանսիական օրինակների ետևից: Թեև շատ քիչ են այդ ժամանակների նրանց ինքնուրույն վիպական գրվածքները, բայց եղածներն էլ կատարելապես արվեստական բաներ են, կյանքից և իրականությունից հեռու, զուրկ տեղային ինքնուրույնությունից: Ապացույց Հայկունու «Էլիզա» վեպը, որ տպվեց Ջմյունիայում վաթսուհարյուրյան թվականների սկզբում:

«Սոս և Վարդիթերից» հետո, 1861-ին, «Հյուսիսափայլի» մեջ սկսեց տպագրվել «Տեր Սարգիս» գյուղական վեպը, երրորդը՝ ժամանակագրական կարգով: Հեղինակն էր գյուղացի մի ուսանող, Գաբրիել Տեր-Հովհաննիսյան (այժմ բժիշկ): Այս երկը արդեն շատ նմանություն չունի իր նախընթացներին: Գեղարվեստական գրվածքի իսկական արժանավորություններ

շատ ունի. համաչափություն, միջավայր, գործող անձերի տիպիկ պատկերներ: Պոռչյանի դավանանքն էր. «Հայրենյաց փուշն անգամ նուշ է»: Տեր-Հովհաննիսյանը, ընդհակառակն, ցույց էր տալիս, որ փուշը փուշ է, նուշը՝ նուշ: Խավար, տգետ իրականության ցնցող պատկերներ և նրանց մեջ ժողովուրդը հարստահարող, նրա հյութերը ծծող այնպիսի տիպեր, ինչպես է ժամկոչ Ծիտուլին:

Տարաբախտաբար այդ իսկապես իրական վեպը նույնպես կիսատ է մնացել: Եվ ահա «Տեր Սարգսից» հետո գալիս է «Արություն և Մանվելը», չորրորդ ինքնուրույն, գյուղական վեպը մեզանում:

Իր նախորդների հետ համեմատած սա արդեն առանձին տեսակի մի ինքնուրույն ություն ունի, մի առանձին տեսակի թարմություն, համ ու հոտ: Եվ շատ Հասկանալի է, թե ինչու: Չէ՞ որ Աղայանը այս գործի մեջ իր սեփական կյանքն է պատմել, իր այնքան ինքնուրույն, այնքան արտասովոր կյանքը:

Համարյա թե ամեն մի վիպագրող էլ իր պատկերը, իր ապրածն ու զգացածն է վերարտադրում իր գործերի մեջ: Բայց Աղայանը, ինչպես ինքն է խոստովանում, վիպական, այսինքն մտացածին՝ շինովի շատ քիչ բան ունի իր վեպի մեջ: Դա գերազանցորեն ինքնակենսագրական պատմվածք է: Գրել իր սեփական կյանքը, նշանակում է նորից վերակենդանացնել այն, ինչ որ մի ժամանակ եղել է գրողի կյանքը: Տրամադրվել մտածողության պրոցեսով լրացնել և ամբողջացնել հարկավոր չէ: Զգացածը, հիշողության և սրտի մեջ խոր հաստատվածը անարվեստ պարզությամբ, վճիտ անկեղծությամբ պատմել, ահա ինչն է այդ տեսակ գրվածների իսկական հմայքը:

Աղայանը պատմում է, որ հոգեկան հափշտակության, էքստազի մի շաբաթ էր այն շաբաթը, երբ նա գրեց ու վերջացրեց «Արություն և Մանվելը»: Դա շատ բնական էր նրա ոգևորվող, դյուրագգաց, սաստիկ արձագանքով բնավորության համար: Հայրենի բնությունը, բարքերը, պատանեկական և երիտասարդական ցնորքները, հույզերը այնքան վառվորուն են, այնքան թարմ ու տպավորիչ, որ կարող են հիացնել սրտով ու զգացմունքով գրված պատմության լսողներին: Աղայանը ցույց էր տալիս, որ ինքը մի աննման պատմող է: Ցույց էր տալիս, որ ինքը գրական մարդ է, գրելու շքեղ պարզությամբ լեցուն մի ընդունակությամբ, գրական ճաշակի տեր, չափի զգացմունքով օժտված:

Ահա ինչու խոր տպավորություն թողեց նրա վեպը ոչ միայն Պետերբուրգի ուսանողության, այլև ապագա սերունդների վրա: Մեր գրականության մեջ այն ժամանակները դա իսկ որ բացառիկ թարմություն ու ինքնություն ներկայացնող մի երևույթ էր:

Մի երևույթ, սակայն, որ նախորդների հարազատ եղբայրակիցն էր վիպական արվեստի տեսակետից: Ստեղծագործական կարողությունը դարձյալ բացակայում է. «Արություն և Մանվելը» դարձյալ իսկական վեպ չէ իր ամբողջությամբ, այլ անջատ պատկերների մի հավաքածու, որ կենտրոնացած է մի անձի շուրջը: Երբ մանրամասն ծանոթանում ենք Աղայանի կյանքին, պարզում ենք նրա բոլոր գծերը և ապա վերցնում ենք «Արություն և Մանվելը» իբրև այդ հարուստ կյանքի հայելի, այն ժամանակ միայն տեսնում ենք, թե որքան աղոտ է այդ հայելին, տեսնում ենք, թե Աղայանը որքան թույլ ու անկարող է եղել իր ձեռքին ունեցած հարուստ նյութերը գեղարվեստականորեն վերամշակելու, ամբողջացնելու համար:

Լավ գծագրված տիպեր չկան: Կան միայն տիպերի ցաքուցրիվ ուրվագծեր: Միայն Ստեփանը ի՞նչ տիպ է, և նրանից ի՞նչ կարող էր ստեղծագործել վիպագրողի տաղանդը: Աղայանը այդպիսի բան չէ կարողացել անել, որովհետև վիպագրողի կոչումը չէր նրան տված:

Այդ բանը խոստովանում է ինքը Աղայանը, ասելով, որ «Արություն և Մանվելը» լոկ ինքնակենսագրական նշանակություն ունի: Տպվեց նա 1867-ին, և նրա երեսին նշանակված էր, թե դա առաջին հատորն է: Երկրորդ հատորը երբեք լույս չտեսավ և չէր էլ կարող լույս տեսնել: 1888-ին Աղայանը խոստանում էր իր վեպի ամբողջությունը տալ, բայց տվեց միայն եղածի երկրորդ հրատարակությունը, այն էլ փոփոխած և սրբագրած:

«Արություն և Մանվելը», - ասում է Աղայանը, - այդ ամբողջությունը չունի և կարող չէ ունենալ, որովհետև դա մի պատկեր չէ, այլ թանգարան պատկերների: Դրա նախագիծն այնպես է կազմված, որ ժամանակով այս աշխատության (այսինքն՝ «Իմ կյանքի գլխավոր դեպքերի»¹⁴) բովանդակությունը ևս պետք է մտներ նրա մեջ: Շատ անգամ մի բան ուզեցել եմ տեսնել կամ անել, ասելով. «Սրանով «Արությունիս» մեջ մի գուլիս ևս կավելանա»: Փորձը ցույց տվավ, սակայն, որ այս նախագիծն անիրագործելի է գեղարվեստական տեսակետից: Հայտնի անցքերի մեջ գործող անձը անհայտ մնալ կարող չէ, մինչև հեղինակը չէղվի բնականից ու իրականից և չստեղծե տիպերի և անցքերի մի խառնուրդ. իսկ ես չուզեցա անել ազգային ստույգ պատմության օգնելու նպատակով»:

Բոլորովին պարզ է, ուրեմն, «Արություն և Մանվելի» տեղն ու նշանակությունը մեր գրականության մեջ: Սակայն այս դեռ ապացույց չէ, որ եթե Աղայանը ամբողջություն կազմող վեպեր տար, մի նոր բան պիտի ավելացնել «Արություն և Մանվելի» հեղինակի գրական համբավի վրա: Այդպիսի ամբողջացրած վեպեր էլ է նա գրել, բայց դարձյալ ապացուցանելու համար, թե իր դրական դերը վիպագրության մեջ չէ: Այդ վեպերն են «Երկու քույրը» և «Սերը արտաքսված». առաջինը տպվեց առանձին գրքույկով 1879-ին, իսկ երկրորդը՝ «Մշակ» լրագրում (1888-ին):

«Երկու քույրն» էլ շտապ գրված, մի քանի օրում ավարտած մի գործ է: Եվ ավելի ևս անխնամ ու անմշակ, քան անդրանիկ վեպը: Առանձին- առանձին տեսարաններ, պատկերներ կան, որոնք գրողի վարպետություն են ցույց տալիս: Գյուղական կյանքը ցայտուն է, գունագեղ: Գեղեցիկ է մանավանդ Վարդավառի ուխտագնացությունը լեռներում: Բայց զուտ վիպական ձուլվածքը թույլ է, արհեստական: Աղայանն ուզեցել է դուրս բերել գյուղի մշտական, զարհուրելի ցավերից ամենագլխավորը՝ վաշխառու տգրուկի պատկերը: Շատ հետաքրքրական են գյուղական այդ վամպիրի դիմագծերը: Բայց նրա պատկերը միանգամայն առանձնացրած է: Աղայանը չէ կարողացել նրան ձուլել ամբողջության հետ, չէ կարողացել տիպ դարձնել նրան և հյուսել վեպի օր-գանական մասերի հետ: Եվ դիմել է մի շատ միամիտ միջոցի, - դրել է այդ տգրուկի պատկերը առանձին, մի վերնագրի տակ, որ ասում է, «Միջանկյալ պատմություն. ով ուզենա, կարող է չկարդալ»: Շատ բնորոշ միամտություն- նա ցույց է տալիս, թե ինչ հասկացողություն ուներ Աղայանը գեղարվեստի մասին:

Հետաքրքրական է «Սերը արտաքսվածի» նյութը: Աղայանը այստեղ նորից ձեռք մտցնում է գյուղը. շրջապատում է ձեռք գյուղական հարազատ, գեղեցիկ պատկերացրած

¹⁴ Փակագծի նախադասությունը Լեոյինն է (ծանոթ. խմբ.):

իրականությամբ: Այդտեղ նա ցույց է տալիս մի գյուղական հոգի, որ չէ իմացել, թե ինչ է սերը, բայց իմանում է և հափշտակվում է և մտնում է ընտանեկան երջանկության դրախտը: Բայց ավա դ: Խավար հոգուն ո՞վ է տվել կյանքի քաղցրությունները քաղել լիաբուռն, մինչև վերջը: Այդ ընտանեկան երջանկության դեմ ծառանում է հազարամյա անկուշտ վիշապը՝ ժողովրդական տգիտությունից ծնված և անմեռ նախապաշարմունքը: Նա հզոր է, քան ամեն սեր: Նա մարդկանց ոչ միայն բախտի, այլև կյանքի տերն է: Երջանկությունը զոհվում է այդ հազարամյա վիշապին, ընտանեկան դրախտը դառնում է ընտանեկան դժոխք:

Այս վեպը մշակման կողմից ավելի աջող է, քան նախընթացը, ավելի իրական է, ավելի կիրթ ճաշակ և գեղարվեստական գիտակցություն է ցույց տալիս: Բայց իբր ամբողջություն՝ դարձյալ թույլ է:

Գուցե, շարունակելով մարզանքները վիպագրական ասպարեզում, Աղայանին վերջիվերջո աջողվեր ցույց տալ իսկապես վիպագրողի տաղանդ: Կյանքի հարուստ փորձը, բազմադիմի դիտողությունները, տպավորվող և վերլուծող բնավորությունը գուցե վերջիվերջո առաջնորդեին նրան դեպի իսկական ստեղծագործություն: Բայց նա չէ շարունակում գնալ վիպագրության մեջ իր գծած շավղով, գուցե լավ զգալով, որ գեղարվեստի այդ ճյուղը չէ իր բնագավառը: Եվ եթե մենք հիշատակենք Աղայանի մի ուրիշ, կիսատ մնացած գործը՝ «Բաժանությունը», սրանով սպառած կլինենք նրա վիպական գործերի ամբողջ ցուցակը:

Այսպես ասելով, ես նկատի ունեմ իրական վեպը, որի նյութերը հանվում են կյանքի երևույթներից, կենդանի մարդկանցից, այժմեության խորքերից: Աղայանը ունի մի գեղարվեստական գոհար՝ «Անահիտը»: Բայց ես չեմ կարող այս գործը դնել նրա վիպական գրվածքների շարքում: Սա պատկանում է, թեև ըստ ձևի մի պատմվածք, ստեղծագործական այն շրջանին, որի մեջ Աղայանի իսկական գրական մեծությունն է: Մի շրջան, որի մեջ դրդիչները, ոգևորողները արդեն բոլորովին այլ կերպարանք ունեն:

II Մանկավարժը

Յուրաքանչյուր ազգի գոյության հարցը մեծամեծ մրցությունների հարց է: Քաղաքական ահեղ ուժ ներկայացնող ազգերն էլ չեն կարող բախտավոր Հանդիսանալ այդ մրցությունների դաշտում, երբ նրանք ուժեղ չեն և նեքուստ, այսինքն երբ ժողովուրդը տգետ չէ, երբ նա լավ դաստիարակված է:

Երբ այսպես է մեծերի և ուժեղների համար, ի՞նչ պիտի լինեն փոքրերը, թույլերը... Այնպիսիները մանավանդ, որոնք ոչ միայն անկախ ուժ չեն ներկայացնում, այլև ենթարկված են ուրիշների ահագին, կլանող ուժին և իրանց ազգային գոյությունը կարող են պահպանել միայն որոշ պայմաններ կատարելով, որոշ վերապահումների թույլտվության տակ:

Հայ ժողովուրդը, իրան զգացել է այդ դրության մեջ շատ վաղուց: Մեր հինգերորդ դարը հոյակապ է հենց իբրև այդպիսի մի օրինակ: Քաղաքական անկախության վերջին նշույլներից զրկված երկիրը իր ներքին ազգայնական անկախությունից էլ զրկվելու մեծ վտանգին էր ենթարկված: Տիրում էր սիրիական ազդեցությունը մտավոր կյանքի մեջ: Եկեղեցին գործ է

ածում սիրիական, հունական խորթ լեզուները, սիրիացի եպիսկոպոսները նույնիսկ կաթողիկոսական աթոռն էին իրանց ձեռքը գցել: Չկար ժողովրդական դաստիարակություն հասկանալի, հարազատ լեզվով, չկար գիտակցություն: Սիրիական ազդեցության դեմ հաճախ հունական ազդեցությունն էր ուժեղանում, բայց հունական ազդեցությունը, լինելով դարձյալ օտար ու խորթ, քաղաքական տագնապներ էր առաջացնում: Մասանյան թագավորները խիստ հսկում էին, որ Պարսկաստանի դարավոր թշնամի Բյուզանդիան ազդեցություն ձեռք չբերե Հայաստանում: Եվ այդ պատճառով հալածանքներ էին սկսում իրանց պետության մեջ ապրող քրիստոնյաների դեմ, երբ հունական ազդեցությունը արդեն վտանգավոր էր դառնում:

Ի՞նչ պետք է աներ այսպիսի պայմանների ենթարկված մի ժողովուրդ: Նա արավ այն, ինչ պետք է աներ ամեն մի կենսունակ ժողովուրդ: Նա ունեցավ իր սեփական, իր ազգային այբուբենը: Ջենքը, հալածանքը չկարողացան և չպիտի կարողանային հասնել ժողովրդի սրտում ապրող այբուբենին: Եվ սա, այբուբենը, ապահովեց հայ ժողովրդի ազգային ինքնությունությունը քաղաքական դժնդակ պայմանների մեջ անգամ:

Հայ ժողովուրդը այլևս երբեք չկարողացավ քաղաքական մի ընդարձակ, համայնական անկախություն ստեղծել: Այնուհետև նրա պատմությունը կենդանացնողը, նրա կյանքը ուժեղացնողը միայն այն հարցն էր՝ ի՞նչպես է նրա այբուբենը: Եթե նա մոռացվում էր, ժողովուրդը թաղվում էր դժբախտության անդունդի մեջ: Եթե նա դուրս էր հանվում և դառնում էր ուսումնասիրության առարկա, դարոց էր հիմնում, կարդալ էր տալիս, - ժողովուրդը նույնիսկ սուսկալի, անհանդուրժելի աղետների մեջ սկսում էր ինքն իրան հասկանալ, ինքն իրան ուժեղ զգալ և գործել. գործել նույնիսկ ճակատագիր դարձած քաղաքական դժբախտ վիճակի դեմ:

Հայ այբուբենի կատարած այդ դերը շատ անգամ է երևան գալիս մեր պատմության մեջ, և ամեն անգամ մենք տեսնում ենք մի վերածնություն, որ պայծառ լույս է տալիս դարերի խավարի մեջ: Մի Հարանց անապատ¹⁵ 17-րդ դարում, մի Մխիթար Սեբաստացի 18-րդ դարում երևույթներ են, որոնք հայ այբուբենի հրաշագործություններն են ցույց տալիս:

Այդ այբուբենի ահագին նշանակությունը, մեծ հեղափոխիչ ուժը հայերը զգում են մանավանդ այն ժամանակ, երբ շփվում են եվրոպական նոր քաղաքակրթության հետ: Տասնութերորդ դարի վերջին քառորդում է, որ ծնունդ է առնում հայ հրապարակախոսությունը: Նա ամփոփված է Հնդկաստանի հայ վաճառականական գաղթավայրում: Եվ ի՞նչ է նրա առաջին ճիչը: Այն, որ հայ ժողովուրդը սարսափելի տգետ է, հետևաբար և դժբախտ, թե նրան պակասում է ուսումը, դաստիարակությունը: Մեր անդրանիկ պարբերական հրատարակությունը, Շմավոնյան քահանայի «Ազդարար» ամսագիրը էթե մի-մի անգամ խոսում է օրվա հարցերի, այժմեության մասին, այդ միայն այն է, թե պետք է սովորել ուսում տարածել:

Այնուհետև այդ ճիչը դառնում է տիրապես հրամայող բոլոր տեղերի մեր պարբերական հրատարակությունների համար: Նա լցնում է այդ հրատարակությունների բոլոր անկյունները, տանում է մեր մտավոր կյանքի ամբողջ բովանդակությունը: Դատողություններ,

¹⁵ Հարանց կամ Մյունաց մեծ անապատ-հիմնադրվել է Տաթևում՝ 1610 թվականին:

խորհրդածություններ կրթական հարցի շուրջը,- այս է հայ մտավորականության գործը տասնյակ տարիների ընթացքում:

Բայց դատել, խորհել բավական չէր: Պետք էր և գործ կատարել: Բավական չէր դպրոցներ բաց անել, պետք էր և այդ դպրոցներում ուսուցանելի բան ունենալ: Այս պահանջն էլ կատարվում է ըստ չափու կարողության: Հայ գրողը պետք է նախ մտածեր ընթերցողներ պատրաստելու մասին: Ռափայել Պատկանյանը թե՛ «Մայր Արաքսին» էր գրում, թե այբբենարան էր տպում հայ երեխաների համար: Եվ այնքան «Մայր Արաքսի»- ով չէր ոգևորվում, որքան իր այբբենարանը շատ տարածելու մտքով:

Կրթական գործը շատ մեծ էր, բայց գործիչներ շատ քիչ կային: Ի՞նչ կարող էին անել մամուլի, հասարակության, հոգևոր կառավարության միացած ջանքերը, երբ չկային պատրաստած ուսուցիչներ, երբ չկար կրթական սիստեմ, երբ ուսուցումը հին էր, և խալիֆայական դրությունը փոխելով ձևերը, էությունը մնում էր միևնույնը:

Եվ ահա վաթսուներկան թվականները գալիս են նոր մանկավարժության գաղափարները տարածելու Ռուսաստանի մեջ: Այդ գաղափարներին հաղորդակից են դառնում և հայերը: Մենք արդեն տեսանք, որ դրանցից մեկն էր և Ղազարոս Աղայանը Պետերբուրգում: Այդ շարժման արդյունքն էր, որ ռուսահայ երիտասարդները Գերմանիայում և Ռուսաստանում ուսումնասիրեցին մանկավարժական նորագույն սիստեմները, վերադարձան հայրենիք, և այստեղ յոթանասնական թվականներին սկսվեց մի վերին աստիճանի եռանդուն դպրոցական գործունեություն: Բարձրագույն ուսում ստացած դպրոցական գործիչների թիվը հետզհետե շատանում է, ավելանում են և մասնագետ մանկավարժներ՝ Սեդրակ Մանդինյան, Առաքել Բահաթյան:

Եռուն է գործունեությունը, որովհետև միակողմանի չէ նա: Մանկավարժական այլևայլ ուղղությունները, սիստեմները ընդհարվում են իրար հետ, կենդանի հետաքրքրություն են առաջացնում, հատուկ գրականություն են ստեղծում: Վեճերի, բանակոխիվների առարկան դառնում է այն, թե ինչպե՞ս պետք է «տանել» դասավանդությունը, որ հայ երեխան հեշտ և լավ ըմբռնե իր մայրենի լեզուն, ինչպե՞ս անել, որ հայ դպրոցը զարգացնող լինի, տա իր սաներին առողջ մտավոր կերակուր:

Մեթոդների, ուղղությունների այդ ընդհարումների մեջ է և Ղազարոս Աղայանը, որ արագ կերպով գրավում է մրցողների շարքում առաջին տեղերից մեկը: Ինչպե՞ս էր, որ նա, չունենալով մասնագիտական պատրաստություն, չունենալով սիստեմատիկ կրթություն, կարողացավ այդ աստիճան նշանավոր դեր խաղալ մեր մանկավարժական աշխարհում:

Էջմիածնում նա, բնականաբար, երկար չէ կարողանում մնալ և կառավարել տպարանն ու խմբագրել «Արարատը»: Հեռանալով այդտեղից, նա մտավ ուսուցչական ասպարեզը, նախ Ախալցխա գնաց, հետո Ալեքսանդրապոլ, Երևան, Շուշի: Իբրև ուսուցիչ, նա այդ տեղերը տանում էր իր հետ այն, ինչ ստացել էր Պետերբուրգում ինքնակրթության միջոցով:

«Ես ևս,- ասում է նա,- դեռ Պետերբուրգում՝ սեր ձգեցի մանկավարժության վրա ու մասնավորապես այդ նորածիլ ու թարմ գրականությանը նվիրվեցի: Այդ գրականությունը իմ

հայացքների մեջ ահագին հեղափոխություն ձգեց, ամեն բանի վրա ես սկսեցի նայել բարոյակրթական տեսակետից... Նոր էին դուրս գալիս մին մինի ետևից Ֆրեդերիկ, Պետտալոցցու, Դիստերվեզի, Քեիքի թարգմանությունները և ռուս մանկավարժների ինքնուրույն գրածները: «Ուշիտել» (ուսուցիչ) պարբերական թերթը կարդում էինք ամենայն սիրով և հետաքրքրությամբ, մանավանդ նրա փորձնական դասերը զանազան առարկաներից: Ավետիքը (Բաբայան) թարգմանում էր «Մեծ պապի թվաբանությունը»¹⁶ ամենափոքր մանուկների համար, և այդ մեկ լավ առիթ էր, որ փոքրերի մտածողության աշխարհը լավ ուսումնասիրենք: Եվ ինչքա՛ն նորանոր հոգեբանական գյուտեր էինք անում, որոնք սակայն շատ հնուց գտնված էին լինում, ինչպես ստուգում էինք հետո: Բայց սրանով մեր գյուտի արժանավորությունը չէր պակասում, ընդհակառակը՝ ավելի ևս բարձրանում էր, երբ տեսնում էինք, որ նույն նկատողությունն արել են ավելի նշանավոր հեղինակներ»:

Այսքանն էր պատրաստությունը մի ինքնուս մարդու, որ դարձավ նշանավոր և բազմարդյուն հայ մանկավարժ: Դուք տեսնում եք, թե որքա՛ն քիչ էր պաշարը, որքա՛ն հարևանցի, դիլետանտական պատրաստություն կարող էր տալ: Աղայանն, ուրեմն, միայն ընդհանուր դեկավարող սկզբունքներ, գաղափարներ յուրացրեց այն ինքնակրթության միջոցով: Մնացածը նրան տվեց նրա բնական տաղանդը: Եվ փոքր չէր բնության այդ շնորհքը նրա մեջ: Ժողովրդական միջավայրից դուրս եկած մի ինքնածին, ինքնուրույն տաղանդ՝ նա հղկեց ինքն իրան, փայլեցրեց իր սեփական աշխատանքով, իր գյուտերով:

Մանկական աշխարհը, մանկական հոգին դարձան նրա ստեղծագործական ոգևորության անսպառ աղբյուրը: Ջերմ սեր դեպի այդ հոգին, դեպի այդ աշխարհը, սեր, որ չգիտե հոգնել, չգիտե հուսահատվել,- ահա ինչ մեծ գանձ էր գրված այդ տաղանդավոր մանկավարժի կրծքի մեջ: Ալբերտի¹⁷ աստվածաբանության, Սողոմոնի «Վեց հազարյակի» աշակերտը գալիս էր նոր խոսք ասելու հայ մանուկներին, նոր արշալույս բաց անելու նրանց մտքի առաջ: Հարկավոր էր, որ նա մինչև վերջը քամեր հին խալիֆայության դառնությունը, մինչև ամենատեղին աստիճանը, որպեսզի իր սեփական խելքի և ըմբռնողության միջոցով ջախջախեր նրա դարավոր տիրապետությունը: Այս հին ուրվականը Աղայանի մի թշնամին էր: Կար և մի ուրիշ նորը:

Նա դարոցական նստարանի վրա պատրաստված մասնագետ չէր: Հետևաբար և պիտի ազատ լիներ դոկտորինյոր դառնալու, վարդապետողի միակողմանիությունից: Հեղինակությունների կաշկանդող ազդեցությունը չէր ծանրացած նրա վրա: Նա ավելի հարմարություններ ուներ ազատ, ինքնուրույն կերպով վերաբերվելու մասնագիտական դարոցներին, թեոթիաներին: «Մանկավարժությունը ևս դեռ մի մշակված սիստեմ չունե՞ր, - գրում է նա:- Ամեն ոք ինքը պետք է շիներ մի ամբողջություն՝ ցրված նյութերից մի շենք շինելով: Բայց մեկի շինած շենքը մյուսի համար պիտանի չէր: Որևէ սիստեմի կուրորեն հետևողները սովորաբար զուրկ են լինում ինքնուրույն մտավոր գործունեությունից, որովհետև սիստեմի տակ ընկած մանկավարժությունը մասնավոր աղանդի կերպարանք է ստանում, քարանում է և աճելությունից զրկվում»:

¹⁶ Տպված է էջմիածնում և կազմում է մեկը այն դասագրքերից, որ հրատարակեց Պետերբուրգի ուսանողությունը (ծանոթ. հեղ.):

¹⁷ Ալբերտ Մեծի մի քանի աշխատություններ, դեռևս 18-րդ դարի սկզբներից թարգմանվել են հայերեն:

Ահա այս աղանդավորությունն էր, այս միակողմանիությունն էր Աղայանի մյուս թշնամին, որի դեմ նա կռվում էր:

Իբրև այդպիսի անկախ ինքնուրույնություն, Աղայանը խոր հետքեր է թողել մեր կյանքում, նույնիսկ դպրոցական աշխարհից դուրս: Թե ուսուցիչը միայն իր դասարանի սրտերի մեջ ամփոփված մասնագետ չէ, այլև հասարակական կյանքի շարժիչ մեծ ուժ, այդ, կարծում եմ, մեր ուսուցիչներից ոչ ոք այնքան ցայտուն կերպով չէ ցույց տվել, որքան Ղազարոս Աղայանը: Նրա ուսուցչական պաշտոնավարությունը զանազան քաղաքներում եղել է ոչ միայն դպրոցական, այլև հասարակական երևույթ: Այժմ էլ, 30-35 տարուց հետո հիշում են նրա ուսուցչությունը Ալեքսանդրապոլում, Շուշում:

Երբեք չեմ կարող մոռանալ 70-ական թվականների վերջը և ութսունական թվականների սկիզբը Շուշում: Այն ժամանակ ես 19-20 տարեկան երիտասարդ էի, նոր-նոր էի սկսում հետաքրքրվել հասարակական և գրական հարցերով: Խեղճ ու դժբախտ էր գավառական այդ քաղաքը: Մի կատարյալ ճահիճ, որի մեջ չէր կարող արմատ բռնել որևէ նոր բան, որևէ երևույթ, որ հակասեր նրա հին ավանդական հասկացողություններին: Աղայական դասակարգը բաժանված էր թայֆայական կարգերի, որոնք կռվում էին իրար հետ, ներկայացնելով ճիշտ այն պատկերը, որ մենք գտնում ենք Պոլսի ամիրայության պատմության մեջ: Աղայական ալեկոծվող կրքերը ալեկոծում էին և աղաների ստրուկ ժողովուրդը: Բոլոր ազգային գործերը՝ առաջնորդություն, թեմական դպրոց և այլն, այդ կոիվների գլխավոր առարկաներն էին կազմում:

Եվ ահա խավար իրականությունը հանկարծակի մի լուսավոր երևույթ է բաց անում: Շուշում առաջնորդական փոխանորդ է մեր լավագույն հոգևորականներից մեկը՝ Արիստակես վարդապետ Մեղրակյանը: Իբրև առաջավոր մտքի ներկայացուցիչ, իբրև անկաշառ, գրասեր և ուսումնասեր մի գործիչ, նա առաջին իսկ օրերից առանձին ուշադրություն է դարձնում թեմական դպրոցի ընկած դրության վրա: Հեռացնում է ուսուցչական կազմը, չնայելով, որ այս բանը ահագին աղմուկ և իրարանցում է պատճառում ճահիճ քաղաքի մեջ: Հրավիրում է նոր խումբ, որի մեջ գլխավորը, որի հոգին Ղազարոս Աղայանն էր: Սկսում է նոր դարազուլուխ ոչ միայն թեմական դպրոցի, այլև հասարակական կյանքի համար:

Ժամանակն էլ շատ նպաստավոր էր: Դա ռուս-թուրքական պատերազմին հետևած ժամանակն էր, երբ մասնավորապես հայության մեջ սկսվեց մի արտասովոր, պատմության մեջ իր նմանը չունեցող հասարակական շարժում: Կենդանի գործի, ազգային-կուլտուրական սկզբնավորումների հարուստ ժամանակը: Գլխավոր ոգևորողը թուրքահայկական հարցն էր, բայց այդ մեծ ոգևորությունը ազդում էր մեր գրականության, մամուլի, թատրոնի, բայց մանավանդ դպրոցական գործի վրա: Հիմնվեցին մի շարք ընկերություններ, երիտասարդության գաղափարը դարձավ ծառայել ժողովրդին՝ մտնելով նրա մեջ, բարձրացնելով նրա մտավոր կյանքը մակերևույթը:

Շուշին էլ թափ տվեց ավանդական ծուլության և անշարժության փոշին: Երևան եկավ գործող երիտասարդություն, որ հավաքվեց թեմական դպրոցի ուսուցչական խմբի շուրջը: Կազմվեց գրական շրջան, դպրոցական գործը առաջ քաշվեց, և հասարակությունը, սովորաբար ծուլ և անտարբեր, սկսեց հետաքրքրվել, ոգևորվել:

Թեմական դպրոցի լավագույն ժամանակն էր: որ այնուհետև երկար ժամանակ չկրկնվեց և

հենց այդ պատճառով էլ ժողովրդի հիշողության մեջ միշտ մնաց «Աղայանի, Մանդինյանի ժամանակը» իբրև հավետ ցանկալի կենդանության մի շրջան: Միրտը, հոգին Աղայանն էր: Ղարաբաղը հմայված էր իր գավակի հսկայական հասակով, խոսք ու զրույցով, գործունեությամբ: Այդ ժամանակ էր, որ տեղացի երիտասարդությունից պատրաստվեց ժողովրդական ուսուցիչների մի խումբ, որ այնուհետև նշանավոր հանդիսացավ թեմի դպրոցական գործի մեջ: Մանկավարժական նոր մեթոդով ուսուցումը սովորեցրել էին Աղայանը և Մանդինյանը: Այդ մեթոդը տարածվեց գյուղերում, և ժողովրդի դաստիարակության գործը դրվեց առողջ սկզբունքների վրա:

Հասկանալի է, ուրեմն, ընդհանուր ոգևորությունը: Հասարակ ժողովուրդն անգամ զգում էր, որ ինչ-որ լավ գործ է կատարվում իր համար: Աղայանին էին ցույց տալիս ամեն կողմից: Աղայանի վրա նույնիսկ ոտանավոր սարքեցին: Ինքս եմ լսել, թե ինչպես կոշկակարի մի աշակերտ արտասանում էր այդ պարզ և անարվեստ ոտանավորը, որ սկսվում էր՝ «Խնդիրքս առ, պարոն Աղայան» խոսքերով:

Սակայն ոչինչ հարատև չէ հայկական երկնակամարի տակ: Թեմական դպրոցի այդ փայլուն ժամանակը շուտ անցավ գնաց, իբրև վաղանցուկ երագ: Հեռացավ այդ շարժման սկզբնապատճառ Սեդրակյանը, նրա տեղ եկան այնպիսի հոգևորականներ, որոնք հնավանդ կարգերը նորոգեցին: Վերջիվերջո հեռացավ և Աղայանը՝ զգվելով իր բուն հայրենիքի իրականությունից: Նորից կյանքը մտավ իր սովորական, մոխրագույն կերպարանքի մեջ, և նորից թագավորել սկսեցին աղաների կրքերն ու անձնական հաշիվները:

«Շուշի քաղաքը, - գրում է Աղայանը, - վաճառաշահ չլինելով՝ ամենայն տարի խախտվում է սաղերն ու տռուզները դուրս են գնում, քաղաքում մնում են փուչն ու տականքի մանրունքը: Ես գործ ունեի փուչերի հետ և սրա համար էլ նահատակվում էի չարաչար: Դավալարությունը թե ներսից և թե դրսից էր և այնպես բարդ էր, որ դրանց բոլորի առաջն առնելու համար պետք էր մի առանձին խորհրդարան»:

Տարաբախտաբար, չափազանց ճիշտ է այս նկարագրությունը Շուշու վերաբերմամբ: Պատմական էր այս քաղաքի տխուր ճակատագիրը՝ հալածել ամեն լավ բան, ամեն հուսատու երևույթ: Աղայանին ասում էին. «Դեռ քեզ չափ ոչ ոք չի դիմացել մեր քաղաքում: Շանշյանի պես մարդուն, որ այնքան երախտիք ցույց տվավ մեր ուսումնարանին, այնքան արտոնություն ձեռք բերեց, մենք նրա ուսուցիչներին ծեծեցինք, իրան էլ դուրս արինք, բայց դու որ այդքան չարչարվում և դիմանում ես, երևի նրանից է, որ մեզանից ես, գիտես մեր բնությունը, մեր լեզուն, մեզ հետ վարվելու եղանակը»:

Եվ նա ավելացնում է. «Այո, գիտեի, բայց դարձյալ հեռացա՝ առանց ետ մտիկ տալու Ղովտի կնոջ նման, որ շուշեցոց պես չքարանամ»:

Նույնիսկ ահագին եռանդը, դիմադրելու մեծ կարողությունը, ժողովրդի մեջ վաստակած մեծ համարումը չկարողացան Աղայանի համար տանելի կացություն ստեղծել Շուշու մթնոլորտում:

Նա վերադառնում է Թիֆլիս և այստեղ ընկնում է, ինչպես ինքն է ասում, մի մանկական դրախտի մեջ: Նրա բարեկամ բժշկապետ Ավետիք Բաբայանի ամուսին տիկին Սոփիան բաց

Էր արել առաջին մանկական պարտեզը, որ օրինակելի դրության էր հասցրել շնորհիվ իր ստացած հատուկ մանկավարժական կրթության: Աղայանին մտցնում են այդ հիմնարկության մեջ, տիկին Բաբայանը շրջապատում է նրան լավագույն պայմաններով, փայփայում, գուրգուրում է այդ ինքնաձին մանկավարժական տաղանդը: Աղայանի համար կյանքի նոր շրջան է սկսվում: Բաբայան ամուսինների սիրալիր հարկի տակ նա ավելի ևս ընդարձակում է իր մանկավարժական ընդունակությունները, վերամշակում է իր տեսությունները, իր դասավանդական գաղափարները և ավելի համարձակ ու համոզված՝ հրապարակ է գալիս պաշապանելու իր ըմբռնումներն ու հասկացողությունները մանկավարժական մամուլի մեջ:

Նրա ախոյանը այս ասպարեզում Մանդինյանն է: Մոտիկ բարեկամներս էին երկուսն էլ - Մանդինյան և Աղայան: Աղայանն էր հրավիրել Մանդինյանին Շուշի: Բայց հենց այստեղ էլ նրանց մեջ սկսվեց գժտություն: Մանկավարժական տարբեր ուղղությունները ի դեմս երկուսի ընդհարվեցին իրար հետ. այդ ընդհարումները տևական բնավորություն ստացան և մինչև վերջն էլ շարունակվեցին խիստ, կրքոտ բանակովի ձևով:

Հետաքրքրական կլիներ այստեղ գեթ շատ համառոտակի բացատրել, թե երկուսից ո՞րն էր իրավացին-մանկավարժական հատուկ, մասնագիտական կրթություն ստացած Մանդինյան՞ը, թե ինքնուս Աղայանը: Սակայն ինձ ձեռնհաս չեմ համարում այս տեսակ գուտ մասնագիտական հարցերի վերաբերմամբ: Ուստի թողնում եմ մեր մասնագետ մանկավարժներին, որ նրանք անկողմնապահությամբ մշակեն այս հարցը, որ մեծ կարևորություն ունի մեր դպրոցական կյանքի պատմության համար: Ցավելով պիտի ասեմ, որ այսօրվա մեր մանկավարժական գրականության մեջ միանգամայն բացակայում է հայ մանկավարժության քննական պատմությունը: Կարծես հայ դպրոցի ուսուցման եղանակը անցյալ չունի: Կարծես հայ ուսուցչի համար մանկավարժական սիստեմների թուուցիկ տեսություններից ավելի ուսանելի և հրահանգիչ չէր լինի այն հարցերի ուսումնասիրությունը, որոնք տասնյակ տա-րիներից ի վեր ծեծվել են մեզանում, որոնք աշխարհայացքներ, ուղղություններ են մշակել և որոնք հենց այդ պատճառով էլ խոշոր մտավոր հարցեր են: Ի՞նչ է պակասում մի այդպիսի բնական պատմության համար - նյո՞ւթը, փորձե՞րը: Ո՛չ: Պակասում է նրանց անկախ ուսումնասիրությունը: Եվ քանի որ չկա նա, մենք ոչ մասնագետներս, չենք կարող այսօր որոշել Մանդինյանի և Աղայանի կատարած խոշոր դերերը մեր դպրոցական գործի մեջ:

Այսպես է դրությունը թեորիայի, սիստեմի, ուսուցման արվեստի, մեթոդի վերաբերմամբ: Բայց կա և գործնական կողմը, կա գրական կողմը: Այստեղ արդեն կարող ենք դատավոր լինել և մենք ոչ մասնագետներս:

Այս գրական հարցին էլ ես կղիմեմ այժմ:

III Մանկական գրողը

Դպրոցական շարժումը մեզանում առաջ բերեց դասագրքերի հարցը: Դեռ 1874 թվին Վահան վարդապետ Բաստամյանը գրում էր իր «Դպրոց» ամսագրի մեջ. «Մի լավ դասագիրք ավելի շատ արդյունքներ կարող է տալ, քան թե տասը լավ վարդապետներ, որովհետև տասը վարժապետները կարող են ուսուցանել միայն տասը ուսումնարանի մեջ, իսկ մի լավ

դասագիրքը կարող է անցնել հարյուրավոր վարժապետների և հազարավոր աշակերտների ձեռքը»¹⁸:

Այսպես է ճշմարտությունը բոլոր առարկաների վերաբերմամբ: Բայց մենք այստեղ վերցնենք ամենագլխավոր առարկան՝ լեզվի ուսուցումը նրա առաջին աստիճանի վրա, ուր տարրական այբբենարանն է, ուր այդ մեծ արվեստի առջև կանգնածը մանուկն է, մի քնքուշ, նոր-նոր կազմակերպվող հասակ, որ այնքան կարոտ է բազմակողմանի խնամքի, ուշադրության, որ կարող է ծլել ու ծաղկել, կարող է խամրել՝ նայած թե ինչպես են վարվում նրա հոգու, նրա ուղեղի հետ:

«Հին խալիֆայական մանկավարժությունը, - ասում է նույն ուսումնական վարդապետը, — ուսման ամբողջ ծանրությունը դնում էր աշակերտի վրա: Ուսուցիչը միայն ցույց էր տալիս՝ այստեղից այստեղ: Սովորելը, պատասխանելը աշակերտի պարտքն էր, որի համար էլ բացառապես գոյություն ուներ դասագիրքը: Վարժապետը յուր վարժապետական լայն և ընդարձակ գիտություններով ի՞նչ կարոտություն ուներ նայել դասագրքի մեջ, այդ անպատվություն էր նրա համար, այդ ներելի էր միայն տգետին... Այնուհետև ի՞նչ էր մնում աշակերտին, եթե ոչ թութակի պես, առանց ամեննին հասկանալու, բերան սերտել իր դասը այստեղից այստեղ: Նպատակը իրագործվում էր ամենայն աջողությամբ, բայց միննույն ժամանակ աշակերտը բթանում էր, նրա «քնքուշ» ընդունակությունը թմրում էր և մեռնում, նրա սուր հիշողությունը կորչում էր բոլորովին»:

Հայտնի են մեր խալիֆայական դասագրքերը. նախ հեզարան կամ այբբենարան, որ սովորացնում էր տառերը և ապա երկար ու ձիգ վանկերը, սկսած մեկ վանկից մինչև յոթը: Այնուհետև գալիս էր Մաղմոսի առաջին կանոնը՝ դարձյալ վանկերով, ապա Ժամագիրքը և այլն: Լեզուն երեխային միանգամայն անմատչելի, բովանդակությունը անհասկանալի: Ուղեղ էր մաշեցնում նա, մորթում էր իրան՝ այդ իմաստությունները յուրացնելու համար:

Այդ բարբարոսական սիստեմից հայ երեխաներին ազատելու ջանքերը շատ վաղ սկսվեցին մեզանում: Մեր վերածնության ամենավաղ առավոտին, երբ նույնիսկ դեռ արշալույսն էլ չէր երևում, մեր գործիչների առաջին հոգսն էր բարեկարգել հայ այբուբենի դասավանդությունը: Եվրոպական լուսավորության հաղորդակից դարձող յուրաքանչյուր հայ գործիչ սրբազան պարտականություն էր համարում աշխատել այդ ասպարեզում: Առաջին փորձ անողը Խաչատուր Աբովյանն էր, որի «Նախաշավիղ կրթության» աշխատությունը գրագիտության դասագիրք է:

Այնուհետև հիսնական, վաթսուհանյակ թվականներին էլ մենք ունեցանք մի շարք դասագրքեր, որոնք աշխատում էին ուսուցման դյուրությունը ապահովել: Յոթանասնական թվականներից ջանքերը ավելի ևս սաստկանում են, և դասագրքերը պատրաստելու մեջ եռանդուն մասնակցություն են ցույց տալիս արդեն և մասնագետ մանկավարժները:

Վերին աստիճանի հետաքրքրական երևույթ է ներկայացնում այդ դասագրքերի ժողովածուն, երբ նա դասավորված է ժամանակագրական կարգով: Կարելի է քայլ առ քայլ հետևել, թե մայրենի լեզվի ավանդումը ի՞նչ տեսակ հայացքների, ի՞նչ գաղափարների, ի՞նչ ազդեցությունների տակով է անցել 60-70 տարվա ընթացքում, թե ինչպե՞ս է գնացել դեպի կատարելագործություն, մշակման ի՞նչ աստիճաններ է անցել: Երևույթը միայն զուտ

¹⁸ «Դպրոց», 1874, N1, էր. 23 (ծանոթ. հեղ.):

մանկավարժական հետաքրքրություն չէ ներկայացնում, այլ ունի գրական մեծ նշանակություն:

Փորձենք մի թուուցիկ տեսություն գցել այդ երևույթի վրա¹⁹:

Սկիզբը՝ Աբովյանի «Նախաշավիղ կրթության», թեև նա տպվել է շատ ուշ, այն է՝ 1862-ին: Առաջին աշխարհաբար դասագիրքը, որքան գիտենք, թեև գրաբարը միանգամայն չէ արտաքսված, առաջին դասերը գրաբարով են գրված: Կազմված է եվրոպական օրինակների հետևողությամբ, նախ ծանոթություն շրջապատող առարկաների հետ, ապա մանուկները առաջնորդվում են դեպի բարոյագիտություն և հայրենագիտություն (պատմություն): Նյութերի մասը կազմված է նմանողությամբ օտար աղբյուրների, նույնիսկ թարգմանություններ էլ կան, մի մասն էլ ինքնուրույն է: Ոտանավոր նյութեր շատ կան և ամենը Աբովյանի մշակությունն են: Հեղինակը աշխատել է ստեղծել գրական լեզու. «Վերք Հայաստանիի» գավառաբարբառը չէ: Աշխուժություն նկատվում է և այս լեզվի մեջ:

Ընդհանրապես, իր ժամանակի տեսակետից, հետաքրքրաշարժ, բազմակողմանի, աշխույժ դասագիրք է:

«Առաջին հոգեդեն կերակուր հայագգի երեխաների համար»՝ Ստեփանոս Նազարյանի (1853թ.): Սկզբնական վարժություններից հետո անցնում է բարոյախոսության, և այստեղ ավելի քարոզիչ է, հրապարակախոս, քան ուսուցիչ: Այնուհետև անցնում է մանրամասն աշխարհագրության, բնական պատմության, թվաբանության: Թե ինչ հասկացողություն ուներ Նազարյանը սկզբնական կրթության չափերի մասին, երևում է, օրինակ, նրանից, որ 37-րդ դասում շարել է գերմանական դաշնակցության մեջ մտնող բոլոր մեծ և մանր երկրներն ու ազատ քաղաքները, իսկ հայրենագիտության և ոչ մի դաս: Ընդհանրապես, ծանրամարս մի գործ:

«Այբբենարան»՝ Ռաֆայել Պատկանյանի: Փոքրիկ մի տետրակ, որ, սակայն, մեր հին հեգարաններից զանազանվում է բովանդակությամբ և դյուրություններով: «Բարոյական խրատք և հատվածք արձակք և չափավորք ի պետս ընթերցանության մանկանց»՝ անհայտ հեղինակի. Թիֆլիս, 1855: Աշխարհաբար և գրաբար հատվածներ բարոյախոսական բովանդակությամբ:

Թիֆլիսում հիսնական թվականների վերջերում էլ Միքայել Պատկանյանը թարգմանում է իր ժամանակին շատ հռչակված «Друг детей» ռուսերեն դասագիրքը («Պարզ մանկանց» անունով):

«Բարոյական պատմությունը երեխայոց համար. աշխատասիրություն հայ աշակերտաց զիմնագիային Թիֆլիստ»: 1860-ին տպված մի մանրատառ տետրակ, որի մեջ կան մի քանի պատմվածքներ (թարգմանություն կամ փոխադրություն) խրատական բովանդակությամբ:

¹⁹ Տարաբախտաբար, ներկա բուպեին ես կարող եմ ձեռքիս տակ ունենալ իմ գրադարանի այն բաժինը, ուր հավաքված են մեր հին և նոր դասագրքերը, ուստի այս տեսությունը չէ կարող անթերի չլինել: Ես կուզենայի մտցնել և թուրքահայոց դասագրքերը, բայց այս անկարելի եղավ առայժմ (ծանոթ. հեղ.):

«Մեր»՝ Գաբրիել Խատիսյանի (1869): Չանազան հողվածներից բաղկացած ընթերցարան: Նյութը մեծ մասամբ թարգմանական, բայց կան և մի քանի աջողված ինքնուրույն կտորներ:

Նույն տիպի դասագրքի զարգացում կարելի է համարել Գևորգ Տեր-Ալեքսանդրյանի և Ալեքսանդր Երիցյանի կազմած «Ընթերցարանը», որ յոթանասնական թվականների սկզբում տարածված էր մեր դպրոցներում: Նրանից հետո նույն ուղղությամբ և նույն ոգով, բայց ավելի բնդարձակ ծավալով, գալիս էր Ն. Տեր-Հակոբյանի «Ընթերցարանը»: Այստեղ ավելի շատ են ինքնուրույն հայ բանաստեղծություններից վերցրած կտորները:

Մոտավորապես այս պատկերն են տալիս 25-30 տարիների ջանքերը: Չանքեր, որոնք մի հայտնի չափով պիտի խախտեին խալիֆայական սիստեմը, առանց, սակայն, կարողանալու նրան արմատախիլ անել: Ուսման առաջին քայլերը, այբուբենը, այնուամենայնիվ, մնում էին խալիֆայության ճանկերում: Եվ այս նոր դասագրքերն էլ շատ սահմանափակ շրջաններում էին տարածվում, ամենաշատը՝ մեր թեմական և մի քանի գավառական դպրոցներում: Ժողովրդի մեջ գրագիտություն տարածողները շարունակում էին մնալ Մաղմոսն ու Ժամագիրքը:

Գալով նոր, աշխարհաբար դասագրքերի ներքին արժանավորություններին, մենք տեսնում ենք, որ նրանց տված պաշարը, լինելով նորություն, այնուամենայնիվ առանձին մի մեծ թարմություն մտցնել չէր կարող մեր դպրոցական աշխարհը: Նյութը, ինչպես տեսանք, թարգմանական, լեզուն՝ արհեստական, ուղղությունը՝ միանման, նույնպես ձանձրալի: Չկա հատուկ մանկական լեզու, հատուկ մանկական աշխարհ, չկա գեղարվեստական ճաշակ, համ ու հոտ:

Ավելին, սակայն, չէր էլ կարելի սպասել: Հայերը դաստիարակվում էին գլխավորապես Ռուսաստանում և ռուսական ազդեցության տակ էին աշխատում: Իսկ Ռուսաստանն էլ հենց այն էր տալիս, ինչ տեսնում ենք մեր դասագրքերում: Այնտեղ էլ, ինչպես և մեզանում, չկար ժողովրդական դպրոց, ժողովրդական կրթական սիստեմատիկ ծրագիր: Աղայանը մեզ արդեն պատմեց, թե վաթսունական թվականները ինչ ահագին հեղաշրջում կատարեցին Ռուսաստանի դպրոցական գործի, մանկավարժական հասկացողությունների մեջ: Ահա այդ նոր ժամանակի ազդեցությունը պիտի գար-հասներ մեզ, որպեսզի մեզանում էլ գոյություն ստանար նոր, ժողովրդական դպրոցը²⁰:

Եվ այդ ազդեցությունը շատ չուշացավ: Ռուսաստանի դպրոցական տարեգրությունների մեջ ոսկի տառերով է արձանագրված 1864 թվականը, երբ հռչակավոր մանկավարժ Կոնստանդին Ուշինսկին հրատարակեց իր հռչակավոր «Родное слово»-ն, այն դասագիրքը, որ այսօր էլ աննման է իր տեսակի մեջ և որ 6-9 տարեկան երեխաներին սովորացնում է մայրենի լեզուն, սովորացնում է գիտակցորեն, կատարելագործված սիստեմով: Համաշխարհային գրականության մեջ անգամ շատ քիչ են այնպիսի գրքեր, որոնք Ուշինսկու այս աշխատության նման ահագին դեր կատարած լինեն մի մեծ ժողովրդի դաստիարակության

²⁰ Այդ աշակերտներն էին Գևորգ Տեր-Ալեքսանդրյան, Գևորգ Բաբայան, Սմբատ Կարինյան, Ալեքսանդր Երիցյան, Միքայել Քոչարյան, Չաքարիա Գրիգորյան, Սարգիս Ետիգարյան, Գևորգ Ներսիսյան: Դա նույն խումբն էր, որ, ինչպես տեսանք, մեծ ազդեցություն է ունեցել Ղազարոս Աղայանի վրա (ծանոթ.հեղ.)

գործում²¹:

Յոթը տարուց հետո, 1871-ին, Ուշինսկու դասագրքի հայերեն թարգմանությունը տպվեց Թիֆլիսում՝ «Մայրենի լեզու» անունով: Այդ գործը կատարողն էր մեր ուսուցիչներից մեկը՝ Նիկողայոս Տեր-Ղևոնդյան:

Եվ մեզանում էլ ոսկի տառերով արձանագրելու մի դարագլուխ է այդ թվականը՝ 1871-ը: Ուշինսկու տաղանդավոր սիստեմը գալիս էր չոր ու ցամաք, սքուլաստիկ դասագրքերով տանջված հայ երեխային էլ կենդանացնելու:

«Մայրենի լեզուն» ահագին դեր կատարեց ոչ միայն մեզանում, այլև Թուրքիայում, ուր նա վերածվեց թուրքահայ բարբառի և դարձավ ամենատարածված դասագիրքը: Այբուբենի և նրան հետևող առաջին ընթերցանության չափազանց դժվար գործը այսպիսով հեշտացած էր:

Միննույն ժամանակ դա գարուն ավետող առաջին ծիծեռնակն էր: Մի ուրիշ ուսուցիչ (եթե չեմ սխալվում, Կամսար Տեր-Դավթյան) թարգմանեց նույն Ուշինսկու մի ուրիշ, ոչ պակաս նշանավոր դասագիրքը՝ «Детский мир» («Մանկական աշխարհ»): Սեդրակ Մանդինյանը սկսեց հրատարակել իր մենագրությունները մանկավարժության տեսական հարցերի վերաբերմամբ: Առաջ եկավ պարբերական մամուլ բացառապես նվիրված մանկավարժության («Դպրոց» Վ. վարդապետ Բաստամյանի, «Մանկավարժական թերթ» Հ. Տեր-Նովիհաննիսյանի, ապա «Վարժարան» Ն. Խոսրովյանի): Այդ ամսագրերի մեջ սկսեցին ծեծվել սկզբնական ուսուցման հարցերը: Երևան եկան մասնագետ մանկավարժների տարբեր ուղղությունները: Եվ որ գլխավորն է, սկսեցին կազմակերպել հատուկ մանկական գրականություն, սկսեցին ստեղծել հատուկ մանկական լեզու: Մասնագիտական ամսագրերը առանձին բաժին բաց արին, ուր խոշոր գրերով ընթերցանության նյութ էին տալիս մանուկներին:

Այսպես էր յոթանասնական թվականների շարժումը: Այդ թվականների ամենագլխավոր մեծագործություններից մեկն էլ այն էր, որ ժողովրդական դպրոցը սկսեց տարածվել մեզանում՝ մտնելով բուն ժողովրդական խավերի մեջ և դուրս անելով այնտեղից դարերով բնակալած խալիֆայական գրությունը: Պահանջը մեծանում էր, գործունեության ասպարեզը ընդարձակվում էր: Եվ գործունեությունն էլ այդ պատճառով ավելի և ավելի եռանդուն էր դառնում:

Ութսունական թվականներին թեև մեր դպրոցական գործը խուժ ու խոռոչների է հանդիպում, ժայռերի է զարնվում, բայց մանկավարժական գրականության մեջ դադար չէ առաջանում: Շարունակվում է, զարգացման աստիճանների օրենքներով, այն մղումը, որ սկսվել էր յոթանասնական թվականներին: Հայերեն լեզվի սկզբնական դասագրքեր են հրատարակում մասնագետ մանկավարժները («Ազգային ընտանեկան աշխարհք», «Նահապետական աշխարհը»՝ Ս. Մանդինյանի, «Առաջին ընթերցարան»՝ Ա. Բահաթրյանի), ոչ մասնագետներն էլ ընթանում են նույն ճանապարհով («Հայոց լեզվի ուսուցիչ»՝ Հ. Նազարյանի): Նույն ութսունական թվականներին սկսում է հրատարակվել «Աղբյուր» մանկական ամսագիրը՝ ռուսաց «Родник» մանկական ամսագրի նմանությամբ: Այնտեղ հավաքվում են դպրոցական

²¹ Անցյալ 1910 թվականին հրատարակվեց այդ դասագրքի առաջին տարվա 140-րդ տպագրությունը: Տարիներ են եղել, երբ հարկավոր է եղել երեք-չորս անգամ հրատարակել (ծանոթ. հեղ.):

գործին մոտիկ կանգնած երիտասարդ ուժեր, որոնք և շենքով-շնորհքով մանկական գրականության հիմք են դնում:

Թիֆլիսում է դարձյալ, որ յոթանասնական թվականների վերջերում կազմվում է, հանգուցյալ Գաբրիել Միրզոյանի ղեկավարությամբ, մի փոքրիկ շրջան՝ հատկապես մանկական գրքեր հրատարակելու համար («Կարմիր լապտեր» և այլն): Այդ ձեռնարկությունից է ծնվում հրատարակչական ընկերությունը:

Մի ամբողջ շարժում, ինչպես տեսնում եք, մի ամբողջ հարստություն: Սակայն մենք պիտի գնահատենք այդ շարժման, այդ հարստության իսկական արժեքը: Եվ դրա համար պիտի թափանցենք այդ գրականության խորքերը, պիտի տեսնենք, թե իսկապես ինչ էր նա ներկայացնում:

Սկսենք դարազլիից՝ Տեր-Ղևոնդյանի «Մայրենի լեզվից»:

Ի՞նչ էր Ուշինսկու ահագին հեղափոխիչ գործի իսկական գաղտնիքը: Ի՞նչ գաղափար էր այսքան մեծ հաղթանակ տանում նրա միջոցով:

Տարիներ ապրելով Շվեյցարիայում, դիտելով արտասահմանյան դպրոցները փոքրահասակների համար, տաղանդավոր մանկավարժը եկավ այն եզրակացության, որ մինչև 8 կամ նույնիսկ մինչև 10 տարեկան հասակում գտնվող երեխայի սկզբնական դաստիարակությունը իսկապես պիտի կատարվի ընտանիքի մեջ, և լավ կարող է լինել միայն այն դպրոցը, որ ընտանիքի բնավորություն ունի ավելի, քան դպրոցի:

Ահա այդ մեծ սկզբունքն էին իրագործում նրա դասագրքերը: Ընտանիք... Դա իրան հատուկ ֆունկցիաներ կատարող հիմնարկությունն է բոլոր ազգերի մեջ: Բայց դա միննույն ժամանակ առանձին տեղային գունավորումներով ապրող մի հիմնարկություն է յուրաքանչյուր ազգի մեջ: Ընտանիքը յուրաքանչյուր ազգի հիմքն է և ներկայացնում է ուրույն ազգագրական մի միջավայր՝ իր առանձին հոգեկան աշխարհով, արտահայտության առանձին եղանակով, իր լեզվով, իր պաշտամունքով: Ազգերի տարբերություն կա և կլինի միշտ, քանի որ ընտանիքը կշարունակե կատարել իր պատմական դերը, կշարունակե մնալ յուրաքանչյուր ժողովրդի ազգագրական առանձնահատկությունների հիմնական, ամենագլխավոր թանգարանն ու հայտարարը:

Եվ ընդունելով այն մեծ ճշմարտությունը, թե դպրոց ու ընտանիք պիտի ձուլվեն միասին երեխային դաստիարակելու համար, Ուշինսկին պիտի ամբողջովին փոխադրվեր ռուս ժողովրդի ընտանիքի մեջ, որպեսզի նրա լեզվով, նրա տված գեղարվեստական պաշարով կերտե այն նյութը, որ պիտի զարգացնե այդ ընտանիքի անդամը կազմող երեխային, պիտի նրան սովորացնե մայրենի լեզուն: Ռուս ընտանիքը ներկայացնող դասագիրքը չէր կարող լինել շվեյցարական կամ մի այլ դասագիրք: Նա կարող էր լինել միայն բուն ռուս դասագիրք: Ռուս երեխային հարազատ մայրենի խոսքը, իհարկե, չէր կարելի բերել Շվեյցարիայից, Ֆրանսիայից կամ Գերմանիայից: Նրան կարելի էր հանել միմիայն ռուս ժողովրդի սրտից: Եվ Ուշինսկին տաղանդավոր էր ոչ միայն իբրև գյուտ անող, այլև իբրև իրագործող, ոչ միայն իբրև մանկավարժ, այլև իբրև գրող: Նյութեր իր հոյակապ կառուցվածքի համար նա

առատությամբ գտավ ռուս ժողովրդական բանաստեղծության մեջ: Բայց այդ ժողովրդական գանձարանը նրան միայն հում նյութեր մատակարարեց: Այդ հում նյութերը նա վերամշակեց մեծ հմտությամբ և տարագով, վերամշակեց այնպես, որ արհեստականություն չստացվեց, այլ գեղարվեստական հարազատություն, «ոսկր յոսկերաց, արիւն յարենե», անթարգմանելի տեղայնական ոգով, առանձնահատուկ, սպեցիֆիկ համ ու հոտով:

Ահա ինչով հաղթեց նա: Ահա ինչն էր նրա գործի հմայիչ, անխորտակելի, աշխարհակալ ուժը:

Հիմա գանք մեզ: «Родное слово»-ն մեզանում միայն թարգմանվում էր, այն էլ բառացի կերպով: Փորձը այնքան անաջող էր, որ այդ գեղեցիկ սկզբնավորությունը մեռելածին էլ կմնար, եթե թարգմանիչ Ն. Տեր-Ղևոնդյանը չլիներ գրչի տեր մարդ, հայերենը լավ իմացող, աշխատասեր: Նա աշխատեց, շարունակ բարեփոխություններ մտցրեց, կոկեց, մշակեց, գնալով հեռացավ բնագրից: Բայց և այնպես, նրա գործն այն չէր, ինչ ռուսերենը: Սեփական աշխատանքով նա չկարողացավ իր դասագրքի նյութերը հասցնել մինչև բուն հայկական տեղայնություն, բուն ժողովրդական ոգի: Թարգմանությունները թարգմանություններ էլ մնացին, թեև կոկված, մշակված: Մեր գրական լեզուն էր, որ, սակայն, արտահայտում էր ոչ ինքնատիպ, գունավորված տեղականը:

Իսկ յոթանասնական թվականների մեր մանկական գրականությունը չունեք այնքան ինքնատիպ ժողովրդականություն, որ պ. Տեր-Ղևոնդյանը գոնե նրանից վերցնեք հարկավոր հատվածներ իր դասագրքի համար:

Եվ իրավ, ամբողջ այդ գրականությունը արհեստական է և ոչ թե ստեղծագործական: Բարի ձգտումներով ոգևորված մարդիկ ամեն ջանք գործ են դնում հայ երեխային ընթերցանության նյութ տալ: Մրանք աշխատում են, մշակում են, կյանքից են վերցնում, փոխադրում, հարմարեցնում են: Բայց և այնպես, հայ ընտանիքը, հայ ժողովրդական անհատականությունը դպրոցում չէ, հեռու է նրանից:

Չեն կարողանում օգնել և մեր մասնագետ մանկավարժները: Նրանք դասագրքեր են կազմում, բայց իրանք մանկական գրողներ չեն: Օրինակ, Առաքել Բահաթրյանը: Նա, իհարկե, շատ լավ հասկանում է ժողովրդական բանաստեղծության ասիակն դերը մանկավարժության մեջ և ինքն էլ դիմում է այդ աղբյուրին: Գիտե նույնպես, որ չէ կարելի վերցնել ժողովրդական բանաստեղծությունն այնպես, ինչպես որ նա կա՝ գավառաբարբառով, անմշակ: Նա իր վրա վերցրեց և գրական մշակումը, բայց կարծես միայն ապացուցելու համար, թե կարելի է լինել լավ պատրաստված, հմուտ, գուցե նույնիսկ տաղանդավոր մանկավարժ, բայց լինել միևնույն ժամանակ շատ խակ իբրև գրող, իբրև գեղարվեստորեն պատմող: նայեցեք նրա «Առաջին ընթերցարանին»: Որքա՛ն արհեստականություն լեզվի և արտահայտության եղանակի մեջ, որքա՛ն չորություն, ցամաքություն: Ո՛չ երևակայություն, ո՛չ ոգևորություն, ո՛չ ոճ: Մառն, անտարբեր պատմող է, առանց նույնիսկ չափի զգացմունքի:

Ս. Մանդինյանն էլ ամբողջովին ժողովրդական բանաստեղծության վրա հիմնեց իր «Հնտանեկան աշխարհը»՝ կատարելով և այդ նյութի վերամշակում: Սակայն նրան էլ չէր տված մանկական գրողի ձիրքը: Վերամշակման գործը թույլ անհատական կարողություն է ցույց տալիս: Դա համարյա լոկ խմբագրություն է. սրբագրություններ, կրճատումներ, շտկումներ: Թեև ճոխ են ժողովրդական դարձվածքները, բայց նյութերը ներկայացնում են

չհղկված, չմաքրված գոհարներ. մանավանդ մանկական լեզվի և առանձնահատուկ ըմբռնման կնիքը չունին: Ընթերցողը կարծում է, թե ժողովրդական հեքիաթների մի ժողովածու է կարդում և ոչ թե մանկական մի դասագիրք:

Պակասում էր հայ դպրոցի մեջ հայի հանդն ու հոտը, հայի արտն ու գոմը, տունն ու օջախը, պակասում էր մանավանդ այն լեզուն, որով հայ ընտանիքը խոսում է իր մանուկների հետ: Այդ բոլորը մեր դպրոցի և գրականության մեջ մտցնողը Ղազարոս Աղայանն էր: Մեզանում նա կատարեց Ուշինսկու դերը: Հայ ընտանիքը, հայ ժողովրդական ինքնուրույնությունը, հայ ժողովրդական կրթության հոգի ու հիմք դարձնողը Աղայանն էր: Եվ այն է մեծագույն գործը, որ միշտ անմոռաց պիտի պահե Աղայանի անունը հայ ժողովրդի մեծամեծ երախտավորների շարքում:

Ես համեմատեցի Աղայանին Ուշինսկու հետ: Բայց պետք է ավելի պարզել այդ հանգամանքը: Իմ խոսքը, կրկնում եմ, մանկավարժական մասնագիտության մասին չէ: Ես չեմ կարող ասել, թե իբրև թեորետիկ մանկավարժ Աղայանը ինչո՞վ է նման ռուս մեծ մանկավարժին և ինչո՞վ է տարբերվում նրանից: Ուշինսկին բազմակողմանի զարգացած մարդ էր, պրոֆեսոր է եղել. գիտեր բազմաթիվ օտար լեզուներ, հինգ տարի ապրել է արտասահմանում, գրել է գիտական մեծ արժեք ունեցող ուսումնասիրություն մանկավարժության մասին: Իսկ մեր Աղայանին մենք տեսանք,- հայ ժողովրդի խղճուկ իրականությունից դուրս եկած մի ինքնուս, հազիվ դեսից-դենից սեփական աշխատանքով, սեփական ըմբռնողությամբ կրթական պաշար հավաքած: Ե՛վ բնական է, և՛ անխուսափելի, որ այդ երկու մարդկանց մեջ տարբերություն թեորիայի, գիտության փորձերի տեսակետից մեծ լինի: Այս կողմից ես համեմատություններ դնելու հավակնություն էլ չունեմ:

Բայց որ երկուսի կատարած գործը միանման է ոգու, հետևանքի տեսակետից- այս, կարծեմ, ուրանալ չէ կարելի: Ռուսը իր մեծ, բազմամիլիոն ժողովրդի առջև և հայը իր փոքրիկ ժողովրդի առջև միանման երախտիք ունեն ժողովրդական կրթության գործում:

Եվ այնուհետև Ուշինսկու և Աղայանի գրական ճանապարհները տարբերվում են: Ուշինսկին միայն իր դասագրքերի մեջ է մանկական գրող, մինչդեռ Աղայանը իր դասագրքերից դուրս էլ մանկական գրականություն ունի: Աղայանը մանկական բանաստեղծ է, գեղարվեստական գրող է: Նա միայն վերամշակող չէ, նա ստեղծագործական թափ ցույց է տալիս թե՛ ոտանավոր և թե՛ արձակ բանաստեղծության մեջ:

IV Բանաստեղծը

Համարյա միաժամանակ, ութսունական թվականների սկզբում, Աղայանը հրատարակեց երկու գիրք՝ «Անահիտ» և «Սրինգ հովվական»: Նույն միջոցներին էլ «Վարժարան» ամսագրի մանկական բաժնում, ապա և «Աղբյուրի» մեջ տպվում են նրա մի շարք մանկական գրվածքները:

Այս բեղմնավոր գործունեությունը կարծես նրա համար էր, որ միանգամից ընդմիջտ, հաստատապես, վերջնականապես որոշվի Աղայանի տեղը մեր գրականության մեջ: Եվ իրավ, կարճ միջոցում այդ բանը կատարված է: Որոշված է տեղը: Բարձր և եզակի մի տեղ: Այդտեղ Աղայանը մի հատիկ է, չունի հավասարը, չունի մրցակից: Այն տեղն է դա, ուր խոսում է հայ ժողովուրդը, այն տեղը, ուր ինքը Աղայանը, իբրև, այդ ժողովրդի մի բեկոր, խոսեցնում է ժողովրդական կյանքը: Միանգամից ամենքը ճանաչում են Աղայանին: Գիտենք, որ նա

ժողովրդի տաղանդն է: Գյուղական ժողովրդի տաղանդը:

Ի՞նչպես է նա գրականության մեջ բերում այդ ժողովրդական տաղանդը:

Նա ահագին պաշար ունի և ընտրում է այն, ինչ համապատասխանում է իր գաղափարներին, իր գեղարվեստական բնավորության: Եվ վարվում է այդ նյութերի հետ թե իբրև ստեղծագործող և թե իբրև վերարտադրող, վերամշակող:

Ինքնուրույն ստեղծագործական աշխատանքը նա ցույց է տվել «Անահիտի» մեջ: Գրել է նա այդ հին գրույցը Շուշում՝ օգտվելով տեղային ավանդություններից: Այստեղ երևում է Աղայանի հեղինակային դեմքը: Այստեղ նա ինքն էլ է ավելացրել ժողովրդական համառոտ սյուժեի վրա: Իսկ ժողովրդական հեքիաթների վերաբերմամբ նա մշակող, գեղեցկացնող է: Հեքիաթի նյութի հետ նա այնպես չէ վարվում, ինչպես «Անահիտի» նյութի հետ: Աշխատում է հարազատ մնալ բնագրին, աշխատում է վերամշակման մեջ պահպանել ժողովրդական բանահյուսության համն ու հոտը, արտահայտության ձևը: Այսպես է, օրինակ, «Սրինգ հովվականի» մեջ տպված «Աստուծո պահած գառը գայլը չի ուտիլ» սքանչելի կտորը, որի երկար վերնագիրը նա հետո փոխեց, դարձրեց «Անտառի մանուկը»:

Այսպես էր ժողովրդական բանահյուսությունը գրական-գեղարվեստական կերպարանք ստանում Աղայանի գրչի տակ:

Բայց միայն ժողովրդի պատրաստած նյութերը չէին բանաստեղծական ներշնչում ազդում Աղայանին: Նա ինքն էլ երգող էր: Երգում էր գյուղի կենցաղը, երգում էր բնական ու պարզ կերպով: Ճիշտ այնպես, ինչպես այդ կենցաղն էր բնության ծոցում:

Այժմ առանձին-առանձին վերցնենք Աղայանի բանաստեղծական գործունեության այս երեք աղբյուրները:

Բայց նախ նկատենք, որ երեք աղբյուրներն էլ կրում են միատեսակ կնիք՝ բարոյագիտական: Այս արդեն Աղայանի գեղարվեստական խառնվածքն էր: Նա ինքը խոստովանում է, թե իր բնավորության մեջ մանկությունից ընդմիշտ հաստատվեց հավատ, բարոյագիտական սկզբունք, որով և տոգորված են նրա բոլոր գրվածքները: Այս խոստովանության մենք պիտի ավելացնենք, որ ժողովրդական բանահյուսությունը ուրիշ կերպ չէր էլ կարող կրթել նրա ճաշակը: Չէ՞ որ ժողովրդի իդեալը բանահյուսության մեջ հենց այն է, որ չարը պատժվում է, բարին՝ հաղթանակում, առաքինությունը վարձատրվում է, իսկ բացասական հասկությունները դատապարտվում են:

Ավելորդ է ասել, թե հենց այս իդեալն է, որ անգնահատելի է դարձնում ժողովրդական բանահյուսության դաստիարակչական նշանակությունը: Տալ իր դեռահասակ ընթերցողին միշտ բարիի, գեղեցիկի օրինակներ, խաղաղ շինարար աշխատանքի, մշակության փառաբանությունը, - այս է Աղայանին ղեկավարող միակ տենդենցիան:

Այս կողմից վերին աստիճանի գրավիչ է «Անահիտը»: Դա արհեստի և դպրության հմայիչ փառաբանություն է: Նստակյաց, կուլտուրական ժողովուրդները այդպիսի պաշտամունք ունին ամեն տեղ, և «Անահիտի» հիմնական գաղափարը գուցե և միջագային է: Բայց Աղայանի պատմվածքի մեջ այդ պաշտամունքը, ձեռարվեստի և գրագիտության հրաշալի մեծարանքը ստացել է խիստ ինքնուրույն ազգային գունավորում:

Պատմական այդ գրույցը Աղայանի գրչի տակ պատմական վեպ պիտի դառնար, բայց չէ դարձել, որովհետև ժողովրդական ավանդությունը մնացել է գերակշռող և ստացել է այնպիսի ձև, որ հեռացնում է պատմվածքը վիպագրությունից: Ինքնուրույն գեղարվեստական մշակում Աղայանը շատ ունի այդտեղ: Նկարագրությունները չափազանց պարզ են, խոր տպավորություն են թողնում: Բայց հաճախ հեղինակը ինքն իրան հեռացնում է, որպեսզի խոսե ավանդությունը, և խոսե այնպես, ինչպես կարող է խոսել մի ժողովրդի բերանացի գրույցը: Եվ այսպիսով, գրվածքը կես վիպական, կես հեքիաթական բնավորություն ունի: Բայց այս խառն կերպարանքը ոչինչ արգելք չէր, որ Աղայանի այս գործը գնահատվի ըստ արժանվույն: Դա մի շատ սիրուն գործ է պատանիների ընթերցանության համար: Բայց նրան հափշտակությամբ կարդում էին և չափահասները: Աղայանը այստեղ խոսքի վարպետ է, տաղանդավոր պատմող, իսկ խոշոր ընդգծումներով ցուցադրած տենդենցիան ավելի ևս գրավիչ է դարձնում մեր գեղարվեստական գրականության զարդերից մեկը կազմող այդ գոհարը:

Ձուտ գեղարվեստական հայացքների տեսակետից կարելի է գանգատվել, որ Աղայանը աշխատանքի, արհեստի շինարարության տենդենցիան չափազանց շատ է առաջ քաշել և դարձրել քարոզություն: Բայց այս եթե պակասություն է, մեր ամբողջ գրականության պակասությունն է: Մի պակասություն, որի արմատը մենք պիտի որոնենք ժամանակի պահանջների մեջ: «Անահիտը» ութսունական թվականների սկզբում է գրված և պիտի իր հարկը տար այդ ժամանակին: Հայոց հարցի ամենաեռուն ժամանակը, երբ ոտանավոր բանաստեղծությունը, վեպը, պատմվածքը, ամեն ինչ քարոզություն էր:

Աղայանը վերջաբանում ներկան համեմատում էր անցյալի հետ*
Մեր հայրենի սուրբ երկրումը,
Ուր Եդեմն էր անմահական,
Այժմ դժոխք է սուկալի,
Լաց ու հառաչ գեհենական:
Չը կա մեր մեջ ոչ Վաչագան,
Ոչ Անահիտ մի իմաստուն,
Որ կործանեն այդ դժոխքը
Եվ տան հային բարօրություն,
Միակ հնարը մեզ մնում է՝
Սովրեյ արհեստ, սովրեյ ուսում,
Սրանք են այն թալիսմանը,
Որ տարտարոս է կործանում²²:

Նյութի մշակության տեսակետից «Անահիտին» նման է «Տորք Անգեղ և Հայկանուշ գեղեցիկ» պոեմը, որ լույս տեսավ նույն ութսունական թվականների երկրորդ կեսին: Այստեղ Աղայանը

²² Մեր գրականության մեջ կարծիք կա հայտնված, թե Աղայանի «Անահիտը» և Թաղիադյանի «Վեպ Վարսենկանը» միևնույն աղբյուրն ունին: Բայց սա մի մեծ սխալ է, որ առաջացել է Թաղիադյանի վեպին անտեղյակ լինելուց: Նմանությունը միայն այն է, որ երկու գործն էլ Աղվանից կյանքից են, որ Թաղիադյանն էլ նկարագրում է մի ստորերկրյա զարհուրելի եղեռնագործական հիմնարկություն: Ուրիշ նմանություն չկա «Անահիտի» և «Վարսենիկի» մեջ և չէ կարելի ասել, թե Աղայանը Թաղիադյանի ազդեցության տակ է եղել իր պատմվածքը գրելիս (ծանոթ. հեղ.):

Ժողովրդի կենդանի խոսքի մեջ ապրող մի գրույց չէ ունեցել, այլ գրավոր աղբյուր, այն է՝ հին դյուցազներգության մի փոքրիկ հատուկտոր, որ մնացել է Խորենացու պատմության մեջ: Այս փոքրիկ նյութը նա մշակել է ինքնուրույն աշխատանքով, այնպես որ նյութից մնացել է միայն Տորք Անգեղի առասպելական ուժը: Գրվածքը ամբողջովին ոտանավոր է, և Աղայանը դրանով ապացուցել է, թե չափական արվեստի միջոցով էլ նա շնորհք ուներ ստեղծագործելու:

Հին առասպելը նույնպես երգի ձև է ունեցել, ինչպես վկայում է Խորենացին: Եվ Աղայանը իր հերոսին նույնպես երգել է ժողովրդի երևակայության և գեղարվեստական ըմբռնողության չափերով:

Դա հսկաների աշխարհն է: Դա հեքիաթական այն կախարդիչ միջավայրն է, ուր վիթխարի, անհեթեթ ուժն է տիրում իբրև իրավունք: Ամեն տեղ աժդահաներ, գերմարդկային ուժի գործեր: Հեքիաթների աշխարհում ստեղծագործական մեծ թափ ստացող Աղայանը այստեղ, այս հսկաների մեջ, իր բանաստեղծական հարազատ միջավայրում է: Գիտե նկարագրել անհեթեթությունը, նրա գործի մեջ երևացող աժդահաները ուրույն-ուրույն են, իրար չեն նմանվում:

Բոլոր հսկաների թագն ու պարծանքը նրա դյուցազնն է՝ Տորքը: Աչքերը մի-մի կապույտ ծով, ունքերը՝ մուրթ ամպի նման, քիթը՝ մի բլուր, ատամներն՝ ուրագ, եղունգները՝ թուր, կուրծքը՝ լեռան մի լանջ, մեջքը՝ սարաժայռ, կոները՝ գերան: Խորենացին, պատմելով Տորքի ուժը, ասում է, որ պարսիկները ասում են, թե իրանց Ռոստոմ Սագճիկը հարյուր քսան փղի ուժ ուներ. բայց հայ Տորքը երգի մեջ Ռոստոմից էլ ուժեղ էր: Աղայանը, սակայն, իր հերոսին տվել է միայն հիսուն գոմեշի ուժ: Առյուծ, վագր, ամեն տեսակ վայրի գազան ընկճվում էին նրա դժնյա դեմքից, նրա ուժից: Մի գյուղում չարացնում են նրան: Նա արմատից պոկում է մի մեծ ծառ և նրանով ավլում է ամբողջ գյուղը և գետնին հավասարեցնում: Ժայռեր է պոկում, եղունգներով հղկում, վրան գրում:

Այսքան անհեթեթ ուժի մեջ բնականորեն նստած պիտի լինի ավերիչ մի գոռոզություն, իշխելու, ամեն ինչ ստրկացնելու մի անհեթեթ կամք: Բայց Աղայանը այստեղ հարազատ է մնացել իր բարոյագիտական սկզբունքներին: Ի՞նչ կլինեք, եթե աժդահաների աժդահա Տորքը միմիայն բացասական, հակամարդկային ուժը կրեր իր վիթխարի կազմվածքի մեջ: Այնպիսի բան չէր թույլ տա Աղայանը. նա չէր թույլ տա, որ աշխարհն ավերվի, մարդկությունը դժբախտանա մի անհեթեթ հսկայի քմահաճույքով:

Եվ նրա Տորքը բացասական սկզբունք չէ, բարի և բարերար սկզբունք է: Շինարարության, մարդկայնության տիպար: Նա հովիվ էր, բայց որմնադիր էլ էր, ճարտարապետ: Իր քանդած գյուղը նորից շինում է, երբ բարկությունն անցնում է: Երկրի խաղաղության և մարդկանց երջանկության մասին է մտածում: Թագավորի խորհրդականն է դառնում և երկրի կուսակալը: Իսկ երբ գնում է իր սրտի սիրած աղջկան ուզելու, այդտեղ ահարկու աժդահան դեն է դնում իր ուժն ու անսահման կարողությունը և հսկա, շինարար ու խաղաղ մարդու սրտով է մոտենում իր Հայկանուշին:

Տեսարանը Գուգարաց աշխարհումն է: Այդտեղ լեռներ, այդտեղ հսկաներ: Այդտեղ կախարդիչ ամրոցներ, ձորեր ու այրեր, աժդահաներով, փահլևաններով լցված: Հսկայական մրցություն

կա նրանց մեջ Հայկանուշին տիրանալու համար: Միայն Տոբքը կարող է բոլոր ախոյաններին ջարդել ու խլել Հայկանուշին: Բայց նա կռիվ ու ավերում չէ գցում: Խոսում է մարդկային լեզվով, համոզում է, խաղաղության և հաշտության օրինակ է տալիս ու այդ միջոցով է հասնում իր նպատակին: Եվ այսպիսով դուրս է գալիս մի բոլորովին գերբնական վայրենի ուժ, բայց հպատակված մարդկայնության, քաղաքակրթության, ինչպիսին: Աղայանի իդեալն այն է, որ աշխարհի ուժերը մարդու բարօրության ծառայեն:

Ոտանավոր պոեմի մեջ Աղայանը թեև արտահայտիչ է, բայց այնքան ուժեղ չէ, ինչպես հովվերգական ոտանավորի մեջ: Երկար ոտանավորի մեջ նա միաշունչ չէ, հաճախ թուլանում է, նույնիսկ արհեստականության հասնում:

Ուրիշ է նա, երբ երգում է իր սրտից, երգում է իր հարազատ աշխարհը գյուղն ու գյուղացուն, անդն ու անդաստանը, կյանքն ու աշխատանքը: Այսպիսի երգեր բազմաթիվ չեն. «Սրինգ հովվական» փոքրիկ տետրակի կեսը հազիվ են բռնում: Այդ ժողովածվից հետո էլ Աղայանը տվել է ոտանավորներ ու երգեր: Բայց այդ փոքրիկ քանակությունը Աղայանի բանաստեղծական ամբողջ հարստությունն է: Մի այնպիսի հարստություն, որ մի ուրիշը գուցե ձեռք չբերեր նույնիսկ մի քանի հատորների միջոցով:

Այստեղ է գյուղի զավակը բանաստեղծական խորունկ ներշնչում ստանում, այստեղ է նա իր պարզ, վճիտ, նույնիսկ անարվեստ հանգերով հմայում: Ընտրություն անել այդ փոքրիկ գոհարների մեջ անկարելի է: Ամենքն էլ սիրուն են, անուշահոտ, ամենքն էլ խոխոջում են լեռան աղբյուրի պես:

Ո՞րն ընտրես: Արդյոք «Ճախարա՞կը»՝ պարտքերի և աղքատության տակ ճմլված գեղջկուհու, հայ ընտանիքի հիմնաքարը կազմող այդ աննկատելի, բայց դարերից ի վեր վեհ ու մեծագործ դյուցազնուհու վշտի ու տառապանքի մեղմ, քնքշիկ, բայց մինչև սրտի խորքը թափանցող աղաղակը: Արդյոք «Մերմնացա՞նը», որ հերկել է իր դաշտը, ոռոգել է հողը իր ճակատի քրտինքով և հանձնում է իր այդ ամբողջ գործը, իր մի միակ հույսը Աստծու խնամքին:

Վիշտ, դառնություն, կորացնող ու չորացնող կարիք: Ա՞յս չէ մի խեղճ ժողովրդի հոգին ու զգացմունքները խոսեցնողը: Եվ Աղայանը խոսեցնում է մի այնպիսի լեզվով, որի մեջ միայն փոքրիկ առօրյա փաստերն են մրմնջում, առանց պաթոսի, առանց հորդ գեղումների: Մի անարվեստ մրմնջ, որ թովում է իր անմեղ պարզությամբ, ճիշտ այնպես, ինչպես մի մանուկ պատմում է իր սև ճակատագիրը:

Եվ վարակիչ է այդ թախիծը, այդ խոր վիշտն ու դարդը: Բայց հուսակտուր ու կորագլուխ մի անձարություն չէ ժողովուրդը: Եթե այդպես լիներ, նա երկար ու երկար դարեր չէր կարող տանել իր վզին փաթաթված լուծը: Նա ուժ է ստանում ինքն իր միջից, նա ապրում է, որովհետև գիտե օրինաբանել իր դառն աշխատանքը, գիտե սրբացնել նրան: Բնության և մարդկության անողոք օրենքներին հնազանդ, նա կարողանում է սիրտ, զգացմունք պահպանել իր մեջ և այդ սիրտն ու զգացմունքները, ամբողջովին նվիրել իր դաշտին ու սարին, իր մշակության, իր տառապանքների մշտական աղբյուրին:

Երբ դուք կարդում եք Ջենդ-Ավեստայի²³ օրհներգները, ձեր առջև կանգնում է բնության բարի տուրքերի, երկրագործական, անասնապահության կրոնը, սքանչելի իր պարզությամբ և անկեղծությամբ, մանկական, միամիտ, բանաստեղծական: Եվ զգում եք, թե ինչպես մի ժողովուրդ կարող էր բնության անհրապույր ու անհյուրընկալ պայմանների մեջ անգամ ծաղկեցնել իր երկիրը, շեն ու առատ պահել իր օջախը, ունենալով այդպիսի հավատ, այդպիսի պաշտամունք, սրբացնելով իր հավատարիմ օգնական անասուններին և երկրագործի դաժան աշխատանքը համարելով ամենամեծ առաքինությունը աշխարհի վրա, ամենամեծ սրբագործությունը, որ կարող է մարդուն տանել երանության բարձունքները: Հայ ժողովուրդն էլ մի ժամանակ պաշտել է այդ բնական կրոնը: Եվ այսօր էլ նրա արյան մեջ, ինչպես և ամեն մի երկրագործ ժողովրդի, ապրում է այն պաշտամունքը: Աղայանը միայն վիշտն ու ցավերը չէ երգել, այլև սրբացրել, պաշտամունք է դարձրել ցավերի ու վշտերի աղբյուրը՝ աշխատանքը: Ահա քնած հովիվը: Նրա անկողինը սարի լանջն է, բարձր՝ չեչոտ քարը, իսկ վերմակը՝ մի կտոր կապերտ: Բայց Աղայանը փառաբանում է այդ բոլորը.

Այս է հովվի անկողին,
Ուխա՛յ, ուխա՛յ, ի՞նչ սիրուն է...
Եվ երգում է.
Երբ անձրև է կաթկաթո՛ւմ,
Կաթկաթում,
Եվ կապերտը թըխկթըխկում,
Թըխկթըխկում,
Հովիվն անուշ քնի մեջ՝
Կապերտում,
Քաղցր երազ է տեսնում.
Եվ խնդում, ծիծաղում:
Ուխա՛յ, ուխա՛յ, սիրուն Հովիվ,
Քունդ անտ ւշ:

Իսկ ջրադացյա՞նը: Ջրադացի աղմուկն ու պտույտներն են նրա քնի անուշությունը: Եթե հանկարծ դադարի այդ աղմուկը, ջրադացյանը վեր կյոռչե տեղից՝ կարծես թնդանոթի հարված է լսել:

Ահա խոզարածն անտառում.
Խիտ անտառի մութ խորքումը.
Մի տեսակ խուղ կա շինած:
Անդուռ, անպատ, անպատուհան,
Գերաններ են թեք դրած...
Բայց երջանիկ է խոզարածը: Գող թուրք ու քուրդ չէ մոտենում նրան, որովհետև խոզի հոտ է գալիս:

Եվ այսպես, ամեն ինչ լավ է, սիրելի է: Այսպես են հնձվորները դաշտում: Ա՛խ, ի՛նչ լավ է խոտ հարելը, ի՛նչ հեշտ է արտ հնձելը: Եկե՛ք, մենք էլ սովորենք:

²³ Ջրադաշտական կրոնի սուրբ գրքերի ժողովածու:

Եվ Աղայանի վճիտ, խոր թափանցող բանաստեղծության ազդեցության տակ չէ կարելի չսիրել այդ բոլորը, ինչ գյուղական կյանքն է հանդես բերում իբրև շինարար աշխատանք դառն ցավերի մեջ, իբրև դարավոր եռանդ՝ մրցության միջոցով բախտ շինելու, ապրուստ հարդարելու համար: Ահա այս է կարողությունը, այն հոգեկան արիությունը, որ ապրեցնում է ամեն մի ժողովուրդ:

Մնում է ժողովրդական ոգու մի այլ կողմը՝ նրա երևակայությունը, նրա աշխարհայացքը, նրա երգն ու պատմվածքը: Այստեղ Աղայանը ավելի ևս բեղմնավոր գործունեություն է ցույց տվել: Նա ունի հեքիաթների մի մեծ քանակություն: Կարելի է ասել, որ չէ մնացել փոքրիշատե հայտնի մի հեքիաթ, որ մտած չլինի Աղայանի գրչի տակ՝ կոկվելու, մշակվելու, զարդարվելու և գրական լեզու ստանալու համար:

Թե ինչ աջողություն է նա ունեցել այս գործի մեջ, այդ ամեն մի բացատրությունից լավ ցույց է տալիս այն, որ Աղայանը մեզանում վաղուց ստացել է հայկական Անդերսեն անունը: Եվ իրավացի կերպով: Չենք ասում, թե նա հեքիաթների վերամշակման մեջ միանման աջողություն է ունեցել: Կան թույլ փորձեր, բայց դրանք քիչ են: Իսկ թե ինչ աստիճանի է հասնում հեքիաթ մշակելու տաղանդը Աղայանի մեջ, դրա մի փոքրիկ նմուշ թող լինի «Անտառի մանուկը»: Մեր լեզվի, մեր գեղարվեստի համար ի՞նչ գանձ է հենց այս կտորը:

«Անտառի խորքում մի ճոճ կար կապած և նրա մեջ մի մանուկ դրած: Լաց էր լինում մանուկը: Մայր չկար մոտը, որ ծիծ տար, հայր չկար, որ պահպաներ: Անտառումը մարդ չկար: Մի գթոտ պախրակով՝ կաթնալից կրծքով, եկավ ճոճի մոտ իր հորթուկի հետ և տխուր ձայնով երեխին ասեց.

Միրուն երեխա, որք ես մնացել,
Քո անբախտ մորը գերի են տարել.
Նա գնաց, կորավ, էլ ետ չի գալու,
Էլ ոչ մի անգամ քեզ ծիծ չի տալու:
Նա քեզ փաթաթեց լայն տերևներով,
Ճոճի մեջ կապեց «Նանիկ» ասելով,
Նա լաց էր լինում աղի արցունքով,
Իր վերջին նանիկն ասում էր լալով. «Մեծատերև թաթաշոր,
Մանրատերև ոտաշոր,
Քամին կանի՝ ժաժ կտա,
Պախրեն կրգա՝ ծիծ կտա»:
Ահա եկել եմ, որ քեզ ծիծ տամ ես,
Պահեմ, պահպանեմ իմ հորթուկիս պես...

Ով գիտե այս հեքիաթի բնագիրը, նա միայն կարող է ասել, թե որքան հարազատությամբ Աղայանը տվել է նրա բոլոր մանրամասնությունները, նյութանյութերը, բայց մշակված ձևով, գեղարվեստական չափի ու վայելչության ենթարկած:

Նույն արժանավորություններով է գրված և «Արեգնազան կամ կախարդական աշխարհ» մեծ հեքիաթը, որ իսկ որ կախարդիչ է: Նույն արժանավորություններն ունին և նրա բազմաթիվ այլ

հեքիաթները («Օձամանուկ և Արևահատ» «Արևամանուկ», «Լուս ու մութ աշխարհ»²⁴, «Այծատուր», «Զանգի- Զրանգի» և այլն, և այլն):

Հայ ժողովուրդը մի բանաստեղծ հանեց իր ծոցից, սովեց նրան իր ստեղծագործությունից մեծ պաշար, սովեց նրան իր պարզ սրտից, իր վճիտ զգացմունքից, իր սերից ու հավատից, իր շնորհից ու տաղանդից շատ ու շատ բան: Եվ ուղարկեց նրան հայ մանուկներին դաստիարակելու: Աղայանը կազմեց դասագրքեր («Ուսումն մայրենի լեզվի»), լցրեց նրանց մեջ այս ժողովրդական հարստությունները: Մենակ մեր հիշածները չեն այդ գրքերի մեջ: Հարյուր ու մի ուրիշ մանր-մունր սիրուն կտորներ, մանկական թոթովանքներ, առակներ ու առածներ: Ամբողջ փնջերով, ամբողջ խուրձերով հոտավետ ծաղիկներ, բուրումնալից դալարներ, կաթնաղբյուր ու լուսաղբյուր, համ ու ճաշակ:

Եվ հաղթանակեց ժողովրդականը: Մեծ աջողություն ունեցան Աղայանի դասագրքերը: Նա հետևողներ ունեցավ, բայց հետևողները (օր. «Լուսաբերը») չկարողացան բռնել նրա տեղը: Եվ այսօր էլ հայերեն լեզվի դասավանդության լավագույն ձեռնարկը Աղայանինն է:

Պատճառն այն է, որ Աղայանը շատ լավ գիտեր, որ երեխային պետք է սովորացնել իր մայրենի մաքուր, պարզ, անխառն լեզուն, որ իր հարազատ ձևերով ու բառամթերքներով տար գեղարվեստական ամբողջություն: Նա չէր ստրկանում ժողովրդական լեզվին, որ բազմաթիվ գավառաբարբառներից է կազմված, ունի ամեն մի բարբառին հատուկ քերականական ձևեր և օտարաբարբառներով ծանրաբեռնված խառնուրդներ:

Աղայանը շատ քիչ էր զիջում անում գավառաբարբառներին և ընդհանրապես աշխատում էր, որ դասագրքերի մեջ լեզվի միաձևություն տիրե: Այդ նպատակը նա իրագործում էր մեծ աջողությամբ: Ուսուցիչը նրա դասագրքերի վրա սովորացնում է զուտ մաքուր հայերենը, միայն հայերենը, և ստիպված չէ լինում թուրքերենի թարգմանիչ էլ դառնալ մանուկների առջև:

Օրինակելի է Աղայանի ոճը, սքանչելի պարզ, կանոնավոր, անհարթություններից համարյա թե զերծ:

Օրեցօր մեր լեզուն աղճատվում, այլանդակվում է, զրկվում է իր կենդանի հյութերից, դառնում է արհեստական, օտար, խորթ: Աղճատում են նրան ամենքը. և անգրագետ գրականագետները, և մամուլը, և նոր աշխարհայացքների առաքյալները, երբ ուզում են փրկել հայ ժողովուրդը իրանց փիլիսոփայություններով:

Աղճատում է և հայ դպրոցը: Մա ամենից սարսափելին է:

Աղայանի լեզուն պետք է հեռու պահե հայ դպրոցը այդ ոճրագործությունից: Այդ լեզուն պետք է դառնա ամեն տեղ օրինակ, հիմք, առաջնորդ...

V Հրապարակախոսը

²⁴ Հեքիաթի լրիվ վերնագիրն է «Մանկական աշխարհ կամ լուս ու մութ աշխարհներ» (ծանոթ. կազմողի):

Ղազարոս Աղայանը իր գրական գործունեության ընթացքում հաճախ երևացել է մեր հրապարակախոսության ասպարեզում: Մեզ հարկավոր է մի քանի խոսք ասել նրա գործունեության այս կողմի մասին:

Բայց այստեղ չենք կարող անտես անել մի հանգամանք:

Վերջին տարիներս մեզանում մտքի վայրենությունը բավական առաջ է գնացել: Ծայրահեղ անհամբերողությունը, որ ռուսահայոց լրագրական շրջանակներին և կուսակցություններին միշտ հասուկ է եղել, վերջին տարիներս մտքի տեռորի կատարյալ կերպարանք է ընդունել: Աղայանը գրում էր հողվածներ օրվա հարցերի մասին: Բավական չէր, որ նրան պատասխանում էին հայկական պոլեմիկայի սիրած ու գուրգուրած և օրեցօր կատարելագործվող միջոցներով՝ հայիոյանքով, անվանարկություններով, գրպարտություններով: Բավական չէր այս: Նրանից բացարձակապես պահանջում էին, որ չգրե օրվա հարցերի մասին: Եվ այս պահանջը քողարկում էին մի իստակ հայկական սկզբունքով: Ասում էին, թե վիպագրողը, բանաստեղծը իրավունք չունի հրապարակախոս լինելու, դա նրա բանը չէ. թող Աղայանը գրե հեքիաթ, «Հարություն և Մանվել», այդ նրա բանն է, բայց հրապարակախոսության մեջ չպիտի երևա, որովհետև նա հրապարակախոս չէ: Այդ արգելքը մտքի վայրենության խոշոր նշաններից մեկն է: Ամեն մարդ խոսում է հրապարակում, արտահայտում է իր կարծիքները, իր դավանանքները: Խոսել, միտք պաշտպանել - դա մարդու ամենատարրական իրավունքներից ամենապարզն է: Եվ ոչ մի տեղ, ոչ մի ժամանակ այդ ամենապարզ իրավունքը չէ խլվել և չէ կարող խլվել մարդ անհատից, ինչ պարապմունքի տեր էլ նա լինի: Ոչ մի տեղ չէ արգելվում օրվա չարիքների մասին խոսել մեծ գեղարվեստագետներին, գիտնականներին:

Եվ այսպիսի մի արգելքը, բացի անպատիվ լինելուց, ծիծաղելի էլ կլինեք: Ռուս հասարակությունը Վլադիմիր Կորոլենկոյին երբեք չի ասի՝ «Слепой музыкант»²⁵-ի պես գեղարվեստական երկեր գրեցեք, ամսագրի («Русское богатство») խմբագիր մի լինեք²⁶ և օրվա հարցերի մասին հողվածներ մի գրեք: Երբ Էմիլ Զոլան ամբողջ Ֆրանսիան տակնուվրա արավ իր միջամտությամբ Դրեյֆուսի գործի մեջ, նրան չասացին. «Գրեցեք միայն «Նանաներ», «Ժերմինալներ», օրվա չարիքը կազմող Դրեյֆուսի գործը ձեր ի՞նչ բանն է, դուք հո հրապարակախոս չեք»: Կամ երբ նույն Զոլան ուղարկում էր «Вестник Европы» ամսագրին իր նշանավոր «Փարիզյան նամակները»²⁷, ո՞վ բռնեց նրա ձեռքը:

Ուրիշ բան է, եթե մեկը ավելի ընդունակ է լինում հրապարակախոսության մեջ, մյուսը՝ պակաս: Այս երևույթը բոլոր ասպարեզներում գոյություն ունի: Ամեն ինչ կախված է անհատի բնավորությունից, խառնվածքից: Բնավորություններ կան, որոնք ինչ էլ լինեն, գրող թե արվեստագետ կամ թե գիտնական, չեն կարող հասարակական կյանքի մեջ գործուն դեր չկատարել, չեն կարող արձագանք չտալ օրվա անցքերին ու դեպքերին: Եվ հակառակը, բնավորություններ կան, որոնք լուռ են նայում կյանքին, բավականանում են հանդիսատեսի դերով: Երբ գերմանացիները 1870-ին պաշարել էին Փարիզը, ահագին մայրաքաղաքի մեջ բազմաթիվ բանաստեղծներ կային, բայց միայն Վիկտոր Հյուգոն էր, որ օր ու գիշեր ման էր

²⁵ «Կույր երաժիշտը»: Գրվել է 1886-ին, հայերեն թարգմանությունը՝ 1901թ. (ծանոթ. կազմողի)

²⁶ «Русское богатство» ամսագիրը (1876-1918) Վ. Կորոլենկոն խմբագրել է 1892-ից (Ն. Միխայլովսկու հետ): Միխայլովսկու մահից հետո (1904) ամսագիրը ընդմիջումներով խմբագրել է Կորոլենկոն:

²⁷ «Вестник Европы» (1866-1918) ամսագրում Զոլայի «Փարիզյան նամակները» տպագրվել են 1875-1880թթ. ընթացքում:

գալիս դժբախտության ենթարկված մայրաքաղաքում և գրում էր իր «L'année Terrible»-ը²⁸: Հռչակավոր Վիրիտովը մինչև իր կյանքի վերջը Բեռլինի քաղաքային վարչության ամենաեռանդուն և ամենաբարեխիղճ անդամներից մեկն էր:

Ահա թե որքան տկար ու խեղճ է այն միտքը, որ ասում է, թե բանաստեղծը չէ կարող հրապարակախոս լինել: Չգարմանանք, որ հայկական մտքի այս երերումների ու աղքատության տարիներում նույն այդ միտքը դարձել է նույնիսկ իբր թե փիլիսոփայական գյուտ: Մենք փիլիսոփաներ էլ ունենք, վնաս չունի, եթե մի քիչ տնաբույս: Եվ դրանցից մեկը, Արսեն Տերտերյան, ահա մի տարի է միմյանց ետևից բրոշյուրներ և գրքեր է հրատարակում²⁹ և նրանց մեջ շարունակ միևնույն երգն է երգում, բանաստեղծը հրապարակախոս չէ կարող լինել, որովհետև բանաստեղծը խաղաղություն և հաշտություն է բերում, իսկ հրապարակախոսը՝ կռիվ:

Այստեղ տեղը չէ այդ «փիլիսոփայողին» քննելու: Ես մի ուրիշ անգամ կանեմ այդ: Առայժմ կասեմ այսքանը: Համաշխարհային գրականության պատմությունը ծիծաղում է այդ հայկական գյուտի վրա: Միայն այդ պատմության անտեղյակ լինելն է, որ հնարավոր է դարձնում երջանիկ գյուտեր անելը, գյուտեր, որոնք եթե օրենք դառնան նույնիսկ միայն մեր հայկական խեղճ միջավայրում, պիտի ջնջեն մի շարք մեծ բանաստեղծների անունները գրականության պատմության էջերից:

Հուսալ կարելի է, սակայն, թե այդքան քաջության չի հասնի մեր մտավոր վայրենությունը: Եթե մեղկ սերունդներ կան, որոնք վայելք են պահանջում միայն և հաշտություն ու խաղաղություն են որոնում, այդ չէ նշանակում, թե չեն եղել և չպիտի լինեն սերունդներ, որոնք ոգևորվում են մարտական կոչերով, և ջղուտ, ինտենսիվ գործունեության գաղափարով: Արսեն Տերտերյանը, Աստծու ողորմությամբ, կարող է իր սերնդի օրենսդիր լինել, բայց ոչ ամբողջ մարդկության, ոչ բոլոր ժամանակների համար: Դա ծիծաղելի է - մարդկային ոգու համար սահմաններ գծել, թվահամար կրող հրահանգների հողվածներ գրել:

Ղազարոս Աղայանը այնպիսի բնավորություններից չէր, որոնք կարող են զգալ հասարակական ցավը, բայց լռել: Ամենավառ հետաքրքրությամբ վերաբերվելով օրվա հարցերին և ունենալով իր սեփական անհատականությունը, որ խոսել է ուզում և պիտի խոսեր, նա գրել է շատ հրապարակախոսական հողվածներ: Եկեք ու ապացուցեք, թե այդ մարդը միևնույն ժամանակ չէր կարող գրել և «Տորք Անգեղ» կամ «Մանի ր, մանի ր»:

Ճիշտ է, որ հրապարակախոսությունը, ինչպես և վիպագրությունը, Աղայանի գրականության մեջ մշտական մի ճյուղ չէ եղել սկզբից մինչև վերջ. ճիշտ է, որ նա սիստեմատիկ, հետևողական հրապարակախոսություն չէ ունեցել: Բայց որ նա հրապարակում խոսել է շատ հաճախ, ամեն անգամ, երբ խոսելու պահանջ է զգացել, այս իրողություն է, որ դեռ յոթանասնական թվականների սկզբից Աղայանին երևեցնում է մեր լրագրական ասպարեզում: Եվ այստեղ էլ նա նույն Աղայանն է - համարձակ խոսքով, շիտակ, անկեղծ նույնիսկ իր մոլորությունների մեջ և, որ գլխավորն է, պայքարող: Արդեն ասացինք, որ Աղայանի հուժկու և զարմանալի ինքնությունը բնավորությունը չէր կարող թույլ տալ, որ նա լինի մի խմբակի, մի կուսակցության հլու հպատակ: Սկզբում մենք տեսնում ենք նրան

²⁸ «Ահեղ տարի»: Հրատարակվել է 1872-ին (ծանոթ. կազմողի)

²⁹ Նկատի ունի Արսեն Տերտերյանի «Վահան Տերյան. ցնորքի, ծարավի և հաշտության երգիչը» (Թիֆլիս, 1910), «Միքայել Նալբանդյան. Ազգության հրապարակախոսը (Ալեքսանդրապոլ, 1910) և «Շիրվանզադե. հայ ընտանիքի և ինտելիգենցիայի վիպասանը» (Թիֆլիս, 1911) գրքույկները:

«Մեղվի» մեջ պայքարելիս Արծունու դեմ: Մի ժամանակ նա եղավ «Փորձի» ղեկավարներից մեկը: Բայց հետո նա արդեն պայքարող էր «Մեղվի» և մեղվականության դեմ, «Արձագանքի» և Աբգար Հոդհաննիսյանի դեմ: Եվ արդեն «Մշակում» է գրում, Արծրունու հորեյանն է գլուխ բերում: Հետո դարձյալ պայքար «Մշակի» դեմ, այս անգամ արդեն ոչ Արծրունու «Մշակի» դեմ:

Գաղափարները, որոնք նրան խոսել էին տալիս այդ գանազան դիրքերում, պարզ ու հաստատուն էին: Ազգային ինքնուրույնություն և նրա գլխավոր գործոնների զարգացում - սա գլխավորն էր, ժողովրդական - առաջադիմական հայեցակետ, պաշտպանություն դպրոցական-դաստիարակչական ազատ և բնական սկզբունքների՝ ընդդեմ ռուստինայի և սքոլաստիկայի: Նա պայքարում էր Արծրունու հետ, որովհետև նրանից շատ լավ էր ճանաչում հայ ժողովուրդը, նրանից շատ լավ գիտեր հայերենը: Ո՞վ չէ հիշում նրա տաք վիճաբանությունը Բաֆֆիի հետ, Բաֆֆիի իր «Կայծերի» մեջ հայրենիքի ազատագրության հերոսներ էր դարձրել քավոր Պետրոսի պես մի խաչագողի, Աղայանն ասում էր, թե դա նվիրական գաղափարի սրբապղծումն է, թե հայրենիքի ազատագրության գործում չարագործ խաչագողները չպիտի իդեալացրած հերոսներ դառնան, որովհետև իսկապես էլ չեն կարող դառնալ:

Վերջապես, Աղայանի հրապարակախոսության հետ ծանոթանալ կամեցողը բավական է, որ վերցնի «Մուրճի» մեջ տպված նրա «Ժամանակակից ատենախոսությունը», որ լույս է տեսել և առանձին գրքույկով (1898): Դա մի ամփոփ ու ամբողջ ուսումնասիրություն չէ, այլ խորհրդածություններ գանազան հարցերի վերաբերմամբ: Իսկապես իրար հետ հազիվ կապված հոդվածների մի շարք, որոնք ամենայն վստահությամբ կարող էին առաջնորդողի տեղ գրավել մի լրագրում: Այդտեղ նա խոսում է և կրոնների նշանակության մասին և թե ի՞նչ է իսկական ազգասիրությունը, ի՞նչ է ազգերի համերաշխությունը: Ինքնատիպ և ինքնուրույն, ոչ շաբլոնական մտածողության պտուղներ, զարդարված պատմությունից և իրականությունից վերցրած գեղեցիկ օրինակներով: Ոճը վերին աստիճանի ընտիր, լեզուն վճիտ ու գեղեցիկ, ինչպես Աղայանի բանաստեղծությունները:

Այդտեղ տեսնում ենք և մի նյութ, որի մասին 1898-ին մեզանում խոսող չկար: Աղայանը գտնում էր, որ հայ գյուղի հետամնացության և դժբախտության պատճառը մասնավոր սեփականությունն էր: Գյուղը կարող է վերածնվել, բուրրովին նար, հրաշալի աշխարհ դառնալ, եթե համայնական սեփականության դիմեր: Եվ նկարագրում է մի գյուղ (իհարկե, երևակայական), որ արդեն իրագործել է համայնատիրական սկզբունքը, ոչնչացրել է մասնավոր սեփականությունը: Մեր գրականության մեջ այդ գրավիչ ուստպիայի մյուս օրինակն է Բաֆֆիի «Խենթի» երգը: Անշուշտ Աղայանին այդպիսի դրախտ ներշնչողը եղել է Բելլամիի հայտնի «Հարյուր տարի հետո» ուստպիական վեպը, որը և նա թարգմանել է հայերեն³⁰:

Քաղաքների վերաբերմամբ Աղայանը առայժմ արդեն անկարելի է համարում համայնատիրական սկզբունքը: Միակ էլքը նա այն է գտնում, որ քաղաքներում ապրող խոշոր

³⁰ Էդուարդ Բելլամիի «Հարյուր տարի հետո» (1888) վեպը հրատարակվել է նաև «Ետադարձ հայացք: 2000-1887» (ռուս. թարգմ.՝ «2000 թվականին» (1889), «Ապագա դար» (1899) և «Ոսկեդար» (1905) խորագրերով: Այս երկն Աղայանը թարգմանել է Նոր Նախիջևանի արքայազնուհուհու 1889-ին: Թարգմանության սկզբնամասը տպագրվեց «Լուսա» հանդեսի հավելվածում, իսկ շարունակությունը և նախատեսված հրատարակությունն առանձին գրքով՝ արգելվեց գրաքննության կողմից:

սեփականատերերի կարողությունը գոնե մաս-մաս համայնականանա կրթական և կուլտուրական նպատակներին հատկացվող նվերների միջոցով: Եվ որովհետև կրթական կուլտուրական պահանջներն ընդհանուր են մեր երկրի ամբողջության համար, առանց ազգայնական խտրությունների, ուստի նա պահանջում էր, որ նվիրաբերությունները, բարեգործությունները նեղ ազգայնական բնավորություն չկրեն: Հայ մեծատունը հո պարտավոր է իր հային օգնել, բայց պարտավոր է և չմոռանալ վրացի, ռուս, թուրք կարոտյալներին: Ինչո՞ւ մի հայ մի գիմնագիա չէ բաց անում իր հաշվով: Ինչո՞ւ հայ հարուստը թոշակներ չէ տալիս և ոչ հայ ուսանողներին: Այսպիսով կբարձրանար հայ ազգի պատիվը, կմեղմանային ազգայնական սուր շփումները, և համերաշխությունը ազգերի մեջ իրական կդառնար:

Ասում են, որ Աղայանը կրքոտ էր բանակոթիվների մեջ: Սա ճիշտ է: Բայց ո՞վ է ազատ այդ պակասությունից, թող նա քար բարձրացնե: Սկսած Նազարյանից ու Նալբանդյանից, սկսած մեր հրապարակախոսության ամենավաղ առավոտից, կգտնե՞ք գոնե մեկին, որ կիրք ու անձնականություն չլիներ խառնած իր գրվածքների մեջ: Սա հատկապես ռուսահայ մամուլի արատն է: Ի՛նչ սարսափելի էջեր ասեք, որ չլինեն նրա մեջ: Անձնական կիրքը, անձնական հաշիվները նույնիսկ գեղարվեստական գրականության մեջ են մտցրել: Իսկ առօրյա հրապարակախոսությո՞ւնը... Աղայանը խիստ էր խոսում, կրքով էր խոսում: Բայց ի՞նչպես էին խոսում նրա հետ: Արժրունին գրում էր, թե Աղայանի վեպերը կարելի է միայն կլոգետում³¹ դնել: Բաֆֆին Աղայանի այն նկատողության, թե հայրենասիրությունը խաչագողների հերոսացնել չէ կարող, պատասխանում է մի առակով, որ դարաբաղցի էջի բանն էր պատմում: Եվ Աղայանն էլ պատասխանեց նրան բրուտի շան առակով³²:

Ցավը ընդհանուր է, ռուսահայ մամուլի հետ ծնված և նրա անբաժան ուղեկիցը: Բայց մի ժամանակ կար, երբ բացասականի հետ դրական ավելի շատ բան ուներ մեր մամուլը: Գրողներ կային, մտքեր կային, գաղափարները հաստատուն էին: Անցավ այդ ժամանակը, պակասեց միտքը: բովանդակությունը և սկսեց զարգանալ միայն բացասականը, կիրքը, անձնականությունը, անկերպարանությունը, միջոցների անխտրականությունը: Եվ ներկայումս հայ մամուլը հասել է այն դրության, որ կարելի է ասել, թե խեղդվում է իր արատների մեջ: Սանձարձակությունը վաղուց անցել է բոլոր սահմանները, անկումն ու վայրենացումը սպառնում են իլել տպագրական խոսքից հարգանքի վերջին նշույլներն էլ:

Աղայանը մարտնչում էր այս զարհուրելի պայմանների մեջ էլ: Հավատում էր նա, թե կա ընթերցող հասարակություն, որ ոչ միայն գիտե զանազանել չարն ու բարին, այլև կարող է պատժել չարը: Բայց նա չտեսավ այդպիսի բան մեզանում:

Նա մեռավ գրիչը ձեռքին: Եվ այդ գրչի տակից դուրս եկած վերջին խոսքերն էլ բողոք էին հայ իրականության այն ամենավատ երևույթի դեմ, որի ներկայացուցիչն է հայ մամուլը:

Մեռնելուց մի երկու օր առաջ, զգալով մոտալուտ վախճանը, նա տվել էր իր թղթերն ու նամակները Հովհաննես Թումանյանին և ասել էր. «Դու վկայի՛ր»:

Թուլություն՝ Գուցե: Բայց հասկանալու համար աչքի անցկացրեք այն, ինչ թափեցին նրա գլխին մահից մի քանի օր, մի կամ երկու շաբաթ առաջ: Անհավատալի հրեշավոր պիտի թվա

³¹ Կլոգետ-արտաքնոց (գերմ.), (ծանոթ. կազմողի):

³² Լեոն փոքր-ինչ շփոթում է. թե «դարաբաղցի էջի բանը» պատմող («Դիոս և էջեր») և թե «Բրուտի շունը» առակները գրել է Բաֆֆին՝ խնդրո առարկա բանավեճի առիթով: Աղայանի պատասխանը կոչվում է «Առակ ընդ առակին»

այդ բոլոր տպագրվածը վաղվա սերնդին, եթե նա քրքրե մեր ներկայի պատկերը կազմող տպագրական արատները: Կարելի՞, հնարավո՞ր է, ո՞ր է տեսնված, որ այնքան բարի մի ծերունուն, որ աշխարհի համար երեխայի պես լաց էր լինում, անվանեին մարդասպան և մարդասպանություն քարոզող: Եվ որ ամենատեսակին է, այդպես անվանողները մի քանի օրից հետո գնացին կանգնեցին Աղայանի դագաղի մոտ, որպես թե... հարգանք մատուցանելու համար: Ակամա հիշում ես Նեկրասովի խոսքերը.

Бывали времена хуже,
Но подлее никогда!³³

VI Հյունը

Անկարելի է հիշատակել Աղայանի անունը առանց նրա հռչակավոր հյունի: Աղայանը սիրում էր լեզվական հարցերը և իր գրական գործունեության սկզբից զբաղվել է այդ հարցերով: Այսպես դեռ 1870-ական թվականներին նա հրատարակեց մի բրոշյուր «Հայկական հնչյունների մասին»³⁴, որի մեջ քննադատում էր թուրքահայերի գործածական տառադարձությունները:

Իսկ հյունական ուղղագրությունը նա սկսեց մտցնել մեր մեջ, եթե չեմ սխալվում, 1888 թվականից: Ուղղագրական այդ սիստեմի մասին ավելորդ է խոսել, նա այժմ մեզանում շատ է տարածված, շատ է գործածական: Աղայանը մեր լեզվի մեջ մի խոշոր ներմուծության հեղինակ է: Նա ինքը տեսավ իր այդ գործի հաղթանակը: Բայց չնայած դրան, մինչև իր կյանքի վերջին օրերը նա անշեջ եռանդով պաշտպանում էր իր այդ ռեֆորմը բոլոր չընդունողների դեմ: Պաշտպանում էր թե՛ խոսքով և թե՛ գրով: Քսաներեք տարի շարունակ, անընդհատ մաքառել է իր հյունի համար: Ոչ ոք չէ կարող ասել, թե կա մի ուրիշ դատ, որ այդ աստիճան մոլեռանդ պաշտպանություն ունեցած լինեք մեր կյանքում: Քսաներեք տարվա ընթացքում այս խնդրի առիթով նրա գրած հոդվածներից, բանակոթիվներից կարելի է հատորներ կազմել: Եվ չէ կարելի ասել, թե միանգամայն անօգուտ կլինեն այդ հատորները: Աղայանը մանր ուսումնասիրությունների մի մեծ պաշար ունի, ուր մեր լեզվի, մեր բառերի հետաքրքրական հարցերն են շոշափվում:

Նրան ասում էին, թե նա լեզվագետ չէ, ծանոթ չէ համեմատական լեզվագիտության, ուրեմն և չէ կարող հեղինակություն համարվել: Բայց զարմանալի բան: Լեզվաբանները, համեմատական լեզվագիտության ծանոթները երբեք չկարողացան ջախջախել Աղայանի սիստեմը, չկարողացան ապացուցանել նրա հիմնովին սխալ լինելը: Ընդհակառակն, Աղայանի կողմն անցան այնպիսի հայեր, որոնք անուն ունին գիտության մեջ:

Պետք է, սակայն, այն էլ ասել, որ Աղայանը իսկապես գյուտ անող չէր: Հյունական ուղղագրությունը միանգամայն անձանոթ չէր անցյալ դարերի հայության: Կան XVII դարի

³³ Երկտողը, որոշ տարբերությամբ («Бывали хуже времена, но не было подлее») առկա է Ն. Ա. Նեկրասովի «Ժամանակակիցներ» պոեմում՝ որպես ցիտում (ոչ ճշգրիտ) Վ. Կրեստովսկու «Երջանիկ մարդիկ» պատմվածքից: Վերջինիս բնագիրն այսպիսի տեսք ունի. «Бывали времена хуже-подлее не бывало»: Հետագայում Նեկրասովը, որոշ փոփոխակով («Бывали времена и хуже, но не было подлей») երկտողն օգտագործել որպես էպիգրամ՝ լիբերալ տնտեսագետ Ի. Կ. Բաբստի դեմ:

³⁴ Լույս է տեսել 1874-ին:

տպագրություններ, որոնց մեջ ճիշտ այդ ուղղագրությունն է տիրում: Ասում են, որ Տաթևի վանքի անվանի Քոթուկն էլ, ձեռագիր, նույն այդ ուղղագրությունն ունի: Աղայանը չէր թաքցնում այս հանգամանքը, ասում էր, որ ինքը չտեսնված նորություն չէ մտցրել, այլ միայն վերահաստատել է այն ուղղագրական կանոնը, որի ճշտությունը զգացվել է դեռ անցյալ դարերում:

Բայց այս ցո՞ւյց է տալիս, թե Աղայանը փոխ է առել հյունագրությունը հնությունից: Այդպիսի բան ասել չէ կարելի: Եվ հենց զարմանալին էլ այդ է: Աղայանը միայն այս վերջին երկու տարին իմացավ, որ կան հյունագիր տպագրություններ, կա ձեռագիր: Ուրեմն, միանգամայն անկախ կերպով, սեփական որոնումների միջոցով էր նա 22 տարի առաջ հյունի ուղղագրությունը մտցնում:

Ես ինքս երբեք չեմ եղել Աղայանի կողմնակիցը ուղղագրական այս հարցում: Կյանքիս մեջ ստիպված եմ եղել հարմարվել այն ուղղագրություններին, որոնք ընդունված են այս կամ այն օրգանի մեջ, ուր ես աշխատում էի. «Մշակի» մեջ ես յուրացրել էի մշակական ուղղագրությունը, որ Ռուսիայանի ուղղագրության հատակտորն է ներկայացնում. միաժամանակ, գրելով նոր «Մուրճում», ես յուրացրել էի ու-ական ուղղագրությունը. իսկ այժմ «Հորիզոնում» հյունական եմ³⁵: Իմ սեփական, անկախ ըմբռնողությունն այն է, որ պետք է գրել այնպես, ինչպես դրում է հայ ազգի մեծամասնությունը, որ լեզվական և ուղղագրական ռեֆորմները պիտի լինեն հայ լեզվի սեփականատիրոջ, այսինքն ամբողջ հայության համաձայնությամբ և գործադրվեն ամեն տեղ:

Բայց այս հանգամանքը չէ արգելում խոստովանելու, որ Ղազարոս Աղայանը հաղթանակել է, որ նա անօրինակ եռանդով է պաշտպանել իր ռեֆորմը: Եվ այս շատ հատկանշական է Աղայանի բնավորությունը հասկանալու համար: Մի գաղափարի պաշտպանության համար նա ընդունակ էր ֆանատիկոսության անգամ հասնել: Հյունը նրա մշտական հոգսն էր: Չլինի՞ թե վնասվի իր այդ սիրասուն զավակը: Չլինի՞ թե կողոպտվի: Հյունը նրա համար անձնական հարց էր, և նա իր մոտիկ բարեկամներին անգամ չէր ներում հյունականության դեմ խոսելը: Նա ինքը շատ գեղեցիկ կերպով պատկերացրել է իր հյունամոլությունը մի ֆելիետոնի մեջ, որ տպված է «Տարագում»:

Հափշտակվել, բորբոքվել, չափազանցությունների մեջ ընկնել, ծայրահեղությունների հասնել - այս բոլորը կարելի է տեսնել հյունի պատմության մեջ, բայց խնդիրն էլ հենց այն է, որ այդտեղ էլ ծառանում է Աղայանի ամբողջ բարոյական և հոգեկան հուժկու ինքնուրույն բնավորությունը: Մարդը ինքն իրան չէր դավաճանում: Մարդը միանգամայն անկեղծ էր իր վերաբերմամբ: Դիմակավորվել, շպարվել, քաղաքականություն բանեցնել չգիտեր և չէր էլ կարող իմանալ:

Ահա թե ով անհետացավ մեր երկնականարից: Մահկանացու են ամենքը: Բայց երանի նրան, ով կարողանում է կյանքի մեջ հետքեր թողնել, կատարած գործի գիտակցությունը պահել այս աշխարհի վրա:

³⁵ [18]

Լեռ «Ղազարոս Աղայան» (պատմական-գրական ուսումնասիրություն)

Աղայանը այդպիսի երջանիկներից է: Մենք տեսանք նրան, նրա կյանքը, նրա գործը: Եվ այժմ կարող ենք մեզ համար անկասկածելի համարել, որ նա խոշոր մարդ էր և խոշոր գործիչ:

Մեր ազգային կյանքի ասպարեզում ոչ ոք, ինչպես ասում են, երկնքից աստղեր չի իջեցրել: Մենք ունեցել ենք խոշոր անձնավորություններ, տաղանդով օժտված անձնավորություններ, որոնք հանդիսացել են իրանց ժամանակի թարգմանը և կռել են մեր ժամանակակից պատմությունը:

Դրանց շարքի մեջ իր ամբողջ հսկա հասակով կանգնած է և Ղազարոս Աղայանը: